ա. Հրեաների, այսպես ասած, տոհմագլուխ Չակոբի անվանափոխությամբ Աստվածաշունչը կազմող հեղինակները հրեա ժողովրդի համար նպաստավոր շատ հարցեր են լուծել, որ իբր այդ «Իսրայել» անձնանունը, տեղանունն ու ժողովրդի անվանումն աստվածային է, հետևաբար՝ երեք անվանումներն էլ անառարկելի սրբություն են: Սակայն «Հայոց եկեղեցու պատմություն» ուսուցանվող աշակերտները դժվար թե Աստվածաշնչում նկարագրված, օրինակ, Չակոբի կերպարով հիանան: Ըստ Աստվածաշնչի, նա խաբեությամբ ավագության իրավունքը խլել է իր հարազատ եղբորից, պղծել է իր հարազատ հորը, հետագայում նենգաբար խաբելով կուրացած հորը՝ տիրացել է նրա ունեցվածքին, ամուսնացել է իր հարազատ քեռու դստեր հետ և, գողանալով քեռու ունեցվածքը, փախել է: Չակոբին հորինող և նրան վարկաբեկող հեղինակներն աստվածաշնչյան մյուս պատումներում նրան արդեն փառաբանում և աստվածացնում են. «Յակոբ մինակ մնաց ու մարդ մը կգօտեմարտէր անոր հետ մինչեւ արշալոյս: Եւ երբ մարդը տեսաւ թէ անոր չյաղթեց, անոր զիստին ամուլաջիլին դպաւ եւ անոր հետ գօտեմարտած ատենը Յակոբին զստին ամուլաջիլը խախտեցաւ: Եւ մարդը ըսաւ. «Թո՛ղ տուր զիս, քանզի արշալոյսը երեւցաւ»: Յակոբը ըսաւ. «Չեմ թողուր քեզ, մինչեւ որ զիս չօրհնես»: Անիկա ըսաւ իրեն. «Ի՞նչ է անունդ»: Ան ալ ըսաւ. «Յակոբ է»: Անիկա ըսաւ. «Այ անգամ մըն ալ քու անունդ Յակոբ չըսուի, հապա Իսրայել. վասն զի Աստուծոյ հետ ու մարդոց հետ մարտնչեցար եւ յաղթեցիր» (Ծննդոց 32:24-28):

Ինչպես տեսնում ենք, «Ծննդոց»-ի հեղինակներն այստեղ փառաբանելով հրեա Չակոբին, վարկաբեկել-նստեմացրել են իրենց Եհովա աստծուն (ֆիզիկապես պարտվել է մահկանացուից և վախենում է լույսից-Արևից), մի բան, որը հարվածում է նաև հրեականության նպատակներին, այն առումով, որ սիոնիստական ծրա-

գրի արմատավորման ու իրականացման համար Եհովա աստծո ամենակարող ու սարսափազդու լինելը պետք է գերակայի բոլոր խնդիրներում, և մարդիկ Եհովա աստծո անունը լսելիս կամ հիշելիս պետք է սարսափեն ու տագնապ ապրեն: Եթե հավատացյալի մեջ դեռ գործում է **բանականությունը**, և Եհովա աստծո նկատմամբ վախն ու սարսափը նրան մտավոր անդամալուծության չեն բերում, ուրեմն այդպիսի հավատացյալը սիոնիզմին պետք չէ: Այս հարցով հետաքրքրված աշակերտը թերևս փորձի հասկանալ, թե հրեա հեղինակներն ինչ նպատակով են նսեմացրել իրենց իսկ աստծուն՝ Եհովային: Իմիջիայլոց, Աստվածաշունչը կազմողները միայն այս դրվագում չէ, որ հրեային վեր են դասում Եհովա աստծուց: Եբրայեցիները (հրեաները) Եհովային գերազանցել են նաև իմաստությամբ, հեռատեսությամբ, խորամանկությամբ, շրջահայացությամբ, բարեպաշտությամբ: Այսպիսի ձևակերպումների նպատակը, հավանաբար, այն է, որպեսզի հավատացյալներին համոզեն, որ հրեաները տիեզերաստեղծից էլ զորեղ են: Սիոնիստ հեղինակները, ինչպես տեսնում ենք, չեն սխալվել. այժմ միլիոնավոր քրիստոնյաներ հավատում են կրոնական դոգմա դարձրած այդ զավեշտին և կերտում իրենց քայքայումն ու կործանումը, իսկ հրեա հավատացյալները, բնականաբար, իրենց զգում են վեհ ու տիրակալ:

Պատմության մեջ, թերևս, աննախադեպ մի երևույթ. երբ առանձին անհատներ համարձակվում են իրենց երկրին ու ժողովրդին տալ մի անվանում (Իսրայել), որը, ըստ Աստվածաշնչի, նշանակում է՝ տիեզերքը ստեղծող աստծուն հաղթող:

Հրեա քրմերի հեռատեսությունը, համարձակությունը և օտար ժողովուրդների կարծիքի անտեսումն ու արհամարհանքը, թերևս, պայմանավորված է նրանով, որ լինելով քոչվոր ու վաշխառու ժողովրդի ժառանգներ, բնականաբար, հնարավորինս նրբորեն զգացել-հասկացել են մարդկանց հոգեբանությունը և մոլորեցնող գաղափարները նրանց մտածելակերպի մեջ դաջել-ամրագրելու գաղտնիքները: Նրանք իրենց ծրագրային դրույթները ներկայացրել են Եհովա աստծո անունից և մատուցել ու մատուցում են ուրիշ ժողովուրդներին՝ փաստորեն նրանց դարձնելով իրենց կամակատարներ: Այս առումով անասելի հաջողությունների են հասել,

օրինակ, քրիստոնեական կրոն ստեղծելու և օտար ժողովուրդների մեջ տարածելու գործում:

Պատմության մեջ արտակարգ ու զարմանալի մի երևույթ. փոքրաթիվ մի ժողովուրդ, չունենալով տնտեսական, ռազմական հզորություն և ցրված լինելով աշխարհով մեկ, սիոնիստական ծրագրի շնորհիվ, կարողացել է ստեղծել իրեն ենթակա, այսպես ասած, «կրոնագաղափարական կայսրություն» և դրա մեջ ներառված ազգերի ֆինանսական, տնտեսական և մտավոր ներուժը ծառայեցրել է աշխարհին տիրանալու իր ծրագրին: Եվ այս ամենին հասել են միայն մարդկանց վարպետորեն հիմարացնելու միջոցով: Դարեր շարունակ թարմացվող այդ տողանում այժմ էլ այսօրվա մանուկներն են...

Բնական է, որ դասավանդվող «Չայոց եկեղեցու պատմություն» առարկան բոլոր աշակերտները չէ, որ կընդունեն այնպես, ինչպես ցանկալի է եկեղեցու համար, սակայն նրանց նկատմամբ, մեծ հավանականությամբ, կկիրառվեն հոգեբանական ճնշում, միջավայրից մեկուսացում և այլ միջոցներ: Օրինակ, Երևանի դպրոցներից մեկում (որի անվանումը ոչ թե չգիտեմ, այլ, ելնելով երեխաների անվտանգության ապահովումից, չեմ ցանկանում նշել) առաջին դասարանցիներին պարտադրել են ուսուցչի և ծնողների հետ գնալ եկեղեցի, որպեսզի «ա» տառը սովորելուց առաջ տերտերը օրինի և՛ «ա» տառը, և՛ յուրաքանչյուր աշակերտին: Այդ արարողությունը կոչվում է «ա տառի մենաշնորհ»: Այն ծնողները, որոնք ընդդիմացել են, դպրոցի տնօրինությունը, ուսուցիչը և որոշ ծնողներ նրանց որակել են որպես Եհովայի վկաներ, և ուսուցիչը խստորեն պահանջել է, որ բոլոր ծնողները պարտավոր են ենթարկվել այդ կարգին:

Պարզվում է, որ Իսրայել անունը սեփական ժողովրդինը չէ, հրեաները այն վերցրել են ուրիշ ժողովրդից. «Ըստ փյունիկցիների հավատալիքի, իրենց երկիրը կառավարող Քրոնոս կամ Իսրայել (ուժեղ աստված) աստվածը, մի անգամ, սարսափելի ժանտախտի ու սովի ժամանակ, իր միակ որդի Եգուդին հենց ինքն արքայական հագուստ հագրեց և զոհաբերեց իրեն» (Крoвь в верованиях и суевериях человечества, Санкт-Петербург, 1995, с. 235):

Ինչ վերաբերում է այս բաժնում բերված քաղվածքներում և, ընդհանրապես, Աստվածաշնչում եղած հակասություններին (դրանց քննարկումը ներկա խնդրից դուրս է), ապա այստեղ գործել ու գործում է այդ հակասությունները ցուցանողին դաժանորեն պատժելը: Գուցե որևէ մեկը համարձակվի հարցնել, թե այդ ինչպե՞ս է, որ դարեր շարունակ հուդայական ու քրիստոնեական աստվածաբանները ոչ միայն չեն անարգում, այլև սրբացրել ու կիսաստված են դարձրել հրեա այն հեղինակներին, ովքեր համարձակվել են հրեա ժողովրդին կոչել (անվանել) մի անունով, որը հենց Հին կտակարանում մեկնաբանվում է «աստծո դեմ մարտնչող» և նույնիսկ՝ «աստծուն հաղթող»:

բ. Ըստ ուսումնասիրողների, քաղվածքում ներկայացված հրեական առաջնորդներն ու թագավորներն առասպելական են, իսկ հրեաների Եգիպտոսից դուրս գալու, անապատներում թափառելու և Մովսեսի պատմական դեմք լինելու պատմությունը դեռևս որևէ վավերագրով չի հաստատվել:

գ. Ինչ վերաբերում է հաջորդաբար՝ Եհովային, Մովսեսին, Հիսուսին վերագրվող և ամենուրեք քարոզվող *տասը պատվիրաններին*, ապա վավերագրերը հաստատում են, որ դրանք վերցված են Հին կտակարանում ներկայացված ժամանակներից ավելի քան 1000 տարի առաջ ապրած Բաբելոնի հռչակավոր թագավոր ու մեծ օրենսդիր Համմուրաբիի (1792-1750 թթ. մ.թ.ա.) օրենսգրքից: Իսկ այդ օրենսգրքի համար էլ հիմք է ծառայել շումերական հնագույն (XXIV-XIX դար մ.թ.ա.) իրավունքը (*Хрестоматия по истории Древнего Востока*, т. 1, Москва, 1980, с. 151-178): Որոշ հեղինակներ գտնում են, որ Համմուրաբիի օրենսգրքում մեծ տեղ ունեն Հայկական լեռնաշխարհի օրենքները: Սրան հավելեմ, որ **շումերական աղբյուրներում Հայկական լեռնաշխարհն է համարվում «աստվածային սուրբ օրենքների երկիր», «անմահության երկիր» և «առաջին մարդու արարման երկիր»** (Ա. Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհը, Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2006 թ., էջ 7-52): Նշեմ, որ հենց նույն Աստվածաշնչում ամենակո-

պիտ կերպով ոտնահարվում են աստվածային կոչված այդ պատվիրանները: Աստվածաշնչում առկա են բազում դրվագներ, որոնցում նույն Եհովան հրեաներին հորդորում ու պարտադրում է սպանել-ոչնչացնել նաև անմեղ ժողովուրդներին, չխնայել նույնիսկ հղի կանանց ու երեխաներին, և ինքն էլ հաճախ մասնակցում է այդ սպանություններին, աջակցում գողերին և այլն: Տասը պատվիրաններից մեկը սուտ չխոսելն է, սակայն արդյո՞ք ծշմարտություն են Աստվածաշնչում գրված հավերժորեն գոյություն ունեցող Եհովան, նրա ձեռքով ոչնչից տիեզերք ստեղծելը, լույսը խավարից զատելը, հողից տղամարդ, իսկ նրա կողոսկրից կին ստեղծելը... անսերմ բեղմնավորումը, հրեայի երկինք բարձրանալը...

դ. Քանանը, այսինքն՝ Պաղեստինը, *հրեաների նախնիների երկիրը* չի եղել: Այդ երկրի հարստությունը գրավել է հրեաների ուշադրությունը և, հավանաբար, միայն այդ հանգամանքով է պայմանավորված, որ Յին կտակարանի սիոնիստ հեղինակները գրել են, թե իբր իրենց աստված Եհովան այդ երկիրը կտակել է հրեաներին: Այստեղ լոկ անհագ ախորժակն է խոսում: Կարծում են, պաղեստինցիները պետք է ասեն, որ իրենք հրեաների աստծուն չեն ճանաչում, և իրենց՝ պաղեստինցիների աստվածն էլ պաղեստինցիներին ասում է, թե՝ **տեր կանգնեք ձեր երկրին և գիշատիչներին բաժին մի՛ դարձրեք:**

Ի՞նչ իրավունքով հայ մանուկներին հենց իրենց երկրում դասավանդում են կյանքից շեղող գաղափարներ, ինչպես նաև, նախ ուսուցանում են հրեա ժողովրդի պատմությունը, որից մեկ տարի անց միայն՝ հայ ժողովրդի պատմությունը: Նաև պետք է նկատի ունենալ, որ հրեա ժողովրդի պատմությունը միահյուսված է դիցառասպելներին և դարձել է պաշտամունքի առարկա՝ հուդայական և քրիստոնեական կրոնների (ընդհանուր հուդայականության) դոգմա, իսկ ազգայնամուլական հուդայական կրոնն անտեսում է ուրիշ ժողովուրդների, ինչպես և հայ ժողովրդի գոյությունը:

«ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ».
«ՀԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ԱՎԵՏՈՒՄԸ»

Դասագրքի 35-36 էջերում կարդում ենք. «Մի օր Մարիամը տաճարի համար վարագույր գործելու թել էր մանում: Հանկարծ հայտնվեց Աստծու ուղարկած Գաբրիել հրեշտակը և հայտնեց, որ Մարիամը պետք է որդի ունենա և նրա անունը պետք է Հիսուս դնի: Նա կլինի **սուրբ ու ամենազոր և ողջ մարդկությանը կփրկի մեղքերից:** Այսինքն՝ նա էր լինելու այն Փրկիչը, որի մասին **Հին կտակարանում կանխատեսել էին մարգարեները:** Սկզբում Մարիամը վախեցավ, հետո զարմացավ հրեշտակի ասածներից, որովհետև նա նշանված էր և դեռ ամուսնացած չէր: Սակայն հրեշտակը բացատրեց, որ Հիսուսը սովորական երեխա չի լինի, նա կծնվի **Սուրբ Հոգուց և Աստծու որդի** կկոչվի, իսկ Աստծու համար անկարելի ոչինչ չկա: Գաբրիել հրեշտակը երևաց նաև Մարիամի նշանածին՝ Հովսեփին: Հրեշտակը նրան պատվիրեց կնության առնել Մարիամին: Բարի և արդար Հովսեփը կատարեց այնպես, ինչպես հրեշտակն էր պատվիրել»:

Դասագրքի հեղինակները մի հատուկ երկյուղածությամբ ու ակնածանքով են շարադրում հրեա ժողովրդի պատմությունը և, ընդհանրապես, Իսրայելի մշակույթին վերաբերող նյութերը, երբեմն էլ նույնիսկ աստվածաշնչյան հորինվածքներն ի նպաստ Իսրայելի ձևափոխելով ու գունազարդելով: Օրինակ, ավետարաններում չգտա դասագրքի հեղինակների այն հավաստումը, թե իբր, երբ հրեշտակը մոտեցավ Մարիամին, նա «տաճարի համար վարագույր գործելու թել էր մանում»: Դասագիրքը կազմողները դրանով, հավանաբար, ցանկանում են աշակերտներին հավատացնել ու համոզել, որ եթե որևէ օգտակար բան է արվում, ուրեմն այն պետք է եկեղեցու համար արվի, և որ Մարիամը կանխավ իբր մտադրված չի եղել որևէ մեկին հանդիպել, մանավանդ որ արդեն նշանված է եղել: Նաև պարզ չէ, թե Մարիամն ինչո՞ւ է տարակուսել, երբ հրեշտակը նրան ասել է, որ նա *պետք է որդի ունենա, չէ՞ որ որպես նշանված մայրացու ինքը պետք է որ երեխա ծնելու հեռանկարից չզարմանար:* Տրամաբանորեն, հրեշտակի ասածից

Մարիամն առաջին հերթին պետք է հասկանար, որ իր նշանածից է զավակ ունենալու: Հավանաբար, միայն աստվածաբանները կօգնեն հասկանալու, թե ինչո՞ւ Մարիամին ավետիս բերող հրեշտակը նրան ներկայացել է երես առ երես, սակայն Մարիամի նշանածին՝ Հովսեփին, Հիսուսի ծնվելու «ավետիսը» երազում է հաղորդել (այս դրվագով նաև քարոզվում է, որ երազները, հարկավ՝ սիոնիզմի գաղափարախոսությանը համահունչ երազները, պետք է ընդունվեն որպես իրականություն): Գուցե այն պատճառով, որ հրեշտակը վստահ չի եղել, թե հաղորդվելիք «ավետիսին» Հովսեփը հեշտությամբ կհավատա, ուստի նպատակահարմար է համարել խուսափել անմիջական հանդիպումից: Կարծես այդքանը քիչ էր՝ *Հրեշտակը նրան (Հովսեփին) պատվիրեց կնության առնել Մարիամին: Բարի և արդար Հովսեփը կատարեց այնպես, ինչպես հրեշտակն էր պատվիրել:* Ահա՛ սիրո և ընտանիք կազմելու, բարության, արդարության վերաբերյալ եկեղեցու և ՀՀ կրթության ու գիտության նախարարության վերաբերմունքը: Փաստորեն, ցանկացած խնդրում մանուկներին իրականությունից ու կյանքից շեղողն է մատուցվում: Իմիջիայլոց, դասագրքում զետեղված նկարում Մարիամին *ավետիս* բերող հրեշտակը մի զեղեցկատես, հմայիչ օրիորդ է: Թող ինձ ներեն քրիստոնեական աստվածաբանները, բայց նկարն այդպիսի տպավորություն է թողնում: Ինչպե՞ս հասկանալ, Գաբրիել հրեշտակն իզակա՞ն: Դա քրիստոնյաներիս համար, կարծում եմ, նորույթ է: Գուցե դասագրքի հեղինակները Գաբրիել հրեշտակին այդպես ներկայացնելով փորձել են նոր կասկածանքի ու ասեկոսների տեղիք չտա՞լ...

Դասագրքի հեղինակներն այդ առասպելը ներկայացնելով չեն գրում Գաբրիել հրեշտակի ասածներից թերևս ամենագլխավորի մասին, այն է՝ ծնվելիք **Հիսուսը պետք է դառնա հրեաների թագավոր**, այն էլ հավիտյան (այսինքն՝ Քրիստոսը հավիտյանս լինելու է Իսրայելի գլխավոր սիոնիստը): «**Վեցերորդ ամսուն մէջ** Գաբրիել հրեշտակը Աստուծմէ ղրկուեցաւ Գալիլիայի մէկ քաղաքը՝ որուն անունը Նազարեթ էր, Կոյսի մը՝ մարդու մը նշանուած, որուն անունը Յովսէփ էր, Դաւիթին տունէն: Այն կոյսին անունը Մարիամ էր: Հրեշտակը անոր երթալով՝ ըսաւ. «Ողջոյն քեզ, ո՛վ շնորհընկալ կոյս, Տէրը քեզի հետ է: Դուն կիներուն մէջ օրհնեալ

ես»: ... Աստուծմէ շնորհք գտար: Ահա պիտի յղանաս ու որդի մը պիտի ծնանիս եւ **անոր անունը Յիսուս պիտի դնես: Անիկա մեծ պիտի ըլլայ ու Բարձրեալին Որդի պիտի կոչուի: Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօրը Դաւիթին աթոռը ու Յակոբին տանը վրայ յաւիտեան պիտի թագաւորէ**»: ... Մարիամ ըսաւ հրեշտակին. «Ի՞նչպէս պիտի ըլլայ այդ բանը, որովհետեւ **ես այր չեմ գիտեր**»: Զրեշտակը պատասխան տալով՝ ըսաւ անոր. «Սուրբ Զոգին պիտի գայ քեզի ու Բարձրեալին զօրութիւնը քու վրադ հովանի պիտի ըլլայ. ուստի այն քեզմէ ծնանելու սուրբը Աստծոյ Որդի պիտի կոչուի ...»: Մարիամ ըսաւ. «Ահա ես Տէրոջը աղախինն եմ, **քու ըսածիդ պէս թող ըլլայ ինձի**» (Դուկաս 1:26-38):

Այս քաղվածքից նաև հասկանալի է դառնում, որ Զիսուսի երակներում պետք է որ հոսեր եհովայական, հրեական և սուրբ հոգու արյունների խառնուրդը («Սուրբ Զոգին պիտի գայ քեզ ու Բարձրեալին զօրութիւնը քու վրադ հովանի պիտի ըլլայ», նաև հիշենք, որ Զիսուսի նախահայրը՝ Իսահակը, Եհովայի որդին է): Ըստ Աստվածաշնչի, Զիսուս Քրիստոսը հրեա կույսի և սուրբ հոգու որդին է (անսերմ բեղմնավորմամբ): Նաև ներկայացվում է, որ Զիսուսը, նախ, աստված է եղել և տիեզերքն արարելուց հետո միայն կույսի արգանդն է մտել և ... այնտեղ մնալով՝ ծնվել: Բազում աղբյուրներ Զիսուսի հայր են համարում հռոմեական զինվոր Պանթերիոսին: Կրոնագետ Ռոբերտսոնը գրում է. «Արամեական տարբերակներից մեկը, որ կոչվում էր «Ավետարան ըստ հրեաների», մերժվեց որպես հերետիկոսական: Նրանից միայն հատվածներ են պահպանվել, բայց մեզ հայտնի է, որ այնտեղ **բացակայում էր անապակ բեղմնավորման մասին պատմությունը**»... «Քրիստոնեությունը,- ասում է Ցելսուսը,- հրեական ծագում ունի, նրանց ասելով, նրա հիմնադիրը եղել է **ստորին ծագումով մի խաբեբա**. Եգիպտոսում **նա կախարհություն է սովորել և սկսել է հանդես գալ որպես հրաշագործ և աստծո որդի**» (Ա. Ռոբերտսոն, Քրիստոնեության ծագումը, Երևան, 1965 թ., էջ 349):

Ավետարանների հեղինակներից մեկը Զիսուսին նկարագրել է որպես անըմբռնելի մի երևույթ. «Եւ Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայէն, որ մեռելներէն յարութիւն առնողներէն անդրանիկն է ու

երկրի թագաւորներուն իշխանը: Եւ եօթը աշտարակներուն միջեւ՝ մէկը Որդի Սարդոյ նման՝ պճղնատր պատմութեան մը հազած ու կուրծքին վրայ ոսկի գօտի մը կապած: Իր գլուխը եւ մագերը բուրդի ու ձիւնի պէս ճերմակ էին եւ իր աչքերը՝ կրակի բոցի պէս: Իր ոտքերը՝ ոսկեպղինձի նման, որպէս թէ հնոցի մէջ կրակ դարձած ու իր ձայնը՝ շատ ջուրերու ձայնի պէս եւ իր **աջ ձեռքին մէջ եօթը աստղ ունէր** ու իր **բերնէն սրած երկբերան սուր մը կ'ելլէր** եւ իր **երեսը արեւու պէս էր**» (Յայտն. Յովի. 1:5-16):

Դյուրահավատների համար հրաշալի խայծ: Սա միակ դեպքը չէ, որ սիոնիստ հեղինակը հրեային գերբնական ու աներևակայելի հզորության տեր է ներկայացնում: Հիշենք, օրինակ, Հին կտակարանի գրած այն դրվագը, թե ինչպես հրեա Յակոբը հաղթել է տիեզերքը ստեղծող ու կառավարող՝ հրեաների ազգային աստված Եհովային: Միայն պետք է փորձել պատկերացնել, թե հրեական ծեսով թլպատված հրեաների հավերժ թագավոր համարվող Հիսուս Քրիստոսն ինչպես է կարողացել յոթ աստղ (որոնցից յուրաքանչյուրը բազմաթիվ անգամ գերազանցում է Երկրագնդի ծավալը) տեղավորել իր ձեռքի մեջ և նկարագրածը հավաստի ներկայացնելու ինչպիսի «փաստագրություն»՝ հեղինակը գրում է, որ աստղերն իբր եղել են Հիսուս Քրիստոսի «աջ ձեռքին մէջ»: (Անհրաժեշտ են համարում նշել, որ «Հայտնության» մեջ նկարագրված առասպելի հեղինակը վառ երևակայության և հզոր գրչի տեր անհատականություն է եղել, ափսոս, որ այդ գործը կրոնական դոգմա դառնալով կորցրել է իր առասպելական հմայքը և դարձել մարդկանց միտքը դեֆորմացնող մի գործիք):

Եթե մեկ այլ ժողովրդի ներկայացուցիչ առասպելական այսպիսի մի պատկեր հորիներ և փորձեր ներկայացնել որպէս իրողություն, ապա համընդհանուրի ծաղրին ու արհամարհանքին կարժանանար: Սակայն այլ է սիոնիստ հեղինակների պարագայում: Նրանք տասնյակ դարեր է, ինչ ամենամանրակայելիս դրել են քրիստոնեության հիմքում և մնացել են անխոցելի, քանի որ հուդայաքրիստոնեական եկեղեցին կարողացել է մարդկանցից խլել նրանց համարձակությունը, բանականորեն դատելու կարողությունը... Իսկ հավատացյալներին ցանկացած գաղափար պարտադրելու հարցում արդեն որևէ դժվարություն չկա, քանզի նրանք միշտ

էլ ծարավ են ամենածայրահեղ անհեթեթությանը հավատալու և այն ջերմեռանդորեն պաշտելու և գուրգուրելու: Կարելի է ասել, որ Աստվածաշնչի հեղինակները նրբագույնս զգացել ու հասկացել են մարդկային հոգեբանությունը և շատ լավ տեսել ու զգացել են, թե ինչի պահանջարկ կա և դրան համապատասխան տվել ու տալիս են արտադրանք, հարկավ՝ իրենց շահերին համապատասխանող, սակայն օտար ժողովուրդներին դեպի քայքայում ու կործանում տանող արտադրանք:

Ավետարանական մեկ այլ պատումում կասկածելի է դառնում Քրիստոսին վերագրվող բարությունն ու արդարասիրությունը. «Մինչ ինք ժողովուրդին կը խօսէր, իր մայրը ու եղբայրները դուրսը կայներ էին եւ կ'ուզէին իրեն հետ խօսիլ: Մէկը իրեն ըսաւ. «Ահա քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ են եւ կ'ուզեն քեզի հետ խօսիլ»: Ան ալ իրեն ըսողին պատասխան տուաւ ու ըսաւ. «Ո՞վ է իմ մայրս և որո՞նք են իմ եղբայրներս»: Եւ իր ձեռքը դէպի իր աշակերտները երկնցնելով՝ ըսաւ. «Ահա իմ մայրս եւ իմ եղբայրներս. վասն զի ով որ իմ երկնատուր Զօրս կամքը կը կատարէ, անիկա է իմ եղբայրս եւ քոյրս ու մայրս» (Մատթ. 12:46-50):

Այստեղից նախ կարելի է եզրահանգել, որ նրա հարազատները ո՛չ իրեն՝ Չիսուսին են հավատացել և ո՛չ էլ նրա հայր Եհովային: Այսինքն՝ «աստվածամայրը» չի ընդունել Չիսուսի աստվածային բնույթը, ինչով ոտնատակ է արել Եհովա աստծո հրեշտակի հետ իր հանդիպման և սուրբ հոգուց, այսպես ասած, անսերմ բեղմնավորման հեքիաթը: Չէ՞ որ Քրիստոսի կիսաստված, իսկ գրիգորյան-լուսավորչականներին համար լիարժեք աստված լինելու առասպելի հիմքը հենց կույս Մարիամն է, բայց ինչպես տեսնում ենք, ավետարանի այս պատումում Մարիամը, փաստորեն, ժխտում է Քրիստոսին վերագրվող աստվածային բնույթը: Սրա հետ մեկտեղ, քարոզվող այն դոգմաները, որ Քրիստոսը բոլոր մարդկանց սիրել է հավասարապես, եղել է բարի, մարդկանց նկատմամբ ատելությունից ու քենից հեռու, քարոզել է միաբանություն, վրեժի մերժում, անկողմնակալություն, սեր՝ անգամ թշնամու նկատմամբ և հանուն մարդկության փրկության զոհաբերել է իրեն, այս քաղվածքի մեջ դրանք արժեզրկվում են: Իր հարազատ մորն ու եղբայրներին

չհարգողն ու չսիրողը, նրանցից հրաժարվողը, եթե անգամ նրանք չեն հավատացել իրեն և իր հայր Եհովային, ինչպե՞ս կկարողանար հանուր մարդկության հոգսերով տարվել: Ելնելով քաղվածքի բովանդակությունից, կարելի է նաև եզրակացնել, որ Քրիստոսն իր հարազատ մորից, փաստորեն, վրեժ է առել, հավանաբար իր՝ Քրիստոսի ոչ աստվածային բնույթը ցուցանելու համար: Եվ եթե Մարիամի՝ Քրիստոսի աստվածային բնույթին չհավատալն ասվեց տրամաբանորեն, ապա Քրիստոսի եղբայրների իրեն՝ Քրիստոսին չհավատալը վկայում է ավետարանիչը. «Յիսուս Գալիլիայի մէջ կը պտըտէր, քանզի չէր ուզեր Յրէաստանի մէջ պտըտիլ, վասն զի Յրեաները զինք սպաննել կ'ուզէին: Յրեաներուն տաղաւարահարաց տօնը մօտ էր: Ուստի իր եղբայրները ըսին իրեն. «Ելի՛ր ասկէ ու Յրէաստան գնա, որպէս զի քու աշակերտներդ ալ տեսնեն քու գործերդ որոնք կ'ընես. վասն զի մէկը չկայ որ ծածկաբար բան մը ընէ եւ ինքը յայտնի ըլլալ ուզէ. եթէ դուն այդ բաները կ'ընես, ինքզինքդ աշխարհի յայտնէ»: **Քանզի իր եղբայրներն ալ չէին հաւատա իրեն:** Յիսուս ըսաւ անոնց. «Իմ ժամանակս դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է: Աշխարհ ձեզ չի կրնար ատել, բայց զիս կ'ատէ, վասն զի ես կը վկայեմ թէ իր գործերը չար են: Դուք ելէ՛ք այս տօնին. ես դեռ չեմ ելլեր այս տօնին. վասն զի ժամանակս դեռ չէ լեցուցած»: Այս ըսելով անոնց՝ ինք Գալիլիա մնաց: Բայց երբ իր եղբայրները գացին տօնին, յետքը ինք ալ գնաց տօնին, ո՛չ թե յայտնի՝ հապա **գաղտուկ** կերպով մը» (Յովի. 7:1-10): Այստեղ պարզ ասվում է, որ Քրիստոսն էլ իր հարազատ եղբայրներին չի վստահել և, անգամ, նրանց հետ խոսելիս ստել է: Նաև՝ իր գործերն իր աշակերտներից գաղտնի է պահել: Հիշենք նաև, որ ավետարաններից մեկում Քրիստոսը առակով ակնարկում է. «Բայց իմ այն թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագաւոր ըլլամ, հոս բերէք ու իմ առջեւ սպաննեցէք» (Ղուկաս 19:27)...

Քրիստոսի կենցաղի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Ղուկաս ավետարանիչը: Նա գրում է. «Անկէ յետոյ՝ ինք քաղաքէ քաղաք ու գիւղէ գիւղ պտըտելով՝ կը քարոզէր եւ Աստծոյ թագաւորութիւնը կ'աւետարանէր ու տասներկուքը իրեն հետ էին, նաեւ քանի մը կիներ՝ որոնք չար ոգիներէ ու հիւանդութիւններէ

բժշկուներ էին. Մարիամը, որ Մագդաղենացի կը կոչուէր, ուրկէ եօթը դէ ելեր էր եւ Յովհաննան՝ Յերովդէսին տանը վերակացուին՝ Քուզայի կինը ու Ծուշան եւ շատ ուրիշներ, որոնք իրենց ստացուածքովը անոր ծառայութիւն կ'ընէին» (Ղուկաս 8:1-3): Այստեղ հիշենք կիսաստված դարձած, երկինք բարձրացած Աբրահամին ու Սառային...

Նախ՝ ստացվում է, որ Քրիստոսը, ով, ըստ քրիստոնեական դավանանքի, մինչ կույսի արգանդ մտնելն ու ծնվելը աստված է եղել, ստեղծել է տիեզերքը, բուսական ու կենդանական աշխարհը... սակայն չի կարողացել ինքն իրեն պահել, և ուրիշների կանայք են կերակրել նրան: Եվ ապա, հասկացվում է, որ այդ կանանց Քրիստոսը հենց այնպես չի «բուժել»:

Ավետարանների որոշ պատումներում «*ողջ մարդկությանը մեղքերից*» փրկող Յիսուսը ներկայացվում է որպես միայն իր ժողովրդին՝ հրեաներին ծառայող, ծայր աստիճան ազգայնամոլ ու շովինիստ: Այդ առումով բերեմ հետևյալ քաղվածքը. «Յիսուս անկէ ելլելով՝ Տիրոսի ու Սիդոնի կողմերը գնաց: Քանանացի կին մը այն սահմաններէն ելած՝ կ'աղաղակէր անոր ու կ'ըսէր. **«Ողորմէ ինձի, Տէր, Դաւիթի որդի, աղջիկս դեւէն սաստիկ կը չարչարուի»:** Ինքը բնաւ պատասխան չտուաւ անոր: Իր աշակերտները մօտենալով՝ կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին. «Արձակէ ատիկա, վասն զի մեր ետեւէն կ'աղաղակէ»: Ինքն ալ պատասխան տուաւ ու ըսաւ. **«Ես ուրիշի մը չղրկուեցայ, բայց միայն Իսրայէլի տանը կորուսուած ոչխարներուն»:** Բայց կինը եկաւ երկրպագութիւն ըրաւ անոր ու ըսաւ. «Տէր, օգնէ ինձի»: Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ. **«Աղէկ չէ տողոց հացը առնել ու շուններուն ձգել»:** Կինն ալ ըսաւ. **«Այո՛, Տէր, վասն զի շուները իրենց տիրոջ սեղանէն ինկած փշրանքներով կը կերակրուին»:** Այն ատեն Յիսուս անոր ըսաւ. «Ով կին, քու հաւատքդ մեծ է, քու ուզածիդ պէս ըլլայ քեզի»: Նոյն ժամուն անոր աղջիկը բժշկուեցաւ» (Մատթ. 15:21-28):

Այս դրվագով ավետարանիչը նախ, հերթական անգամ ցուցանում է Յիսուսի հրեա լինելը (Տէր, Դաւիթի որդի), և ապա, միայն Իսրայելցիներին (հրեաներին) ծառայելու նրա կոչումն ու պատրաստակամությունը, ինչպես նաև Յիսուսի՝ որպես թալմուդական հրեայի նենգ ու դաժան վերաբերմունքը ոչ հրեաների՝ օտար ժո-

ղովուրդների, գլխավորապես՝ պաղեստինցիների նկատմամբ (հայտնի է, որ հրեաները մշտապես ձգտել են զավթել այդ երկիրը): Նշեմ, որ ըստ Թալմուդի, գոյը՝ ոչ հրեան, շնից ցածր կարգավիճակ ունի: Օրինակ, Թալմուդի օրենքներից մեկում հրեա բժշկին պարտադրվում է գոյերին չբուժել, ավելին՝ նրանց վրա փորձարկել դեղամիջոցի մահաբեր դոզան, մինչդեռ առերևույթ, եթե ներկա են գոյեր, ապա հորդորվում է գոյին անվճար բուժել, որպեսզի նրանք ասեն, թե հրեաները բարի ու ազնիվ մարդիկ են: Պաղեստինցի կնոջ նկատմամբ Քրիստոսի վերաբերմունքը, որպես էթնիկական անհանդուրժողականություն, համապատասխանում է Թալմուդի պահանջներին ու կանոններին: Թեպետ Յիսուսն իր աշակերտների միջամտությամբ, ի վերջո, զիջել է, սակայն շատ թանկ գնով. երբ հիվանդի մայրը նախ երկրպագել-խոնարհվել է Յիսուսին, ապա ճարահատյալ նվաստացել է և իրեն համարել նրա, նաև՝ նրա ժողովրդի շունը: Ահա և համայն մարդկության «բարի, արդարամիտ փրկիչը»:

Յիսուս Քրիստոսը նաև իր աշակերտներին էլ է պատվիրել, որ նրանք ծառայեն միայն իսրայելցիներին (հրեաներին). «Յիսուս այս տասներկուքը գրկեց եւ անոնց պատուիրեց՝ ըսելով. «Յեթանոսներու ձամբայ մի՛ երթաք ու Սամարացիներու քաղաք մի՛ մտնէք, հապա աւելի Իսրայելի տանը կորուսուած ոչխարներուն գացէք: Ու երբ կ'երթաք, քարոզեցէք ու ըսէք. «Երկնքի թագաւորութիւնը մօտեցած է»: Յիւանդները բժշկեցէք, բորոտները մաքրեցէք, դեւերը հանեցէք. ձրի առեր էք, ձրի տուէք... Երբ քաղաք մը կամ գիւղ մը մտնէք, հարցուցէք թէ ո՞վ է անոր մէջ արժանաւորը ու անոր քով կեցէք» (Մատթ. 10:5-11):

Յայ նշանավոր պատմաբան և եկեղեցու սպասավոր Ղազար Փարպեցու (442- 6-րդ դարի սկիզբ) ստորև բերվող քաղվածքից հասկացվում է, որ Յիսուսին սկզբնապես ընդունել են որպես մահկանացու, իսկ հետագայում՝ աստված. «Յրեա ժողովուրդն ու քահանաներն ամենքի արարիչ ու տեր Յիսուս Քրիստոսին նախ ծաղրելով խայտառակեցին, երբեմն նրան կոչելով կախարդ և ասելով, թե «Դա դևերի իշխան Բեհեզբեբուդի ձեռքով է դևեր հանում»: Նաև **գինեմուլ ու զեխասեր էին անվանում**՝ նրա աշակերտներ

րին հարցնելով, թե **«Ինչո՞ւ ձեր վարդապետը մեղավորների ու մաքսավորների հետ է ուտում-խմում»**: Այլև **չպահեցողության ու որկրամոլության** մեջ էին մեղադրում, ասելով. «Ինչո՞ւ Յովհաննեսի աշակերտներն ու փարիսեցիները պաս են պահում, իսկ աշակերտներդ խառն ուտում են»: Նրան **դիվահար էլ կոչեցին»** (Ղազար Փարպեցի, Յայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982 թ., էջ 483-485):

Քրիստոսին աստվածացնող և որպես թերություններով լեցուն մահկանացու ներկայացնող վերը բերված քաղվածքներից գատ, նշեն, որ նրան վերագրվող շնորհներից են, օրինակ, որ նա ջուրը գինի է դարձրել (Յովհ. 4:46), 5 բոքոնով և 2 ձկնով 5000 տղամարդ ու նրանց հետ եղած կանանց ու երեխաների է կշտացրել և 12 լիք կողով հաց ու ձուկ էլ ավելացրել է (Մատթ. 14:13-21), անեծքով թզենի է չորացրել (Մատթ. 21:18-22), ծովի փոթորիկն է խաղաղեցրել (Մատթ. 8:23-27), ծովի վրայով է քայլել (Մատթ. 14:22-36) և այլն:

Չորրորդ դասարանցիները եթե սկզբնաղբյուրներում գտնեն իրենց ուսուցանվող գաղափարները, ապա նրանք ինչպե՞ս պետք է լուծեն մատուցվող ավետարանական անհեթեթ, սակայն հատուկ նպատակ հետապնդող գլուխկոտրուկները: Բայց եկեղեցին իր բազմադարյա փորձից գիտի, թե ինչպես դաստիարակել մանուկներին, որպեսզի եկեղեցու համար պիտանի մարդ դառնան: Այս հարցում հետաքրքիր պարզաբանում է տալիս Աստվածաշնչի մեծ գիտակ, հայ եկեղեցու հռչակավոր գործիչներից մեկը՝ Գրիգոր Տաթևացին (1346-1409 թթ.). «Ինչ որ անհրաժեշտ է աշակերտին. միայն լսել խրատողին և **դյուրահավատ լինել**»: Այդ դյուրահավատությունն է, որ հետագայում գերակա դառնալով՝ նշված կրոնի սարքովի զարկերակը լցնում է «արյունով» ու նրան դարձնում գոյատևող:

Վերադառնալով Յիսուսի զավեշտական սաղմնավորվելուն և աստված հռչակվելուն՝ բացատրություն տալու փոխարեն նպատակահարմար են համարում բերել Վերածննդի շրջանի գերմանացի մտավորական Յենրիխ Բեբելի (1472-1518 թթ.) «Մեսիայի փոխարեն աղջիկ ծնած հրեուհու մասին»՝ ավետարանների որոշ դրույթներ:

րը ջախջախող պատմությունը. «Երբ ես եղա Բոհեմիայում, լսեցի մի այսպիսի պատմություն: Քրիստոնյա մի երիտասարդ սիրել է հրեա ջահել աղջկա: Երբ աղջիկը նրանից հղիացել է, նրանք միասին փորձել են վտանգից ազատվել հետևյալ ձևով. գիշերվա ուշ ժամին, երիտասարդը մոտեցել է աղջկա ծնողների տանը և սուսկալի ձայնով մի քանի անգամ ազդարարել, որ նրանց դուստրը ծնելու է իսկական Մեսիային: Նրանք այդ լուրը հաղորդել են իրենց հրեա հարևաններին, նաև որոշել են, որ այդ լուրը պետք է հաղորդվի բոլոր հրեաներին: Երբ ամեն ծայրերից հավաքվել են հրեաները, հրեուհին աղջիկ է ծնել, ինչը բավականին լուրջ իրարանցում է առաջացրել ամբողջ հրեա ժողովրդի մեջ» (Генрих Бебель, Факети, Москва, Наука, 1970, с. 21): Այստեղ տեղին է բերել աշխարհահռչակ գիտնական Ֆրեդերի աշխատությունից հետևյալ քաղվածքը. «Ամերիկայի (Միացյալ) նահանգներից մեկում, որը սահմանակից էր Քենտուկիին, մոտավորապես 1830 թվականին հայտնվեց մի ինքնակոչ, որն իրեն հռչակեց աստծու որդի, մարդկության փրկիչ, որը կրկին հայտնվել է Երկրի վրա, որպեսզի սրբապիղծներին, անհավատներին ու մեղավորներին կոչ անի կատարել իրենց պարտքը: Նա հավատացնում էր, թե եթե նշված ժամանակում նրանք չուղղվեն, աշխարհը մի ակնթարթում փլատակների կվերածվի: Այդ զառանցամիտ հավակնությունները հավանությամբ ընդունեցին նույնիսկ հարուստ և ազդեցիկ մարդիկ: Ի վերջո, մի գերմանացի նոր փրկչին խնդրեց իր համերկրացիների համար գերմաներեն լեզվով հռչակել ահավոր աղետը, որովհետև նրանք անգլերեն չեն հասկանում, և ցավալի կլիներ, որ հենց միայն այդ պատճառով նրանք հավիտենական նզովքի ենթարկվեն: Ի պատասխան դրա, այսպես կոչված փրկիչը լիակատար անկեղծությամբ խոստովանեց, որ ինքը գերմաներեն չգիտի: «Ինչպե՞ս,- վրդովված պատասխանեց գերմանացին, - դու որդին ես աստծու և չգիտե՞ս բոլոր լեզուները, և նույնիսկ գերմաներենը: Չքվիր այստեղից, դու խարդախ ես, կեղծավոր ու խելագար: Քո տեղը խելագարանոցն է»: Ամաչելով իրենց դուրահավատությունից, հանդիսականները ծիծաղեցին ու ցրվեցին» (Ջեյմս Ջորջ Ֆրեդեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1989 թ., էջ 125):

Սիոնիստ հեղինակներն անսասան են: Նրանք ևստվածաշնչում գրել և միլիոնավոր մարդկանց հավատացրել են, թե իրենց արյու-

նակիցը՝ Հիսուսը, կույսից է ծնվել, թլպատվել է հրեական ծեսով («Երբ ութ օրերը լման եղան մանուկը տարին թլպատելու»։ Ղուկաս 2:21), մահացել, վերակենդանացել, երկինք է բարձրացել ու, աստված դառնալով, փոխարինել է իր հորը՝ Եհովային, և կառավարում է տիեզերքը։ (Ըստ Աստվածաշնչի՝ աստվածացել և երկինք են բարձրացել բազում հրեաներ, դրանց հետ նաև Հիսուսի մայրը)։ Ուրեմն, Աստվածաշնչից բխում է, որ հրեաները մշտապես երկու թագավոր ունեն։ Իրականում իրենց ընտրած առաջնորդը և երկինք բարձրացած և տիեզերքը կառավարող Քրիստոսը։

«Հարցեր և առաջադրանքներ» բաժնում գրված է. «Եկեք քննարկենք և բանավիճենք: -Ձեր կարծիքով ինչո՞ւ Աստված ընտրեց Մարիամին: Տանը թղթի վրա նկարիր հրեշտակ: Փորձեք նկարագրել ձեր մայրիկին և Մարիամ Աստվածածնին: Համեմատեցեք այդ նկարագրությունները» (էջ 36):

Դասագրքի հեղինակները Մարիամին ընտրելու հարցում չպետք է դիմեին մանուկներին, այլ միայն՝ հասուն մարդկանց: Իսկ ինչ վերաբերում է մյուս հարցադրումներին, ապա ի՞նչ կարելի է ասել քրիստոնեական կրոնի քարոզչության առումով: Չէ՞ որ սուտն ու կեղծիքը տրամաբանության ենթակա չեն: Իսկ զգայուն մանուկը իր մորը երբեք չի համեմատի մի կնոջ հետ, ով, ըստ Աստվածաշնչի, բազմազավակ է եղել (նրա զավակների անուններն են՝ Հիսուս, Հակոբ, Սիմոն, Հուդա, Հովսեփ, Մարթա, Եսթեր, Սողոմոն) և, այրուհանդերձ, կույս է մնացել:

Ուշագրավ է դասագրքում զետեղված «Հիսուսը և մանուկները» ավետարանից վերցված լրացուցիչ նյութը (էջ 43). «Այն օրը աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին. «Սեզանից ո՞վ է մեծը երկնքի արքայության մեջ»: Եվ նա իր մոտ կանչեց մի մանուկ, կանգնեցրեց նրան նրանց մեջ ու ասաց. «Ճշմարիտ են ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի: Ով իր անձը խոնարհեցնում է ինչպես այս մանուկը, երկնքի արքայության մեջ նա է մեծ» (Մատթ. 18:1-5):

Արանից հասկացվում է, որ քրիստոնեական դավանաբանությունը պարտադրում է լինել տգետ, խոնարհ, հնազանդ, դյուրահավատ, իսկ ինչպես հայտնի է, եկեղեցու գոյության, հարստացման, հզորացման ու ծավալման գլխավոր հենարանը հենց այդպիսի մարդն է: Եկեղեցին իր բազմադարյա փորձով շատ լավ գիտի, թե ինչպես կերտել-ստեղծել դյուրահավատների հանրույթ, մի հանրույթ, որը դարեր շարունակ տնօրինում է քրիստոնեական աշխարհի ճակատագիրը և նրան տանում այն ճանապարհով, որը համապատասխանում է այդ դավանաբանության նպատակին:

Իսկ ո՞րն է քրիստոնեական դավանաբանության նպատակը և ո՞րն է այդ նպատակին հասնելու հիմնական զենքը: Իմ պատկերացմամբ, այդ դավանաբանության նպատակը սիոնիզմի ծրագրի իրականացումն է, իսկ նպատակին հասնելու գործիք-զենքը, այսպես ասած, գործնական-կիրառական սուրբ երրորդությունն է: Այս երրորդությունը որևէ ընդհանրություն չունի քրիստոնեական կրոնի առասպելական սուրբ երրորդության (հայր աստված, որդի աստված, սուրբ հոգի) հետ: Ահա այդ կիրառական սուրբ երրորդության բաղադրիչները՝ ա) մանրակրկիտ մշակված ու շարունակաբար կատարելագործվող գաղափարախոսություն՝ նրբագույնս հղկված թատերականությամբ, բ) ֆինանսների և շարժական ու անշարժ գույքի անասելի հարստություններ և դրանց շարունակականությունն ապահովող երաշխիք, գ) հավատացյալներ, որոնք իրենց ետևից տանում են նաև ոչ հավատացյալներին: Կարծում եմ, եթե չլինի այդ երրորդության երրորդ բաղադրիչը, ապա հօդս կցնդեն մյուս երկուսը: Յետևաբար, քրիստոնեական դավանաբանության գլխավոր զենքը հավատացյալն է: Ահա թե ինչու եկեղեցին հսկայածավալ միջոցներ է ծախսում հավատացյալների հազարամյակների շարասյան շարունակականությունն ապահովելու համար և, պետության հետ համաձայնեցված, աճեցնում է հավատացյալների նորանոր սերունդներ:

Ի՞նչն է եկեղեցու հենարանի՝ հավատացյալի շարժիչ ուժն ու եկեղեցուն-դավանաբանությանը նվիրված լինելու դրդապատճառը: Դրդապատճառը չգիտակցված, երևակայական ու սխալ ըմբռնած շահամոլությունն է՝ մեռնելուց հետո դրախտում հայտնվելու

շահագրգռությունը: Այսինքն՝ **առևտուր**. «Ես քեզ եմ նվիրաբերում իմ կյանքը և իմ ապագան, իսկ դու անդրշիրիմյան կյանքում ինձ համար նպաստավոր պայման ապահովիր»: Ողբերգական է, որ անհատը երևակայական էակի՝ Քրիստոսի հետ պայմանագիր է կնքում և գոյություն չունեցող այդ խաբկանքին անհամեմատ ավելի շատ է վստահում, քան, ասենք, իր բարեկամների կամ պետության հետ կնքած իրական պայմանագրին: Իսկ եկեղեցին լավագույնս գիտի հավատացյալների հետ վարվելու ձևը: Նրանցից պահանջվում է՝ **«Քու բոլոր սրտովդ Տէրոջը ապահին է և քու իմաստութեանդ մի՛ վստահիր»** (Առակաց 3: 5), կամ՝ **«Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է»** (Առակաց 1:7): Իսկ Տիրոջն ապավինելը նշանակում է՝ հավատալ Աստվածաշնչում ամփոփված բոլոր հորինվածներին, այսինքն՝ առասպելներն ընդունել որպես իրականություն. որ հավերժորեն եղել է ու կա ամենակարող Եհովան, որը ոչնչից ստեղծել է տիեզերքը, լույսը բաժանել է խավարից, հողից այր և սրա կողոսկրից էլ կին է ստեղծել, որ հրեան գտեմարտում հաղթել է տիեզերքը ստեղծողին, որ նա էլ Երկրագունդը նվիրել է հրեաներին, որ Եհովան, հրեշտակները, երկնային լուսատուները, միջատները, բնական երևույթներն ու հիվանդությունները կռվում են հրեաների հակառակորդների դեմ, որ հրեա կույսից ծնվածը մեռնելուց հետո հարություն է առել, երկինք բարձրացել... Այս ամենը հավատացյալների գիտակցության մեջ ամրագրված են որպես իրականություն, անառարկելի ժշմարտություններ: Իզուր չէ, որ գիտնականները պնդում են, որ Աստվածաշունչն ամայացնում է մարդուն: Դարեր շարունակ մարդկանց հիմարացրել ու մոլորեցրել են: Այդ գործընթացը շարունակվում է, քանի որ եկեղեցին, շնորհիվ սիոնիզմի նման զորեղ ուժի, մշտապես կարողանում է օգտագործել իր քաղաքական իշխանությունը և հավատացյալների բանակ ունենալ:

Ձիմվորագրումը նույնն է մնացել. «Ցելսուսը 2-րդ դարի քրիստոնյաների մասին գրել է, որ նրանք «ցանկանում և կարող են գրավել միայն փոքրահասակներին, ստորին ծագում ունեցողներին, անկիրթներին, ստրուկներին և երեխաներին» (Ա. Ռոբերտսոն, Քրիստոնեության ծագումը, Երևան, 1965 թ., էջ 12):

Պարզ է, որ ստորին ծագում ունեցողներին, անկիրթներին և

ստրուկներին քարոզչությամբ կրոնի մեջ ընդգրկելը եկեղեցու համար այն արժեքն ու կարևորությունը չունի, ինչ երեխաներին, քանզի ստորին ու ստրկական ծագում ունեցողները և անկիրթները ոչ միայն բանականության մթազնման ու կորստի պատճառով են կրոնական համայնքի մեջ ընդգրկվում, այլև նյութական շահի ակնկալիքով: Հասկանալի է, որ այսպիսի կիսակեղծավոր հավատացյալներով եկեղեցին ապագա չի ունենա: Ուրիշ է երեխաների պարագան: Սրանք դեռևս գիտական գիտելիքների համապատասխան պաշար չունեն, դյուրահավատ են և, ինչպես ցույց է տալիս կյանքը, երեխաների մեջ հեշտությամբ կարելի է ամրագրել ցանկացած գաղափար, որին հավատարմաբար կծառայեն իրենց ողջ կյանքի ընթացքում, քանզի մանկական հասակում մատուցված գաղափարները հեշտությամբ ամրագրվում են նաև ենթագիտակցության մակարդակում: Հիշենք թեկուզ մամուլքների կամ ենիչե-րիների օրինակը, որոնք համապատասխան դաստիարակություն ստանալով՝ կոտորում էին նույնիսկ իրենց ծնող ժողովրդին:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն դարձնող պարթև Գրիգորը, որին մենք դարեր շարունակ Գրիգոր լուսավորիչ ենք անվանում, լուծել է նաև ամենաառանցքային խնդիրներից մեկը՝ հայ մանուկներին նոր կրոնի ապագա քարոզիչներ դարձնելը, և դա այնպիսի հիմքի վրա է դրել, որ առ այսօր շարունակվում է: Հենց նույն ազգից ապագային կադրեր պատրաստելու հարցում, պարթև Անակի որդի Գրիգորը նույնպես փայլուն կերպով է դրսևորել իր սև հանձարը: Ազաթանգեղոսը գրում է. «Նույնպես [Գրիգորը] **համոզեց թագավորին, որ զանազան գավառներից, կողմերից, այլևայլ տեղերից մանկանց բազմություն հավաքեն ուսուցանելու նպատակով**, գազանամիտ, վայրենագույն և **ճիվաղաբարո** գավառների բնակիչներին, որոնց ընդգրկեց ուսուցման մեջ և հոգևոր սիրով ու եռանդով վերացրեց դևերի ու սնոտի կուռքերի պաշտամունքի **շարավահոտ աղտն** ու ժանգը և **այնչափ հեռացրեց իրենց բուն բարբերից, մինչև որ նրանք ասացին, թե «մոռացա իմ ժողովրդին ու իմ հոր տունը»**: Տրդատ թագավորը Հայոց երկրի տարբեր կողմերին **հրաման տվեց՝ իր իշխանության նահանգներից, գավառներից, ուսման համար մատաղ մանուկների բազմություն**

բերել և նրանց վրա հմուտ ուսուցիչներ կարգել: Առավելապես քրմերի պղծագործ ցեղին և նրանց մանուկներին այնտեղ հավաքել, հարմար տեղերում դաս-դաս խմբել և ապրուստի թոշակ նշանակել: Նրանց երկու մասի բաժանեցին, ոմանց տվեցին ասորի դպրության և ոմանց՝ հելլենական: Դրանով իսկույն, **մի ակնթարթում,** երկրի վայրենամիտ, դատարկասուն և անասնաբարո բնակիչներն արագորեն մարգարեագետ, առաքելածանոթ և Ավետարանի ժառանգորդներ դարձան ու աստվածային բոլոր ավանդություններին ոչ մի բանով անտեղյակ չչմնացին]: **Եվ դարձյալ շեն ու անշեն տեղերում հաստատեց դաշտաբնակ, շենաբնակ, լեռնաբնակ, անձավաբնակ, արգելաբնակ վանականների բազում ու անհամար խմբեր: Քրմերի որդիներից ոմանց առավ աշակերտ, ձեռնասուն դարձրեց,** ջանում էր ուսում տալ նրանց հոգևոր խնամքով ու երկյուղով դաստիարակել... Եվ Աղբիանոսին՝ ժշմարիտ և աստվածասեր մարդուն թողեց արքունի դռան բնակիչներին եպիսկոպոս, և ինքը ժամանակ առ ժամանակ անբնակ լեռներն էր ելնում, ուր և ինքն իր անձով իսկ օրինակ էր ցույց տալիս: Բոլոր մենաստաններից առնում էր որոշ աշակերտների և գնում դառնում էր լեռնակյաց, մենակյաց, մտնում էր խոռոչների ու ձեղքերի մեջ և առօրյա սնունդը հայթայթում խոտեղեն ուտելիքներով: Այսպես՝ վշտակյաց տկարության էին անձնատուր լինում, մանավանդ որ աչքի առջև ունեին առաքելական խոսքի մխիթարությունը, թե «երբ տկարանում եմ Քրիստոսի համար՝ այն ժամանակ զորացած եմ լինում» և թե՝ «**ավելի լավ է պարծենալ տկարությամբ, որպեսզի իմ մեջ բնակվի Քրիստոսի զորությունը**» (Ագաթանգեղոս, 839, 840, 845, 846):

Տարբեր տեղերից «մանկանց բազմություն հավաքելը», «հմուտ ուսուցիչներ կարգելը» հիշեցնում է վերջին հարյուրամյակի Հայոց Եղեռնը և նրա հետևանքները, երբ հայ մանուկներին «հմուտ ուսուցիչները» թրջացնում և ավելի մոլի հայատյաց էին դարձնում, քան իրենք թուրքերն են: Եթե ազգությամբ պարթև Գրիգորը «քրմերի որդիներից ոմանց առավ աշակերտ, ձեռնասուն դարձրեց», ապա արդյո՞ք նույն ձակատագրին չարժանացան մյուս հայ մանուկները: Արդյո՞ք Գրիգորի կարգած «հմուտ ուսուցիչների» դաստիարակած հայ մանուկները չէին, որ հասուն տարիքում կարողանում

էին սպանել անգամ իրենց ծնողներին, եթե նրանք շարունակում էին հարգել իրենց ազգային՝ Չայոց ավանդական պաշտամունքը: Իսկ այն, որ հայ մարդիկ ասել են, թե «մոռացա իմ ժողովրդին ու իմ հոր տունը», այո, քրիստոնեական կրոնի նպատակներից մեկն էլ մարդկանց հենց ձեռնասուն դարձնելն ու իրենց ծնող ժողովրդից օտարել-հեռացնելն է: Եվ այսօր մենք զարմանում ենք, որ ազգասեր չենք և անգամ անհատական արժանապատվության գիտակցումից համարյա զրկված՝ շարունակաբար կորուստներ ենք արձանագրում, նաև հպարտանում ենք, որ Չիտուս Քրիստոսի սիրելին ենք, քանզի անհաջողությունները, դժբախտություններն ու ողբերգությունները 1700 տարի է, ինչ առատորեն ուղեկցում են մեզ...

Մանկության տարիքից մարդուն նպատակայնորեն դաստիարակելու հետևանքների մասին արժեքավոր տեղեկություն է պարունակում Պլատոնի (427-347 թթ., մ.թ.ա.) «Քարանձավի խորհրդանիշը» աշխատությունը: Այստեղ նկարագրված է մարդկանց իրական կյանքը գիտակցելուց և ընկալելուց զրկելու և հորինված ստերեոտիպերով կառավարելու, ձեռնասուն դարձնելու ողբերգական պատկերը՝ **«Եվ փոքրուց նրանց ոտքերին ու պարանոցին կապանք է դրված**, այնպես, որ մարդիկ չեն շարժվում և տեսնում են միայն այն, ինչը ուղիղ նրանց աչքերի առջևում է, քանի որ այդ շղթաները թույլ չեն տալիս գլուխը շրջել»: Այսինքն՝ տեսնում են միայն այն, ինչ թույլատրելի է: Իսկ աչքերի առջևում դրվածը՝ թույլատրելին, աշխարհի կեղծ պատկերն է:

Չոչակավոր աստվածաբան Գրիգոր Տաթևացին պարզաբանում է, թե եկեղեցին ինչ «գիտելիք» է տալիս աշակերտին. «Մանուկը մոտ է բնական բարուն եւ անմեղությանը, (նրա) **զգայարանները ավելի փափուկ են, եւ փափուկ մոմի նման ավելի լավ է արտատափում կնիքից**, աժման եւ զարգացման տարիքում է, որի համար ավելի արագ է ըմբռնում ամեն ինչ եւ սովորում... վարժվում է **իմաստունների** խրատով, **վարժվում է Սուրբ Գրքով**, ով կրթվում է գործնական առաքինությամբ, **այնպիսին Սուրբ Չոգու իմաստությանն է հասնում»** (Գրիգոր Տաթևացի, Սողոմոնի գրքերի մեկնությունը, Երևան, 2009 թ., էջ 159): Այստեղ պարզ հասկացվում է, թե ինչն՞ է եկեղեցին քրիստոնեական

ուսմունք է քարոզում մարդու ամենավաղ տարիքից՝ նույնիսկ օրորոցից սկսած: Եվ հասկանալի է, որ մարդն ինչքան զուրկ է գիտական գիտելիքներից, մանավանդ աժման նախնական փուլում, ինչպես կասեր աստվածաբանը՝ «զգայարանները ավելի փափուկ են, եւ փափուկ մոմի նման ավելի լավ է արտատպվում կնիքից»: Իսկ *կնիքը*, պարզ է որ Աստվածաշնչի բովանդակությունն է, Սպինոզայի բառերով՝ «Աստվածաշնչի մեռած տառերն» են:

Աստվածաբանի այդ նույն աշխատության մեկ այլ քաղվածքից պարզ երևում է, թե եկեղեցին իմաստություն ասելով ի՞նչ է հասկանում կամ ինչո՞ւ անձնիշխան, այսինքն՝ բանական լինելը և սեփական կամք դրսևորելը ախտի ակունք է համարում. «Մանկական հասակը մեղքի փուշ չի պարունակում. ընդունում է ամեն խրատ եւ ամնոռաց պահում: Իսկ երբ չի վարժվում խրատներով, հասակն աժելուն զուգընթաց աժում են նաև ախտերը: Այդ ժամանակ **անձնիշխան** կամքով հետամուտ է լինում ախտին և այլևս **չի հավատում աստվածային ուխտին և պատվիրաններին: Սա հրեաների ուխտի մասին է:** Իսկ մեզ Տերը Ավետարաններով օրհնեց, որ ասում է. «Իմ հայրը ինձ ուխտեց արքայություն, եւ ես ձեզ եմ խոստանում, որպեսզի բազմեք տասներկու գահերի վրա: («Ես կ'ուխտեմ ձեզի թագաւորութիւն մը, ինչպէս իմ Յայրս ինձի թագաւորութիւն մը տալ ուխտեց. որպէս զի դուք իմ սեղանէս **ուտէք ու խմէք** իմ թագաւորութեանս մէջ եւ աթոռներու վրայ նստիք Իսրայէլի տասներկու ցեղերը դատելու».) (Ղուկ. 22:29-30), **իսկ այս ուխտը անմոռաց կպահեն նրանք, ովքեր մանկությունից Սուրբ Գրքին են հետևում**, ըստ այն խոսքի, որ գրում է առաքյալը աշակերտին. «Մանկուց գիտես Սուրբ Գիրքը, որը կարող է իմաստուն դարձնել քեզ» (Բ Տիմ. 3:15) (էջ 25-26):

Այսինքն՝ եկեղեցու համար իմաստությունն Աստվածաշնչում գրված, օրինակ, բնությունն ու բնականությունը, իրական կյանքը մերժող և անդրձիհիմյան կյանք քարոզող դոգմաներին անվերապահորեն հավատալն է:

Յրաժարվիր քո բանականությունից, և եկեղեցին կփառաբանի քեզ: Դարեր շարունակ քարոզվում է՝ բացի Աստվածաշնչից ուրիշ գրքեր չկարդալ. «Որոյակ իմ... շատ գիրք շինելը ծայր չունի ու **շատ կարդալը մարմինը կը յոգնեցնէ**» (Ժողովող 12:12):

Հուդայական և քրիստոնեական դավանաբանությունների (ընդհանուր հուդայականության) մեծ գիտակ Գրիգոր Տաթևացին աստվածաշնչյան այս խրատին հետևյալ բացատրությունն է տալիս. «Ասենք, որ ինքն իրեն հակառակ չի խոսում, թե իբր շատ գրքեր չհավաքել, **իմաստություն** չսովորել: Այլ նախ, ի՞նչ պետք է հասկանալ. այն, որ շատ և օտարոտի գրքեր չհավաքել, որովհետև դա քեզ օգտակար չէ բարի գործերում և հավատքի մեջ: Այլ **Սուրբ Գիրքը բավական է քեզ**, որ քեզ **իմաստուն** է դարձնում և առ Աստված: Ճգնավորներն ու կրոնավորները աղոթքը կատարում են առանց շատ կարդալու, Աստծո հետ են խոսում աղոթքով և իմաստություն ստանում Նրանից, որովհետև սուրբ հայրերը աստվածուսույց են կոչվում: Այն է ասում, որ հեշտ է առանց բազում գրքերի և **քննարկումների** աղոթքով Աստծուն մոտենալ և ծանաչել Նրան: **Սուրբ Գիրքը մեզ ընտանի է դարձնում Աստծուն**, և ծանապարհ է, որ դեպի Աստված է տանում, մտքի ժանգն է սրբում, և **մարդը աստծուն ընտանի լինելով՝ անմիջականորեն տեսնում է Աստծուն**: Աստծո մասին գիտենալու հարցում **միտքը ավելի գորավոր է, քան գիրքը**» (Գրիգոր Տաթևացի, Սողոմոնի գրքերի մեկնությունը, Երևան, 2009 թ., էջ 112-113): «**Ինչ որ անհրաժեշտ է աշակերտին. միայն լսել խրատողին և դյուրահավատ լինել**: Կատարյալ և անհամեմատ իմաստությունը՝ աստվածային լույսով հավելյալ հոգևոր և իմանալի կյանքին, մերկանալ մարմնավոր կրքերից և ունենալ սեր առ Նա: Այս իմացումը Տերը հավատ է համարում, Հովհաննես ավետարանիչը՝ լույս, իսկ Սողոմոնը՝ իմաստություն: Ովքեր ունեն ուղիղ միտք, գիտեն, որ կա Աստված և երկնավոր կյանք, և հետմահու հարություն և հատուցում բարի և չար գործերի» (էջ 18):

Ահա և քրիստոնեական եկեղեցու անկեղծ վերաբերմունքը գիտության, կրթության ու մանկավարժության նկատմամբ՝ կարդալ միայն Աստվածաշունչը և այն, ինչ ցուցանեն եկեղեցու հայրերը, գիտելիք ձեռք բերել հիմնականորեն աղոթքի միջոցով, այսինքն՝ երևակայել և երևակայածը ընդունել որպես իրականություն, խուսափել քննարկումներից, հավատալ մեռնելուց հետո նորից ապրելուն, հրաժարվել կրքերից: «Սուրբ Գիրքը մեզ ընտանի է դարձնում» սթափեցնող արտահայտությամբ Տաթևացին ակնհայ-

տորեն ցուցանում է Աստվածաշնչի շովինիստական, հակաբնական ու հակամարդկային էությունը:

Անգլիացի գիտնական Ռասելը քննարկվող խնդրի առնչությամբ գրում է. «Մանկական ամենավաղ հասակում մարդկանց մոտ առաջացած գաղափարաբանական զուգորդումները (ասոցիացիաները) մեզ վրա ավելի մեծ ազդեցություն են գործում, քան ավելի ուշ տարիքում առաջացած գաղափարաբանական զուգորդումները: Մարդկանց մեծամասնությունն աստծուն հավատում է այն պատճառով, որ այդ հավատը նրանց մեջ մտցնում են մանկության տարիքում: Յուրաքանչյուրը, ով աշխատել է հարցը ուսումնասիրել անաչառ, գիտի, որ **արհեստականորեն մատուցված տգիտությունը ծայր աստիճան նպաստավոր է հոգեկան և ֆիզիկական հիվանդության համար**»:

Մանուկների նկատմամբ Հիսուսի վերաբերմունքը մի առանձնահատուկ «նրբությամբ» է քարոզում ս. Էջմիածինը: Մայր Աթոռ ս. Էջմիածնի «Քրիստոնյա Հայաստան» կրոնական, մշակութային, լրատվական պաշտոնաթերթում (2004 թ. մայիս Ա, թիվ 9, 173) գրված է. «Մի փոքրիկ երեխա, իր մորից հաց առնելով, դուրս ելավ և ուտելով այստեղ-այնտեղ էր շրջում, ինչպես այդ տարիքի երեխաների սովորությունն է: Պատահեց, որ այդ մանուկը եկավ մի տեղ, ուր կար Կույս Մարիամ Աստվածածնի պատկերը, որ գրկում ուներ մանուկ Քրիստոս Աստծուն: Նրան նայելով՝ մանուկը երեխայաբար և քաղցրությամբ ասաց մանուկ Քրիստոսին.

- Սիրելի՛, աղաչում եմ, ընդունի՛ր այս, որ հոժարությամբ ընծայում եմ քեզ:

Իսկ այն պատկերը, թեպետև, գեղեցիկ էր նկարված, սակայն, որովհետև անզգա էր, ոչ հացն էր առնում և ոչ պատասխան տալիս: Իսկ մանուկը չէր դադարում աղաչելուց, որ իր հետ հաց ուտի: Եվ երբ երկար ժամանակ անցավ, իսկ նա ստեպ-ստեպ աղաչում էր,- որպեսզի հայտնի լինի, թե Աստծուն ինչպես հաճելի են անմեղների խնդրանքները,- պատկերն Աստծո զորությամբ ձեռքը երկարեց, երեխայից հացն ընդունեց՝ ասելով.

- Ահա այդ հացը վերցնում եմ քեզանից, ինչպես կամենում ես, բայց երեք օրից այն քեզ հատուցել եմ կամենում:

Իսկ մանուկը, լսելով այդ պատասխանը, ուրախությամբ տուն դարձավ և նույն ժամին հիվանդացավ: Երբ եկավ երրորդ օրը, **Տերն ու Կույս Մարիամի Որդին կանչեց նրան, և մանուկն ավանդեց իր հոգին առ Աստված, որպեսզի առնի հավիտենական կյանքի հացն ու երկնքի արքայության բնակարանը»:**

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի պաշտոնաթերթում, ինչպես տեսնում ենք, գերագույն բարիք է համարվում նույնիսկ նկարն իրական մարդուց տարբերել չկարողացող մանկան մահը: Այս սրբապղծությունը ձիշտ և ձիշտ համահունչ է քրիստոնեական գաղափարախոսությանը և սրա ջատագովների տեսակետներին: Օրինակ, Ծախնովիչը նշում է, որ «Տերտուպիանոսը գրել է, թե **«Այս կյանքում մեր սրտին ավելի մոտ բան չկա, քան որքան կարելի է շուտ մեռնելը»:** Իսկ Սուրբ Կեպրիանոսը ասում էր. **«Քրիստոնյայի համար ոչինչ այնքան օգտակար չէ, որքան մոտալուտ մահը»** (Մ. Ծախնովիչ, Փիլիսոփայության ծագումը և աթեիզմը, Երևան, 1979 թ., էջ 139):

«ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Դասագրքում Հիսուս Քրիստոսի ծնունդը, մկրտությունը, մանկությունը նկարագրելուց հետո ներկայացվում է Քրիստոսի և սատանայի մրցակցությունը: Ըստ ավետարանների, Քրիստոսին մկրտելուց հետո սուրբ հոգին նրան տանում է անապատ՝ սատանայի հետ մրցելու համար:

«Առաջին փորձություն. Հիսուսը 40 օր ոչինչ չկերավ և քաղց զգաց: Սատանան, որ անընդհատ հետևում էր Հիսուսին, մոտեցավ նրան, որպեսզի փորձի և մոլորեցնի: Նա ասաց, որ եթե Հիսուսն իրոք Աստծու որդին է, թող այնպես անի, որ անապատի քարերը հաց դառնան: Հիսուսը չնայած շատ քաղցած էր և կարող էր քարերը հաց դարձնել, չխաբվեց: Նա պատասխանեց, որ մարդը միայն հացով չի ապրում, այլ նաև Աստծո խոսքով» (էջ 48):

Յեքիաթը օգտակար է նաև այն առումով, որ նրա մեջ համարյա միշտ առկա է առողջ տրամաբանությունը, ինչպես նաև հեքիաթն ավարտվում է այնպիսի եզրահանգմամբ, ինչպիսին նրա բովանդակությունն է, սակայն, առաջին փորձության մեջ նկարագրված նյութի բովանդակությունն ու եզրակացությունը միմյանց չեն համապատասխանում: Օրինակ, սատանայի առաջարկության մեջ Յիսուսին մոլորեցնելու՝ ճիշտ ճանապարհից շեղելու ոչինչ չկա: Սատանայի հարցադրումը տրամաբանական է, պարզ ու հասկանալի. եթե ամենակարող ես՝ քարը հաց դարձրու: Սակայն Յիսուսի պատասխանը ոչ թե հարցի պատասխանն է կամ դրա պարզաբանումը, այլ միայն շփոթեցնելու, շեղելու նպատակ է հետապնդում:

Հայտնի գիտնական Ծախնովիչը գրում է. «Աստվածաշունչը խանգարում է մարդկանց աշխարհը տեսնել այնպես, ինչպես այն կա իրականում, ծանաչել բնության երևույթների իսկական էությունը և տիրապետել դրանց: «Սիրաքի որդի Հիսուսի իմաստությունները» գիրքը սովորեցնում է. «Այն, ինչ անմատչելի է քեզ, մի՛ փորձիր, իսկ ինչ թաքնված է քեզնից, մի՛ որոնիր. խորհրդածիր այն մասին, ինչ թույլատրված է քեզ, և դու գործ չունենաս անհայտ առարկաների հետ»: Աստվածաշունչի երևալուց շատ դարեր հետո գիտնականները արդարացիորեն գայրանում էին, որ իրենց հետազոտական յուրաքանչյուր քայլափոխին հանդիպում էին մի խոչընդոտի, որտեղ գրված էր. «**Ճանապարհ չկա: Մովսես**»: 1906 թ. Պետերբուրգում լիբերալ բուրժուաների մի ծնողական խմբակում քննարկվում էր երեխաների կրոնական դաստիարակության և կրթության հարցը: Ժողովում «**Աստվածաշունչը և գիտությունը**» զեկուցումով հանդես եկավ հոգեբույժ պրոֆեսոր Պ. Ի. Կովալսկին, որը համոզիչ կերպով ցույց տվեց, որ Հին կտակարանի «սուրբ պատմության» դասավանդումը երեխաներին անպայման պետք է վերացնել, քանի որ **այն խարխուլում է հարգանքը դեպի գիտությունը և սառեցնում գիտելիքներ ձեռք բերելու ծարավը**: Նա ասում էր, որ Հին կտակարանը ֆանտաստիկ, խեղաթուրված պատկերացումներ է պարունակում բնության և մարդու մասին: Ըստ Աստվածաշունչի, երկինքը պահվում է սյուների վրա, ունի «ձյունի շտեմարան-

ներ և կարկուտի շտեմարաններ», աստղերը կենդանի էակներ են, որոնք կռվում են քանանացիների զորավարի դեմ, արևը մի ջահ է, որ կախված է երկնքից՝ ամբողջ օրը երկիրը լուսավորելու համար. նա ունի կացարան, որտեղից դուրս է գալիս առավոտյան և ուր վերադառնում է երեկոյան: Հիսուս Նավինը հրամայեց արևին. «Կանգ առ, արև, Գաբաոնի մոտ» և արևը կանգ առավ և կանգնած մնաց երկնքի մեջտեղում... Գիտնականի զեկուցումը հրապարակվեց: Դատական իշխանությունները որոշեցին այդ գրքույկը շրջանառությունից հանել, իսկ Պ. Ի. Կովալսկուն դատապարտել աքսորաբնակության, սակայն դատական պալատը անհարմար գտավ հայտնի հոգեբույժ պրոֆեսորի նկատմամբ կիրառել այդպիսի միջոցներ, և դատավճիռը չեղյալ հայտարարվեց» (Շախնովիչ, Փիլիսոփայության ծագումը և աթեիզմը, Երևան, 1979 թ., էջ 140-142): Նույն աշխատությունից ևս մի քաղվածք. «Մարտին Լյութերը 1546 թվականին իր վերջին քարոզում ասում էր. «**Բանականությունը սատանայի առաջին պոռնիկն է**», «**հավատի արժանիքն այն է, որ նա կոտրում է բանականության վիզը**», «**հրաժարվելով բանականությունից, մենք աստծուն մատուցում ենք ամենաընդունելի զոհը, որ կարելի է տալ**» (էջ 27):

Եկեղեցին, երբ չկարողացավ բուրրին համոզել գիտության բացակայությունը կամ անօգտակարությունը, սկսեց քարոզել, որ իբր գիտության և կրոնի միջև հակասություն չկա, որ, իբր, գիտականորեն հիմնավորվում է Եհովա աստծո գոյությունը և նրա ձեռքով տիեզերքի ստեղծումը... Քրիստոնեության թիկունքում կանգնած ուժին ամենևին չի հուզում այն, թե այդպիսի զառանցանքներ (խոսքը ոչ թե առասպելի, այլ կրոնական դոգմա դարձրած առասպելի մասին է) լսելով մարդիկ ինչ կմտածեն: Այդ ուժը՝ սիոնիզմը, արդեն գործնականում համոզվել է, որ ուրիշներին արհամարհելու, անտեսելու և անպատկառության մեթոդաբանությունն իրեն լիովին արդարացնում է:

Եկեղեցու՝ գիտության զարգացմանը մեծապես նպաստելու առումով հիշենք, թե այդ նույն եկեղեցու ձեռքում ինչ կյանք ապրեցին մեր հանձարներից, օրինակ, Մովսես Խորենացին և Անանիա Ծիրակացին:

Ղազար Փարպեցին (442-VI դարի սկիզբ) վտարանդիությունից իր հովանավոր Վահան Մամիկոնյանին հղած նամակում, նկարագրելով եկեղեցու չարանենգ սպասավորների (*Յայոց արեղաների*) կողմից իրեն պատճառած թշվառությունները, նաև որոշ տեղեկություն է հայտնում Մովսես Խորենացուն (410 թ.-V դարի վերջ) բաժին հասած հալածանքների մասին. «...Իսկ ուրիշ առաքելանման մարդիկ ինչո՞ւ այսպիսի և սրանից էլ ավել տառապանքներ կրեցին այս աշխարհում և խստագույն վշտով վախճանվեցին: Երանելի փիլիսոփա Մովսեսը, որ արդարև, մինչդեռ ապրում էր իր մարմնական կյանքը, արդեն երկնային զորականներին էր քաղաքակից, չէ՞ որ տեղից-տեղ հալածվեց հայոց այդ արեղաների ձեռքով: Չէ՞ որ **Նրա լուսավորող ու տգիտահալած գրքերը** անգիտությունից փաթաղիկես (ասորերեն նշանակում է՝ մոլորված, խանգարված) էին համարում նրանք և էլի ուրիշ բաներով խայտառակեցին: Սակայն հետո այլոց տված ամոթանքից՝ մի խաբեական եպիսկոպոսություն մահադեղի պես խմեցրին այս սրբին և խեղդեցին: Եվ թե նա վախճանի ժամին ի՞նչ ահավոր նզովքի գիր է թողել **քահանայության գլխավորների վրա** (Խորենացու «Ողբը»), գիտեմ, որ դուք լավ տեղյակ եք... (Նա իր կյանքը) անչափ անհանգիստ աշխատությունների և գիշերցերեկ Յայոց աշխարհը լուսավորող վաստակի վրա դրեց: **Նրա ոսկորները գերեզմանից հանել տվին և գետը թափեցին:** Յրեշտականման այն Տերին նույն այդ անհանգիստ հալածանքներով մահու հասցրին և դեռ հիմա էլ անհագ քինախնդրությամբ մեռածի հետ են կռիվ տալիս» (Ղազար Փարպեցի, Յայոց պատմություն, Թուրթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982 թ., էջ 483-485):

Այստեղից նաև կարելի է գուշակել, որ Խորենացուն՝ իր կենդանության օրոք հռչակ բերող գործերը մեզ չեն հասել. շիրիմը պղծող, հանգուցյալի ոսկորները գետը թափող արեղաներն ինչպե՞ս կարող էին հանդուրժել ու պահպանել մեր հանձարի՝ մարդկանց *լուսավորող ու տգիտահալած գրքերը*: Իսկ Փարպեցու «Թուրթ Վահան Մամիկոնյանին» աշխատությունը մեզ է հասել, հավանաբար, իշխանական արխիվները եկեղեցուն ոչ այնքան մատչելի լինելու պատճառով:

Յոչակավոր մաթեմատիկոս, աստղագետ, տիեզերագետ, տոմարագետ, Հայաստանում ճշգրիտ գիտությունների հիմնադիր Անանիա Ծիրակացին (605-685 թթ.) նույնպես հալածվել է Հայոց եկեղեցու կողմից և, ըստ պահպանված ավանդույթի, իր կյանքի վերջին տարիներին ապաստանել է Վենետիկում: Հանձարեղ գիտնականի մահվանից հետո էլ «հալածվել» է նրա ստեղծագործությունը: Ծիրակացուց ավելի քան 400 տարի հետո Գրիգոր Մագիստրոսը իր ժամանակի կաթողիկոսին գրած նամակում ամոթաբեր է համարել Ծիրակացու ստեղծագործություններն արգելանքի տակ պահելը:

զ. *«Կառուցվել են հոյակերտ բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր»...* Իսկ ինչո՞ւ չի ասվում, որ դրանք կառուցվել են միայն հանուն քրիստոնեական կրոնի: Արդյո՞ք հնարավոր է, որ քրիստոնեությունը դարեր շարունակ գոյատևեր առանց եկեղեցիներ ու վանքեր կառուցելու և նրանցում սիոնիզմի ծրագրին համապատասխան հորինվածքների բեմականացման: Քրիստոնեական եկեղեցիներում ու վանքերում են մարդկանց հիպնոսացնում, անօգուտ ու վտանգաբեր հավատքին կառչած պահում: Այնպես որ, պետք չէ մանուկներին համոզել, թե եկեղեցիներն ու վանքերը կառուցվել են հանուն հայ ժողովրդի մշակույթի զարգացման:

Քրիստոնեական եկեղեցին Հայաստանում պետականորեն հիմնավորվելու հենց առաջին օրերին կարողացավ տիրանալ նյութական հարստությունների, որը իր գոյության, ամրապնդման ու զարգացման ամենագլխավոր երաշխիքն էր: Բացի այդ, եկեղեցին ոչ միայն հարկ էր վերցնում բնակչության ստացվածքից (տասանորդ և այլն), այլև տիրապետում էր հսկայածավալ կալվածքների: Օրինակ, Գրիգոր «լուսավորիչը» ոչնչացրել է Գիսանեի, իմա՝ Հայոց Անահիտ աստվածուհու տաճարը (այդ տաճարը հիշատակվում է մ.թ.ա. 13-րդ դարի արձանագրությունում՝ Յ. Ներսիսյան, Հայկական լեռնաշխարհը ըստ Ջրադաշտն ու իր Ավեսթան, Գլենդել, 2006 թ., էջ 90), և նույն տեղում կառուցել ս. Կարապետ վանքը և այդ վանքին անասելի հարստություններ է նվիրել: Ահա թե այդ մասին ինչ է գրում նույն Գրիգորի գինակից, ասորի Գլակը. «Սուրբ Գրիգորը թողեց այդտեղ քառասուններեք կրոնավորներ, որպեսզի

տեղի բնակչությանը սպասավորեն: Տասներկու դաստակերտ էլ հատկացրեց նրանց. դրանք են Կուառսը, Մեղտին, Բրեխը, Տումբը, Խորնին, Կեղքը, Բագուն և այլն, որոնք մեծամեծ և բազմամարդ ավաններ էին, ինչպես որ կա գրով հիշատակված Մամիկոնյան իշխանների մատյանում: Կուառսն ունի 3012 ծուխ, 1030 հեծյալ և 2200 հետևակ: Մեղտին ունի 2700 ծուխ, 800 հեծյալ և 1030 հետևակ: Տումբը՝ 900 ծուխ և 400 հեծյալ: Խորնին ունի 1906 ծուխ, 700 հեծյալ և 1007 հետևակ: Իսկ Բրեխն ունի 3200 ծուխ, 2040 հեծյալ, 840 աղեղնավոր հետևակ, 1080 տեգավոր և 2080 պարսավոր» (Յովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989 թ., էջ 48):

Նշված 12 դաստակերտներից միայն 5-ի զինվորների թիվը կազմում է 11407: Ուստի կարելի է եզրակացնել, որ միայն այդ հինգ բնակավայրերում կարող էր լինել մոտ 60-70 հազար մարդ: Ըստ պատմիչների, Գրիգոր «լուսավորչի» և նրա թիմակիցների սեփականությունը և վանքապատկան-եկեղեցապատկան դարձան ոչ միայն հեթանոսական մեհյան-տաճարներին պատկան հողատարածքները, այլև նրանցում եղած ոսկին ու արծաթը, գլխատված-ոչնչացված իշխանական տների, սպանված ու Յայաստանից արտաքսված հայերի շարժական ու անշարժ գույքը...

Ժողովրդից թալան-ավարառածից նույն ժողովրդին փշրանքներ տալով և Եհովայից ու Քրիստոսից սպասվելիք պատժի սարսափի ուժով՝ պարթև Գրիգորը կարողացավ մարդկանց ընտանի-ձեռնասուն դարձնել: Նույն Գրիգորը նաև կարողացավ լուծել եկեղեցու գերակայության և հայ ժողովրդին այդ եկեղեցու հավերժորեն ստրուկ դարձնելու խնդիրները: Ահա թե ինչու մարդիկ առաջին հերթին եկեղեցու իշխանությանն էին ենթարկվում և միայն դրանից հետո՝ թագավորի՝ աշխարհիկ իշխանությանը: Ահա թե ինչու թագավորները և, ընդհանրապես, երկրի ղեկավարները եկեղեցու ձեռքում խաղալիք են եղել ու կան: Եվ արդյո՞ք պետք է զարմանանք, որ Յայոց պետականությունը ոչնչացվեց-ընկավ, և առնական հայ ռազմիկը ստրկամիտ դարձավ, իսկ ազգային մեծագույն կորուստների ու ողբերգությունների պահերին եկեղեցաշինություն ենք ծավալում (Սպիտակի աղետալի երկրաշարժի օրերին, փրկարարական աշխատանքներին զուգահեռ, այդտեղ հապճեպորեն

կառուցվեց թիթեղյա եկեղեցի... Իսկ այսօր, մարդասիրական օգնություն աղերսող մեր երկրում կառուցվում են թանկարժեք ու գեղեցկակերտ այնպիսի եկեղեցիներ ու վանքեր, որ դրանք տեսնող օտարը կարող է կարծել, որ Հայաստանի Հանրապետությունն անսպառ ֆինանսներ ունի), որը կլանում է հայ ժողովրդի առանց այդ էլ սակավ ֆինանսանյութական միջոցները: Քրիստոնեական եկեղեցաշինություն է ծավալվում նաև հայ ժողովրդին ուրիշ հավատքներից ու աղանդներից զերծ պահելու պատրվակով: Ինչ է, ՀՀ իշխանավորներն ու էջմիածինը չգիտեն, որ, օրինակ, Եհովայի վկաները, մորմոնները, ավետարանչականները և բազում այլ կազմակերպություններ սիոնիզմի կառույցներ են, որ նույն սիոնիզմի ենթակայության տակ է և քրիստոնեական եկեղեցին:

Հայ ժողովրդի պատմությունից կարելի է բերել բազում օրինակներ, երբ փառաբանվող այդ եկեղեցի-վանքերում են հրկիզվել հարյուր հազարավոր հայեր, որոնք իրենց կյանքի ապահովության երաշխիքը համարել են այդ եկեղեցիներն ու վանքերը, հետևաբար, համարյա չեն մտածել զինվելու և ինքնապաշտպանության մասին: Հրկիզվածների հարազատներն ու արյունակիցները, առանց որևէ վերլուծման, մեծ ջերմեռանդությամբ վերականգնել են այդ եկեղեցիներն ու վանքերը և առավել նվիրվել դրանց (հայտնի է, որ թշվառությունը և դժբախտությունը հավատացյալներին ավելի են կապում քրիստոնեական հավատքին, և ինչքան ծանր է կորուստն ու դժբախտությունը, այդքան ամուր է այդ կապը): Ողբերգական է, որ այդ ամենից դաս չենք առնում: Եվ այժմ էլ, երկրի կիսաքայքայված տնտեսության պայմաններում մենք մեր սակավ միջոցների զգալի մասը ծախսում ենք նորանոր եկեղեցիներ, ձոխ ու շքեղ վանքեր կառուցելու և դրանց հարստացնելու վրա: Հոգ չէ, որ ունենք ոչ բարվոք, նույնիսկ վթարային վիճակում գործող ծննդատներ, մանկապարտեզներ, դպրոցներ... Փաստորեն, այսօր մենք կերտում ենք մեր նոր, հերթական եղեռնը: Պարզ չէ, որ իրական կյանքը, հայրենիքը ոչ այնքան կարևորող, սակայն հանդերձյալ կյանքում հարմարավետ տեղ երազող կամ այդ գաղափարներին ակամա ենթարկվող հայը շարունակաբար կկոտորվի, քանզի, ըստ քրիստոնեական կրոնի, կոտորվելը, գլխավորապես նահատակվելը, Հիսուսի սիրո դրսևորումն է: Իսկ

հավատացյալներից ո՞վ կիրաժարվի Յիսուսի սիրելին լինելուց:

Այստեղ նպատակահարմար էմ համարում բերել Րաֆֆու հետևյալ խոսքը. «Ո՛վ հայրեր, ո՛վ պապեր, այս գավաթը խմում եմ, բայց առանց նվիրելու ձեր ոսկորների: Եթե դուք այս վանքերի տեղը, որոնցով լիքն է մեր երկիրը, բերդեր չհնեիք, եթե դուք սուրբ խաչի և անոթների փոխարեն, որ սպառեցին ձեր հարստությունը, զենքեր գնեիք, եթե դուք այն անուշահոտությամբ տեղ, որ խնկվում են մեր տաճարներում, վառող ծխեիք, այժմ մեր երկիրը բախտավոր կլիներ: Մեր երկիրը չէին քանդի, մեր որդիքը չէին կոտորի և մեր կանանց չէին հափշտակի...Վանքերից ծագեց մեր երկրի կործանումը, նրանք խլեցին մեր սիրտը և քաջությունը, նրանք ձգեցին մեզ ստրկության մեջ, սկսած այն օրից, երբ Տրդատը թողեց իր սուրը և թագը, վերցրեց խաչը և մտավ Մանիա այրը՝ ձգնելու... Ո՛վ Յայոց հին աստվածներ, Ո՛վ Անահիտ, Ո՛վ Վահագն, նվիրում եմ այս բաժակը Ձեր սուրբ հիշատակին, դուք փրկեցեք մեզ...»:

«ՅԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՅԱՅԱՑՔՆ ՈՒՂՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ»

Չնայած որոշել էի անդրադառնալ միայն չորրորդ դասարանի դասագրքին, սակայն նկատի ունենալով այն, որ այդ դասագրքի ներածականն օրգանապես կապված է վեցերորդ դասարանի դասագրքի՝ Յայոց ավանդական աստվածներին մերժելու և քրիստոնեական կրոնն ընդունելու հետ, ուստի անհրաժեշտ եմ համարում այդ դասագրքից մեջբերել հետևյալ քաղվածքը. «**Յայ Արշակունիներն իրենց հայացքն ուղղում են դեպի քրիստոնեությունը, որը 3-րդ դարի վերջին Յայաստանում արդեն ուներ մեծաքանակ հետևորդներ: Քրիստոնյաները բոլորին զարմացնում էին իրենց անսասան հավատքով, նրանք նույնիսկ պատրաստ էին հրաժարվել կյանքից, բայց ոչ հավատքից: Զոռմեական զորքերի օժանդակությամբ Յայաստանն ազատագրած և 298 թ. վերստին գահ բարձրացած Տրդատ 3-րդ Արշակունին (287-330), ձիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը,**

քիչ անց՝ **301թ., քրիստոնեությունը Հայաստանում հռչակեց պետական կրոն:** Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու վերաբերյալ պատմիչ **Ագաթանգեղոսի** երկում պահպանվել է պատմական հիմք ունեցող մի **ավանդապատում:** Ըստ այդ ավանդության՝ պարսից Արտաշիր արքան հայոց խոսրով 2-րդ թագավորի դեմ դավադրություն կազմակերպելու նպատակով Հայաստան է ուղարկում պարթև Անակ իշխանին: Որսի ժամանակ Անակին հաջողվում է մահացու **վիրավորել** խոսրով թագավորին: Սակայն դավադրությունը բացահայտվում է, և հայ իշխանները **սրի են քաշում Անակի ողջ ընտանիքը:** **Փրկվում է միայն նրա որդի Սուրենը,** որին դայակը կարողանում է փախցնել Կեսարիա: Այնտեղ նա մանկանը հանձնում է քրիստոնյա դաստիարակների խնամքին, որոնք նրան մկրտում և **վերանվանում են Գրիգոր:** խոսրով 2-րդ Արշակունու **մահից** հետո պարսից թագավորը հարձակվում է Հայաստանի վրա և գրավում այն: Թագաժառանգ **Տրդատին** փախցնում են Հռոմ: Տրդատը մեծանում ու դաստիարակվում է հռոմեական արքունիքում: Այնտեղ նա փայլուն զինվորական կրթություն է ստանում և ձեռնամուխ լինում Հայաստանի ազատագրմանը: **287 թ. Տրդատը հռոմեական բանակների ուղեկցությամբ վերադառնում է հայրենիք:** **Ճանապարհին՝ Կեսարիայում, նա ծանոթանում է Գրիգորի հետ և հիանալով նրա խելքով և իմաստությամբ՝ նրան նշանակում է արքունի քարտուղար:** Տրդատին միանում են բազմաթիվ հայկական զինված ջոկատներ» (Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2004 թ., էջ 39: Հեղինակներ՝ Արամ Քոսյան, Վարդան Պարսամյան, Առաքել Գյուլբուդաղյան, Վարդան Ղանդիլյան):

ա. «Հայ Արշակունիներն իրենց հայացքն ուղղում են դեպի քրիստոնեությունը» միտքը պարզաբանելու կարիք ունի: Ինձ մատչելի աղբյուրներն այլ տպավորություն են ստեղծում: Դրանցից ամենևին չի հասկացվում, որ Արշակունիները իրենց հայացքը դեպի քրիստոնեությունն էին ուղղել: Աշակերտներին փորձում են մատուցել որոշ հեղինակների, իմա՝ եկեղեցու այն տեսակետը, որ իբր հայ ժողովուրդը շարունակ սպասել է, թե երբ պիտի քրիստոնեությունը

ստեղծվի, որ քրիստոնյա դառնա, և իր աշխարհընկալմամբ էլ, իբր, քրիստոնյա է եղել մինչ այդ գաղափարախոսության ձևավորումը: Այն դեպքում, երբ քրիստոնեությունը հրով ու սրով է մուտք գործել Հայաստան: Հայաստանում քրիստոնեության ընդունմանը նպաստել է Հայոց Խոսրով թագավորի դավադրաբար սպանությունը և դրան անմիջապես հաջորդած Հայաստանի գրավումն ու ավերումը, իսկ օտարության մեջ մեծացած-դաստիարակված թագաժառանգ Տրդատը, կարելի է եզրակացնել, որ Հայաստան վերադառնալուց հետո դեռևս չէր հասցրել ամուր կապեր հաստատել Հայոց քրմական և իշխանական համակարգերի և ժողովրդի հետ, իսկ երկիրն էլ նոր է ազատագրված եղել պարսիկներից և կիսաքառասյին իրավիճակում է գտնվել: Ուրեմն, Հայոց թագավորի սպանությունը, Հայոց թագավորության ընդհատումը, Հայաստանի ավերումը կատարվել է պարթև Անակի դերակատարման հետևանքով, իսկ սրա որդի Գրիգորը կարողացել է Հայոց հռչակավոր արքա Տրդատին դարձնել քրիստոնյա-հավատացյալ և իրեն ենթակա, ապա իր ձեռքն է վերցրել Հայոց աշխարհիկ ու հոգևոր իշխանական լծակները և հայ ժողովրդին բռնությամբ քրիստոնյա է դարձրել:

Այս առումով տեղին է Ագաթանգեղոսի «Պատմությունից» մեջբերել Գրիգոր «լուսավորչի» և Հայոց արքա Տրդատի գործունեության մասին որոշ հատվածներ: Այսպես, Ագաթանգեղոսը գրում է. «Ապա թագավորը (Տրդատ Մեծը, -Յ.Ս.) իսկույն տիրաբար հրաման տվեց, ամենքի հավանությամբ, **գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի, հնամենի և նախնիների ու իր կողմից Աստված անվանված չաստվածները անհիշատակ դարձնի, մեջտեղից ջնջի:** Ապա **ինքն իսկ թագավորը**, ամբողջ գործով հանդերձ, Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը, **ավերելու այնտեղ Անահիտ դիցուհու բազիլը** և այն, որ Երազամույն կոչված տեղում էր գտնվում: Նախ ծանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիր, Որմզդի գրչի Դիվան կոչված, երազացույց, երազահան պաշտամունքի **Տիր աստծու իմաստության ուսման մեխյանը և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել:**»:

«Այնտեղ երևացին կերպարանավորված դևեր, այրուծի ու բազմության ու հետևակազորի գնդի կազմության

նմանությամբ, մկնդավորներ ու մուրձավորներ, առաջ էին ընթանում **մարդկային կերպարանքով**, նիզակներով ու **զինանշաններով**, **զենք ու զարդով զինավառ**, մեծ գոչումով աղաղակ բարձրացրին և փախչելով ընկան Անահիտի մեռյալը: Այնտեղից հարձակվողների դեմ սկսեցին կռվել, շինվածքի վերևից ներքև մարդկանց վրա անուժ նետեր և թանձրատարափ քարահոսք թափեցին, որոնցով և մի քիչ **զարհուրեցրին նորահավատ մարդկանց**: Իսկ սուրբ Գրիգորը, երբ այս տեսավ, տերունական խաչի նշանը առած դիմեց մեռյալի դուռը և մեռյալի ամբողջ շինվածքը հիմնահատակ դղողալով տապալվեց, և փայտակերտ [մասերը] հանկարծ բռնկվելով վառվեցին տերունական նշանի զորությունից և ծուխը ծառացած մինչև ամպերը հասավ»:

«Բոլոր դևերը, փախուստի դիմելով, մարդկանց առջև երևացին, օձիք պատռելով, ձակատը ծեծելով, ճիչ բարձրացնելով, մեծագոչ լալով ասում էին, թե «**Վայ մեզ, վայ մեզ, վայ մեզ, որովհետև ամբողջ երկրից մեզ փախստական արեց մարդու դուստր Մարիամի որդին՝ Հիսուսը**: Այստեղից էլ բանտարկվածի ու մեռածի ձեռքով մեզ վիճակվեց փախստական լինել: Արդ՝ ո՞ր փախչենք, քանզի նրա փառքը լցրել է տիեզերքը: Եվ որովհետև մեզ առանց հանգիստ տալու, օդ ծեծելով անջատեց մարդկանց բնակությունից, ուստի մենք գնում ենք Կովկաս լեռան բնակիչների մոտ, հյուսիսի կողմերը, **գուցե այնտեղ հնարավորություն լինի, որ կարողանանք ապրել** և մեր կամեցածը նրանց միջոցով կատարել»:

«Այս ասացին ամենքի առջև և մարդիկ, որ լսեցին, բոլորն էլ ավելի ևս հաստատ դարձան հավատքի մեջ: **Իսկ սևագունդ դևերը աներևույթ եղան, տեղից չքացան և ծխի նման վերացան**: Այնտեղ հասած մարդիկ, իսկույն հիմքերը քանդելով, մնացածն ավերեցին և ամբարված գանձերը աղքատներին, տառապածներին ու չքավորներին բաժանեցին: **Դաստակերտներն ու սպասավորներին, քրմերով հանդերձ, նրանց հողերով ու սահմաններով՝ նվիրեցին եկեղեցու պետքերին ծառայելու համար**»:

«Եվ (Գրիգորը, -Յ.Ս.) առհասարակ ամենքի համար աստվածապաշտության խոսքը սերմանեց և բոլորին տիրոջ ճանապարհ-

հի վրա կանգնեցրեց՝ արարչի պատվիրաններին տեղյակ դարձնելով: Հայաստանի բոլոր քաղաքներում, գյուղերում, ավաններում ու ագարակներում ցույց էր տալիս եկեղեցու տեղերը: Նույնպես և ճանապարհների ելքերի ու մուտքերի մոտ, փողոցներում, հրապարակներում, խաչմերուկներում, որպես պահապան ու ապավեն, կանգնեցրեց ամենքի երկրպագած նույն նշանը»:

«...ինքն (Գրիգորը, -Հ.Ս.) առավ թագավորին, շարժվեց գնաց, որպեսզի Հայաստան աշխարհի բոլոր սահմանների վրա, ուրիշ կողմերում ևս կենաց խոսքը սերմանեն: Գնաց հասավ Դարանաղյաց գավառը, որպեսզի այնտեղ ևս կործանեն սուտ աստվածների բագինը, որը Թորոզան գյուղում էր, **սպիտակափառ Բարշամինա անվանված աստծո մեհյանը: Նախ այն կործանեցին ու նրա արձանը փշրեցին և բոլոր գանձերը, ոսկին ու արծաթը ավարի մատնեցին** ու աղքատներին բաշխեցին: Եվ գյուղը բոլոր դաստակերտներով հանդերձ ու սահմաններով՝ եկեղեցուն նվիրեցին և ամենափրկիչ նշանի օրինակը այնտեղ ևս կանգնեցրին»:

«Իսկ երանելին, իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով, թագավորի անկեղծ օժանդակությամբ, սկսեց գավառում քարոզել, **ամենքին դուրս բերեց նախնիների ավանդություններից**, սատանայապաշտ դիվանական սպասավորությունից և մոտեցրեց Քրիստոսի հնազանդ ծառայությանը... դները այլակերպ ձևերով փախստական դարձան ընկնելով Խաղտյաց կողմերը: Երբ նրանց ևս հաստատեց, գնաց հասավ Անի անվանված ամուր վայրը՝ Հայոց արքաների գերեզմանների թագավորական կայանը: Այնտեղ **կործանեցին բագինը Ջևա Արամազդ աստծու, որ բոլոր աստվածների հայրն էր անվանված:** Այստեղ ևս տերունական խաչի նշանը կանգնեցրին, և ավանը իր ամրություններով հանդերձ եկեղեցուն ի ծառայություն նվիրեցին»:

«Դրանից հետո իսկույն ելան սահմանակից եկեղյաց գավառը, և այնտեղ երևացին դները Հայոց թագավորների մեծ և բուն մեհյաններում, պաշտամունքի վայրերում, Երեզ ավանի Անահիտի մեհյանում, ուր **դները վահանավոր զորքի նմանությամբ հավաքված մարտնչում էին և մեծագոչ աղաղա-**

կով լեռները թնդացնում: Նրանք փախստական դարձան, և նրանց փախչելու ժամանակ բարձրաբերձ պարիսպները կործանվեցին, հարթվեցին: Դարձի եկած զորքերով այնտեղ հասածները, սուրբ Գրիգորը թագավորով հանդերձ, փշրեցին Անահիտ դիցուհու ոսկի արձանը, ամբողջ վայրը քանդեցին, փչացրին, ոսկին ու արծաթը ավարի տվին: Այնտեղից Գայլ գետի վրայով այն կողմ անցան ու քանդեցին Արամազդի դստեր՝ Նանեի մեհյանը թիւ ավանում: Երկու մեհյանների զանձերը ավարելով՝ աստծո սուրբ եկեղեցու ծառայությանը նվեր թողեցին տեղերով հանդերձ»:

«Այս ամենը կատարվեց մարդասեր Աստծո կամքով, Գրիգորի ձեռքով»:

«Երբ եկավ հասավ Հայաստանի սահմանները, Գրիգորը լսեց, թե Վահեվանյան մեհյանը մնացել է Տարոնի երկրում՝ մեծագանձ մեհյանը լի ոսկով ու արծաթով և մեծամեծ թագավորների ձոնած բազում նվերներով: Պաշտամունքի ութերորդ հռչակավոր [վայրն] էր Վիշապաքաղն Վահագնի անվամբ, Մեծ Հայքի թագավորների զոհերի տեղը, Քարքե լեռան լանջին, Եփրատ գետի վրա, Տավրոս մեծ լեռան դիմացը, որը և պաշտամունքի վայրերի հաճախաշատ լինելու պատճառով անվանված էր Աշտիշատ: Քանզի այնժամ դեռևս շեն էին նրանում երեք բազինները, առաջինը՝ Վահեվանյան մեհյանը, երկրորդը՝ Ոսկեհատ Ոսկեծին աստվածուհու և բազինը այս անվամբ էլ կոչված էր Ոսկեհատ Ոսկեմայր դիցուհու, երրորդը, Աստղիկ դիցուհու մեհյանը, Սենյակ Վահագնի կոչված, որը հունական ձևով Ափրոդիտես է: Արդ՝ այնտեղ դիմեց սուրբ Գրիգորը, որպեսզի այն ևս քանդի, քանզի տակավին տգետ մարդիկ շփոթությամբ զոհ էին մատուցում այս մնացած բազիններին»:

«Եվ նա հրաման տվեց արքայագունդ բանակներին մի ամիս ժամանակով պասի ու աղոթքի մեջ մնալ: Սկսեց նա սովորական [ձևով], իր հետ այնտեղ բերված ընկերներով միասին, պասն ու աղոթքները, տքնությունները, արտասավալից պաղատանքները, խստակեցությունները, աշխարհահեծ հոգսերը, հիշելով հոգեպատում մարգարեի ասածը, թե «երբ հեծեծես, այն ժամանակ կապրես»:

«Քահանաներ կարգեց ամեն տեղերում և հրաման տվեց, որ պաշտվի միայն տեր Աստվածը՝ երկնքի ու երկրի արարիչը: Ամեն տեղ բազմացրեց Տիրոջ սեղանի սպասավորներին, բոլոր եկեղեցիներում յուրաքանչյուր սեղանին քահանաներ կարգեց: Այսպես էլ եպիսկոպոսներին Տիրոջ ժողովրդի գլխավորությունը հանձնեց և հրաման տվեց նրանց հավատարիմ առաջնորդությամբ լուսավորապես Քրիստոսի հոտին վերակացու լինել:»

«Այս միևնույն հոգեկրոն գործով շատ օրեր անց էր կացնում անբնակ տեղերում, Եփրատ գետի ակունքների մոտ, բնակվելով երկրի քարայրներում ու քարածերպերում, լեռների կատարներին, օրինակ առնելով մեծ մարգարե Եղիայից և երանյալ առաքինի Յովհաննես Մկրտչից, որոնց բարի գործերին նախանձավոր եղավ, նույն առաքինի ապրելակերպը և աստվածամուլի կյանքը իր անձի վրա ցույց տվեց» (Ագաթանգեղոս, 778-782, 784-786, 788, 809, 829, 838, 848):

Քաղվածքից պարզ երևում է, որ նոր կրոնը՝ քրիստոնեությունը, և պետական հեղաշրջումը լուրջ դիմադրության են հանդիպել: («Այնտեղ երևացին կերպարանափոխված դևեր, այրուծի ու բազմության ու հետևակազորի գնդի կազմության նմանությամբ, մարդկային կերպարանքով, նիզակներով ու զինանշաններով, զենք ու զարդով զինավառ, զարհուրեցրին նորահավատ մարդկանց», «և այնտեղ երևացին դևերը Յայոց թագավորների մեծ և բուն մեհյաններում, ուր դևերը վահանավոր զորքի նմանությամբ հավաքված մարտնչում էին և մեծագույն աղաղակով լեռները թնդացնում), սակայն ի դժբախտություն հայերիս, ի վերջո հայ ժողովուրդը ծնկի է բերվել («բոլոր դևերը, փախուստի դիմելով... մեծագույն լալով ասում էին, թե՛ ամբողջ երկրից մեզ փախստական արեց Յիսուսը): Եվ այս հանցագործությունը դարեր շարունակ անվանվել ու անվանվում է «քրիստոնեական դարձ», ինչով մշտապես հեզմանքի առարկա է դառնում հայ մարդը: Եկեղեցին, տիրանալով նաև Յայոց քաղաքական ու տնտեսական իշխանությանը, կարողացավ քրիստոնեական գաղափարախոսության քարոզչությունն այնպիսի բարձր հիմքերի վրա դնել, որ մատուցված ցանկացած գաղա-

փար ընդունվել է և այսօր էլ ընդունում ենք որպես անառարկելի ճշմարտություն: Օրինակ, Ազաթանգեղոսի աշխատությունը, որտեղ մանրակրկիտ նկարագրվում է **հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ֆիզիկական, հոգևոր և մշակութային ցեղասպանությունը**, դժբախտաբար, չի ընկալվում, քանզի դարեր շարունակ հետևողականորեն քարոզվում է, որ կատարվածն իբր հայ ժողովրդի ձակատագրում փրկարար դեր է ունեցել, ահա թե ինչու այդ օրերի եղերական նկարագրությունները չեն հասկացվում այնպես, ինչպես գրված է Ազաթանգեղոսի աշխատությունում: Ահա և ուղեղների լվացման՝ մարդկանց սերնդե-սերունդ ընտանի դարձնելու հետևանքը: Արդյո՞ք առիթ կա զարմանալու, որ Գրիգորի և Տրդատի կատարած այդ եղերական գործողություններից տասնյոթ դար հետո, նորանկախ Հայաստանի Հանրապետությունում, պետական հովանավորությամբ հրատարակված գրքում նրանց կատարածը ներկայացվում է որպես սխրանք. «Ազաթանգեղոսը եղել է ս. Գրիգոր Լուսավորչի և ս. Տրդատ թագավորի ժամանակակիցը և **նրանց սխրանքների** ականատեսը» (Մանկական քրիստոնեական հանրագիտարան, Երևան, 1998 թ., էջ 10):

Ըստ նկարագրածի, Գրիգոր «լուսավորիչը» իր ձեռքի տակ ունենալով Հայոց թագավորին, հետևաբար և պետական բանակը, կոտորել է հայ ազնվականությանն ու բնակչության զգալի զանգվածին, ուսուցչական-քրմական կազմին, հիմնահատակ կործանել է Հայոց պաշտամունքի տաճարներն ու պատմամշակութային հուշարձանները և մշակույթի մյուս արժեքները, դիվանը, գիտության կենտրոն-տաճարը, զավթել է դրանց և ազնվականության կուտակած ոսկին և մյուս հարստությունները, գլխավորապես, կալվածքները և ապա ընչազուրկ հայ մարդուն թելադրել իր կամքը. քրիստոնեություն ընդունողներին և քրիստոնեական եկեղեցի կառուցողներին ստրկորեն ապրելու իրավունք և ֆինանս ու հող է տվել: Եվ ի՞նչն էր Հայոց աշխարհն իր ոտքի տակ դրած Գրիգորի (Գրիգոր «լուսավորչի») և նրա ժառանգորդների հաղթանակների գրավականը: Դա, իշխանական լծակների հետ մեկտեղ, գրաված-զավթած-կողոպտած նյութական հարստություններն էին, այն հարստությունները, որոնք, ըստ նույն քրիստոնեական ուսմունքի, կեղծավորաբար համարվում են անպետք և, նույնիսկ, խիստ

վտանգաբեր: (Եկեղեցին այժմ էլ զեխությամբ ապրող ու զեխության մեջ խեղդված կառույց է. շքեղ, ոսկեզօծ գմբեթներով ու թանկարժեք իրերով լցված տաճարներ, ոսկյա ու արծաթյա կազմերով և գոհարներով զարդարված մատյաններ, ոսկյա և արծաթյա սպասք, ոսկեթել գործվածքներ ու զգեստներ, ադամանդակուռ թագեր ու գավազաններ...):

Հայաստանում վերը նկարագրված սպանդն ու մյուս ոճրագործությունները կատարելուց հետո Գրիգորը, հայոց բանակի ուղեկցությամբ, գնում է Կեսարիա, որպեսզի իր ուսուցիչ-ղեկավար Ղևոնդը իրեն Հայոց հայրապետ ձեռնադրի: Այդտեղից վերադարձի ճանապարհին նրա կատարած ոճրագործություններից մի հատված բերեմ, հենց իր՝ հայոց սրբերի սուրբ համարվող Գրիգորի (Գրիգոր լուսավորչի) գործընկեր, ասորի Ջենոբ Գլակի հիշատակարանից. «Տրդատը նրան շատ օրեր գանակոծեց և մեծամեծ տանջանքների ենթարկեց՝ կուռքերին զոհ չմատուցելու համար: Բայց երբ իմացավ, թե սա իր հոր՝ Խոսրովին սպանող Անակի որդին է, նրան նետեց Խոր Վիրապը, ուր մնաց տասնհինգ տարի: Դրանից հետո ամբողջ հայոց երկիրը դիվային հիվանդությամբ բռնվեց. նույնիսկ ինքը՝ թագավորը, վարազների հետ էր բնակվում... Երբ լրացավ նրանց պահոց օրերը, թափվեց նրանց վրայից վայրենական մորթին և նրանց դիվաբնակ մարմինները բժշկություն ստացան... Եվ տիրոջ հրեշտակի խոսքով՝ (նրանք) ցանկանում են հենց իրեն (Գրիգորին, -Յ.Ս.) կարգել հովիվ, որը և հանձն է առնում. ապա նրան է տալիս իշխաններից ոմանց՝ բազում գորքով և առաքում Կեսարիա քաղաք, Ղևոնդ մեծ հայրապետի կողմից ձեռնադրվելու... Ապա այստեղից էլ դուրս գալով անցանք մինչև Թորդան, ուր սպասավոր կարգեցինք Սուրտինոս վարդապետին՝ բոլոր գավառների համար: Այնտեղից էլ դուրս եկանք և ուզում էինք անցնել Կարին և Հարք գավառները: Բայց իշխաններից ոմանք սուրբ Գրիգորին հասկացրին, թե Տարոնի գավառում դեռևս կանգուն են երկու բազիններ, որոնք դեերին են պաշտոն մատուցում: Եվ նա էլ դիմեց եկավ, որպեսզի սրանք ևս կործանի: Եկավ Պալունյաց երկրի Կուառս գյուղաքաղաքը՝ Գիսանե ավանը: Բայց այնտեղ գտնվող քրմերից ոմանք անգետ մարդկանցից

լսեցին, թե վաղն առավոտյան կործանելու է մեծն Աստված Գիսանեն ու Դեմետրը. ուստի գիշերով դուրս եկան կռատներից, բոլոր գանձերը լցրին գետնափոր տներում ու իրենք լուր ուղարկեցին Աշտիշատի քրմերին՝ թե շուտափույթ հավաքեցեք պատերազմելու ընդունակ բոլոր մարդկանց և շտապեցեք առավոտ վաղ հասնել մեզ մոտ, որովհետև մեծն Գիսանեն կռվի է դուրս գալիս ուրացող իշխանների դեմ: Իսկ նա, որ գլխավոր քուրմն էր՝ անունը Արձան և իր Դեմետր որդին... Այնժամ Արձանն առաջ գալով սկսեց անարգել հայոց իշխաններին և ասաց.

-Առաջ եկե՛ք, ով դավանակործան մարդիկ, հայրենի աստվածներին ուրացողներ և թշնամիներ բարեփառ Գիսանեի: Իսկ Դեմետրը՝ որդին Արձանի, ասաց.

-Լսեցե՛ք մեզ, հայոց իշխաններ, այս քառասուն տարի է, ինչ ծառայում ենք մեր մեծ աստվածներին և քաջ գիտենք զորությունը նրանց: Գիտենք, որ իրենց սպասավորների թշնամիների դեմ իրենք են մարտնչում: Այժմ մենք չենք կարող պատերազմելով ձեզ ընդդիմանալ, որովհետև սա տունն է հայոց թագավորի, և դուք էլ արքայի իշխաններն եք: Բայց ահա, այս թող հայտնի լինի, որ թեև ձեզ հաղթել չենք կարող, սակայն գերադասում ենք մեռնել մեծ աստվածների զոհարանի վրա, քան թե նրանց ձեր ձեռքով կործանված ու ապականված տեսնել: Այնժամ մեջտեղ եկան Արձանն ու Անգեղ տան իշխանը... սրով հարվածեց և Արձանի գլուխը պարանոցից անջատեց: ...Ահա, երբ եկան և երկու կողմն էլ զուպար կազմեցին, քրմական զորքը վեց հազար ինը հարյուր քառասունվեց հոգի եղավ, իսկ հայոց իշխաններինը՝ յոթ հազար ութանասուն հոգի... Արծրունյաց իշխանը կտրեց Մեստակես անունով քրմապետի գլուխը... և երբ ետ դարձավ կռվի վայրը, տեսավ, որ Անգեղ տան իշխանն ու Դեմետրը մենամարտում են միմյանց դեմ. Դեմետրի վրա հարձակվելով կտրեց նրա գլուխն ու գցեց իր մաղախը: Այնուհետև ընկան զորքի մեջ ու անխնա սկսեցին կոտորել՝ հազար երեսուն մարդ անշունչ փռեցին: ...Երկար ժամանակ ս. Գրիգորը սգում էր զուր տեղը նահատակվածների համար: Երբ եկանք Իննակնյա վայրը, տեսանք կռատունը քարուքանդ արված և տասնհինգ կանգուն բարձրություն ունեցող արձանը չորս մասի բաժանված... քրմերին առհասարակ տանջելով-խոշտանգե-

լով մահվան դուռը հասցրինք» (Յովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989 թ., էջ 34-43):

Աննկարագրելի ողբերգություն. դավադրի՝ Գրիգոր «լուսավորչի» թելադրանքով Յայոց բանակը երկու մասի բաժանված, նախ միմյանց են կոտորում և ապա, իրենց ծնող ժողովրդին: Այսինքն՝ հայ ժողովրդին կոտորում է իր իսկ հենարանը՝ Յայոց բանակը:

Ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի գերագույն սուրբ համարվող պարթև Գրիգորը կարողացել է Յայոց բանակի և հայ ժողովրդի պառակտմամբ, միայն Գիսանեի (Անահիտի) տաճարի մոտ, հարյուրավոր հայորդիների մահվան պատճառ դառնալ և նրանց բոլորին նույն գերեզմանում թաղել (1030 հայ): Այս դրվագը Գրիգոր «լուսավորչի»՝ հայ ժողովրդին պատճառած չարագործության միայն մի փոքր պատառն է: Սակայն այդ չարագործությունը մենք չենք ընկալում և Գլակի հաղորդածից մեր մտքում դաջվում է միայն այն, որ իբր «երկար ժամանակ ս. Գրիգորը սգում էր զուր տեղը նահատակվածների համար» և ուրիշ ոչինչ:

Ըստ Ագաթանգեղոսի, Յայաստանում հիմնական կոտորածներն ու մյուս չարագործությունները նա կատարել էր մինչ Կեսարիա գնալը: Սակայն հայոց պատմագիտությունն ընդգծված կարծատեսությամբ ու կուրությամբ միայն գովաբանում ու փառաբանում է Գրիգորի «սխրանքը»: Նրան են վերագրում հայ ժողովրդի գոյությունն առ այսօր, իբր, եթե Գրիգոր «լուսավորիչը» մեզ քրիստոնյա չդարձներ, ապա մենք դարեր առաջ որպես ժողովուրդ անհետացած կլինեինք: Այսպիսին է Յայոց եկեղեցախոնարհ պատմագրության բռնած ուղին ու դոգմա դարձած եզրակացությունը: Պատահական չէ, որ Յայոց ցեղասպանություն իրականացնող պարթև Գրիգորի անվամբ այժմ ոչ միայն եկեղեցիներ ու տաճարներ են կառուցվում, այլ նաև նրա անվամբ են անվանակոչվում փողոցներ, ուսումնական հաստատություններ, առողջապահական կենտրոններ... Եվ ամեն առիթով նրան անվանում ենք լուսավորիչ: Ինչպես արդեն ասվել է, ավելի քան 1700 տարի է, ինչ հայ ժողովուրդն աշխարհը տեսնում է պարթև Գրիգորի մատուցած պրիզմայի միջոցով, և քանի դեռ այդ պրիզման չի փշրվել, մեր աշխարհընկալումը կմնա աղավաղված, խաթարված, իրականությունից հեռու, կեղծ: Այդ պրիզման է պատճառն այն բանի, որ, օրինակ,

մենք կարդում ենք Ագաթանգեղոսի աշխատությունը, սակայն բովանդակությունը չենք ընկալում, քանզի մեզ վարժեցրել են դեկավարվել մեզ համար ձևած և մեզ մատուցված կաղապարով: Այդ կաղապարը տասնյոթ դար շարունակ իր սև գործն է կատարում՝ հայ մարդուն մշտապես սաստելով, թե անկախ ամեն ինչից, Գրիգորը Հայոց մեծագույն բարերարն ու սուրբն է, իսկ այդպես չմտածող հայը՝ սրբապիղծ է ու հակահայ:

Ըստ Ջենոբ Գլակի հաղորդած տեղեկության, Գրիգորն իր հաշվետվությունն է ներկայացնում Կեսարիայում բնակվող իր ուսուցչին-դեկավարին-առաջնորդին՝ Ղևոնդ հայրապետին. «Եվ այս ամենը, ահա, ծանուցում ենք ձեզ, որպեսզի իմանաք, թե ինչպես այստեղ Քրիստոսի ջուրն իջնելով **մահը կործանվեց**, նույնպես և այստեղ սրա գալստյամբ **դժոխքի դռները խորտակվեցին**: ... Եվ հենց այստեղ (Տարոնում) էլ երկու տեղ մահն էր բույն դրել: Դրանցից մեկում, հատկապես, այնքան էր որջացել, որ սուրբ հոգին հայտնի դարձրեց, թե հենց դա է դժոխքի դուռ կոչվածը... և որի Գիսանե կուռքով ու նրա որդի Դեմետրով պարծենում են տեղի բնակիչները: **Ուստի ձեռնարկեցի շտապ կարգով կործանել սատանայի այդ պատկերները**. և նույն այդ մատուռի տեղում հաստատեցի ս. Կարապետի և Աթանագենես վկայի նշխարները» (Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989 թ., էջ 20):

Սկզբնաղբյուրներում ամեն ինչ պարզ շարադրված է, մնում է միայն սառնասրտորեն գնահատել կատարվածը, դեն շարտել հայ մարդու մտքին դրված կապանքը, պատռել չարագործի դիմակը: Գրիգորի գրած «մահը կործանվեց», «դժոխքի դռները խորտակվեցին», «սատանայի պատկերներ կործանելը» իրականում հայոց տաճարներն ու դրանց սրբություններն են, ինչպես նաև հայոց ավանդական հավատքից չիրաժարվող հայրը:

Կեսարիայից փորձառու Ղևոնդը Գրիգորին կարգադրություններ է անում. «Այլև բարյաց խրատներ եմ տալիս քեզ. Այդ Իննակնյա տեղանքը, որի մասին շատերն են ասում, թե **բարեբուխ է, հատկացրու այն որպես բնակության տեղ կրոնավորաց դասի համար**: Հաստատիր դրանք **այն նույն կանոններով, որ տեսար այստեղ մեր կրոնավորների մոտ**: Իսկ ձգնակեցության

կարգն էլ պետք է ուսանես ս. Անտոնից: Քեզ զորավիզ լինելու նպատակով ս. Անտոնի աշակերտ Եպիփանին էլ համոզեցի գալ այդ Իննակնյա տեղանքը, իր հետ բերելով քառասուն հոգի՝ խարազանազգեստ և ձգնակյաց, **աշխարհիկ կյանքից հրաժարված և պարկեշտ վարքով ապրողների:** Եվ դրոշմիր հավիտենական հուշարձան, որպեսզի գյուղաքաղաքների կամ դաստակերտների բնակիչներից ոչ մեկը **ալեքսանդրացիների օրինակով** չգործի՝ **ամենուրեք տերունական տաճար կառուցելով**, առանձին բնակվի: Հավաքիր նույն տեղում մի հարյուրի չափ մարդ, **հատկացրու նրանց համար մեծամեծ ու հարուստ գյուղեր և ավաններ**, որպեսզի վանքերի կարիքները նրանք բավարարեն և **իրենք էլ միայն ձգնությամբ ու աղոթքով ապրեն:** Խրատիր նաև այդտեղի իշխանավորներիդ, որպեսզի եկեղեցու զարդ լինեն՝ աղքատասեր, կրոնավորասեր ու երկյուղած: ... Տիմոթեոս և Եղիազարոս Եպիսկոպոսները դեռ այն ժամանակ գնացին, **երբ դուք բազիմներն էիք կործանում:** ... Եվ մեր կյանքն էլ թող տեր Աստվածը ձեզ պարգևի, **որ անձամբ առաջնորդելով հոտդ՝ կարողանաս բանավոր փարախը դեպի վերին Սիոնը փոխադրել»** (Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989 թ., էջ 22-23):

Նախ, քաղվածքում նշված «դեպի վերին Սիոն փոխադրել»-ը բացի հայ ժողովրդին մեռցնելու իմաստից արդյո՞ք այլ կերպ կարելի է հասկանալ:

Գրիգոր «լուսավորիչը» կրոնի քողի տակ կարողացել է ոչնչացնել Հայոց ազգային հավատքը, կոտորել, ինչպես և երկրից արտաքսել բնակչության զգալի զանգվածին ու տիրանալ հողատարածքների և այլ հարստությունների: Ահա այսպիսին է առ այսօր փառաբանվող քրիստոնեության մուտքը Հայաստան: Բերված քաղվածքից պարզ երևում է, թե ինչ բանիմաց ու հեռատես են եղել Հայաստանի նոր տերերը՝ Ղևոնդն ու Գրիգորը: Սակայն անմտություն է նրանց մեղադրել: Դժբախտաբար, ազգային ուժը չի կարողացել համախմբվել (ինչպես այսօր է) և Գրիգոր «լուսավորիչը», կարծում եմ, ձիշտ կլինի ասել՝ այն կազմակերպությունը, որի մեջ ընդգրկված է եղել նա, հաղթել է և Հայաստանը դրել իր ոտքի տակ, այն էլ, ինչպես տեսնում ենք, թվում է, թե՛ հավերժ:

Ըստ Չենոբ Գլակի, Գրիգորը «Տրդատի համաձայնությամբ, հատուկ կանոններ է սահմանում ժողովրդից **տասանորդ հարկ** վերցնել քահանաների համար, քահանաներից էլ՝ եպիսկոպոսների համար, նաև երկրի պտուղներից ու զոհաբերությունից բաժին՝ ինչպես եկեղեցու, նույնպես և նրա ամբողջ սպասավորության համար» (Տարոնի պատմություն, էջ 13), ինչը լիովին համապատասխանում է Աստվածաշնչի տառին ու ոգուն. «Ի՞նչ է նշանակում. «Պատվիր Տիրոջը քո արդար վաստակից»: Պատասխան. Չերթով առաջ է բերում գործնական արդարությունը: Այժմ խոսում է Աստծո ընծաների մասին, որն է **տասանորդը** և պտուղների երախայրիները, ինչպես ասում էր Չակոբը. «Եթե ինձ կերակուր և զգեստ տաս, Տեր, կտամ քեզ տասանորդ ամեն ինչից» (Ծննդոց 28:20): Եվ հետո Աստված Մովսեսի միջոցով օրենք սահմանեց ժողովրդին՝ **տասանորդը** տալ («Ամէն տարի քու ցանած սերմիդ արդիւնքէն, արտէն ելած ամէն արմտիքներէն, անպատճառ **տասանորդ** պէտք է տաս», Բ Օրինաց 14:22): Եվ երբ ծուլացան, Մաղաքիա մարգարեի միջոցով ասում է. «Մի՞թե մարդ Աստծուն կխաբի, և ինչո՞վ կխաբի, չէ՞ որ **իմ տասանորդները** ձեզ մոտ են, և դա ձեր տներում հափշտակություն կլինի, և երկինքը անձրև չի տա ձեր վրա». (Մաղ. 3:8-9) (Գրիգոր Տաթևացի, Սողոմոնի գրքերի մեկնությունը, Երևան, 2009 թ., էջ 27):

Գրիգոր «լուսավորիչը» միայն եկեղեցու համար հարկեր գանձելու նպատակով չէ, որ կանոններ ստեղծեց: Նա նաև հիմք դրեց Օրենքի ուժով Չայոց ավանդական հավատքի հետևորդներին հետապնդելուն և նոր կրոնը՝ քրիստոնեությունն ամրապնդելու համար պատժամիջոցներ սահմանելուն: Գրիգորին վերագրվող «Կանոններում» (301-325 թթ.) ասվում է. «Չեթանոսների տուն գնացողը և այնտեղ ուտող-խմողը թող երեք տարի ապաշխարի և ապա հաղորդվի»: Նաև՝ «Եթե մանուկը առանց մկրտության մեռնի. եթե մեղավորը ծնողներն են, թող նրանք 7 տարի ապաշխարեն. քահանաները և հոգաբարձուները նույնպես թող պատժվեն» (Ռ. Ավագյան, Չայ իրավական մտքի գանձարան, Երևան, 2001 թ., էջ 95-96):

Եթե ընդունենք (ինչպես ցույց են տալիս Ագաթանգեղոսի և Չենոբ Գլակի աշխատությունները), որ նշված տարիներին պարթև

Գրիգորն էր Հայոց իրական թագավորը, ապա կարելի է եզրակացնել, որ բացի քրիստոնեությունը մերժող հայերին արտաքսել-սպանելուց, քրիստոնյա դարձած, սակայն դավանաբանական կարգը լիովին չկատարող հայը օրենքից դուրս է համարվել: Վերջին հողվածից հասկացվում է, որ երեխայի նկատմամբ եկեղեցուն տիրոջ իրավունք է վերապահվում: Իսկ յոթ տարի ապաշխարելու սարսափազդու հեռանկարը, պարզ է, որ պետք է ստիպեր ծնողներին շուտափույթ կնքելու, թերևս ճիշտ կլինի ասել՝ մկրտելու, իրենց նորածնին: Գրիգոր «լուսավորչի» 30 հողված (գլուխ) պարունակող «Կանոններից» մի քանիսը վերաբերում են կուսությանը. «Բ. Կուսակրոն քահանան եթե կին առնի, թող հինգ տարի դրսում, երկու տարի ներսում ապաշխարի, ապա հաղորդվի», «Ե. Եթե ամուսիններից մեկը երկակ է, մյուսը՝ կույս, թող երկու տարի դրսում, մի տարի ներսում ապաշխարեն», «ԺԳ. Ով կուսություն խոստացավ Աստծուն և պոռնկություն արավ, թող յոթ տարի ապաշխարի», «Լ. Կույսը, մենակյացը թե իրեն Աստծուն է նվիրում, չհամարձակվի ամուսնանալ, իսկ ամուսնացողը թող հաղորդությունից մերժվի, նրանց ընդունելությունը թող կախված լինի եպիսկոպոսի մարդասիրությունից»: Այս կանոններից պարզորոշ հասկացվում է, որ Գրիգորը քրիստոնեությունը Հայաստանում հաստատելուց անմիջապես հետո ամլությունը քարոզող կանոններ է ստեղծել, ինչը լիովին համապատասխանում է քրիստոնեական կրոնի գաղափարախոսությանը և իր ուսուցչի՝ Ղևոնդի հորդորին՝ «որ անձամբ առաջնորդելով հոտդ՝ կարողանաս բանավոր փառախորդ երեխի վերին Սիոնը փոխադրել»:

Գրիգորի մահից հետո կրոնական իշխանությանը ժառանգաբար տիրացած, նաև Հայաստանի աշխարհիկ իշխանությունն իրենց ենթարկած նրա զավակներ-թոռներ-ծոռներն աստիճանաբար խստացնում են պատժամիջոցները: Արդեն գործի են դրվում ծեծը, աղվեսադրոշմը, ուրկանոցում բորոտների հետ բնակեցնելը: Առավել խիստ են Հայոց բուն հավատքի հետևորդների պատիժները: Օրինակ, Շահապիվանի համաժողովում մծղնեության դեմ ընդունված (444 թ.) կանոններում ասվում է. «Եթե մեկը մծղնեության (այսինքն՝ մեր ազգային կրոնի՝ արևապաշտության-միհրականության, որի հետևորդները նաև կոչվում էին արևորդիներ, -Յ.Ս.)

մեջ գտնվի՝ լինի դա երեց, սարկավագ կամ արեղաներից, պիտի հոգևոր կոչումներից կարգալույծ լինի, պիտի աղվեսադրոշմ դրվի ձակատին և տարվի ձգնավորների մոտ ապաշխարության: Իսկ եթե կրկին նա գտնվի մծղնեության մեջ, նրա **երկու ջիւերը պիտի կտրել և ուրկանոց տանել**, քանի որ **«Մարդը պատվի մեջ էր և չհասկացավ»**: Այդ նույն պատիժը վերաբերում է նաև արեղաներին: Իսկ եթե տղամարդն իր կնոջ և որդիներով գտնվի այդ աղանդի մեջ, տղամարդկանց, կանանց և գիտակցության հասած մանուկների ջիւերը պետք է կտրել, **աղվեսադրոշմ դնել ձակատներին և տանել գողենոց՝ ապաշխարության համար: Իսկ այն մանուկները, որոնք դեռ չեն գիտակցում պղծությունը, նրանք պետք է վերցվեն և տրվեն Աստծու սուրբ պաշտոնյաների ձեռքը, որպեսզի կերակրեն և սովորեցնեն նրանց ճշմարիտ հավատը և Տիրոջ երկյուղը»** (Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981 թ., հատոր 1, էջ 594):

Ինչպես տեսնում ենք, եվրոպական ու ամերիկյան քրիստոնեական եկեղեցիների համեմատությամբ մարդասիրական համարվող Հայոց եկեղեցին (սա իրականում կարելի է անվանել Հայաստանում և հայկական միջավայրում գործող համաշխարհային քրիստոնեական եկեղեցու մասնաձյուղ, իմա՝ սիոնիզմի հենակետ) խարույկի փոխարեն կիրառում էր դանակ կամ սուր, օրինակ, ոտքերի ջիւերը կտրելու համար: Ինչ է ստացվում. բնությունը, կյանքն ու բանականությունը փառաբանող, բարեկեցիկ, լիարժեք, արժանապատիվ կյանք քարոզող Հայոց ազգային հավատքը ոչնչացվեց ավելի քան 1700 տարի առաջ, իսկ դրան փոխարինած օտար ու քայքայիչ գաղափարախոսությունը մարմնավորող կառույցն առ այսօր կոչվում է Հայոց եկեղեցի: Այժմ էլ փորձում են նույն ձակատագրին արժանացնել Հայոց դպրոցին. անվամբ՝ Հայոց, սակայն իրականում՝ ապազգային ու հակամարդկային:

Միայն ջիւերը կտրելու պատիժն արդեն ցույց է տալիս քրիստոնեական ուսմունքի անօգուտ, անընդունելի և նենգ լինելը:

Կարծում եմ, ջիւերը կտրելուց ու բորոտանոց տանելուց պակաս պատիժ չէ մանուկների միտքը-մտածելակերպը խեղելը՝ սովորեցնել «ճշմարիտ հավատը և Տիրոջ երկյուղը»: Իսկ **«Մարդը պատվի**

մեջ էր և չհասկացավ» արտահայտությունը, թերևս, հիշեցնում է թալմուդական այն դրույթը, թե Երկրագնդի վրա եղած այն ամենը, որ շնչում է ու հրեաներին չի պատկանում, պետք է ոչնչացվի:

Ռ. Ավագյանը «Չայ իրավունքի մտքի գանձարան» աշխատության մեջ (Երևան, 2001 թ., հ. 1, էջ 130) գրում է, որ մծղնեական ծխականները, որպես հավատացյալներ, ժխտում էին սրբերին, պարսավում քրիստոնեական օրենքներն ընդհանրապես: Սակայն կանոնում ոչինչ չի ասվում այն մասին, թե կոնկրետ ինչ էին քարոզում մծղնեականները: Բայց այն, որ նրանք վտանգ էին ներկայացնում քրիստոնեական եկեղեցու համար, վկայում է այն փաստը, որ մծղնեության մեջ մեղադրվող շինականներից և կրոնավորներից մինչև արքունական անձինք, բոլորը ենթարկվում էին խստագույն պատիժների:

Ղևոնդ Ալիշանը ցույց է տվել, որ մծղնեականները արևապաշտներն են, իմա՝ միհրականները, որոնք անվանվում են նաև արևորդիք: Արդեն հասկանալի է դառնում, թե եկեղեցին ինչու է այդքան դաժան պատժամիջոց սահմանել հատուկ մծղնեականների՝ արևապաշտների-արևորդիների-միհրականների համար: Հիշենք, որ եկեղեցին Արևը սատանա է համարում (միայն այժմ է հասկանալի դառնում, թե Արևը ինչու է փոքրատառով գրվում), որը, ըստ եկեղեցու, մարդկանց ջերմացնելով հեռացնում է Եհովայից ու Քրիստոսից: Անհրաժեշտ են համարում Ալիշանի աշխատությունից մեջբերել արևապաշտներին վերաբերող հետևյալ քաղվածքը. «Ավելի դիտելին ու զարմանալին այն է, արևապաշտությունը առավել, քան այլ հավատքներ, ինչ-որ ձևով տևական ու խորն է արմատավորվել մեր ազգակիցների մեջ: Եվ այլևայլ ժամանակներում երևացել են արևորդիներ, որ գուցե մինչև հիմա էլ կան: 11-րդ դարի կեսին Գրիգոր Մագիստրոսը այս անունով է հիշում նրանց և համարում է զանդիկ մոգերից առաջացած. «Ոմանք ի նոցանէ դեղեայք Արեգնապաշտք, զոր Արեւորդիսն անուանեն. եւ ահա են յայդմ գաւառի (Միջագետաց) բազումք, եւ քրիստոնեայս զինքեանս յայտնապէս կոչեն. բայց եթէ որպիսի՞ մոլորութեամբ եւ անառակութեամբ վարին, գիտեմք զի ոչ ես անտեղեակ»:

Նրանից մեկ դար անց, նրա Ծնորհալի շառավիղ ս. Ներսեսը Սամոսատի կողմերի արևորդիների մասին հաստատորեն ասում է,

թե հայոց սերունդներ են, որոնք «ոչ կամեցան լուսաւորիլ աստուածային լուսովն ի ձեռն Լուսաւորչին մերոյ», ու քահանաներին պատվիրում է, որ նրանցից դարձի եկողներին ընդունելու ժամանակ նրանց երեսները ուղղեն արևմուտք, երեք անգամ թքել տան սատանայի երեսին, նաև խրատեն. «ՁԱրեգակն մի այլ ինչ համարիք՝ քան թէ ճրագ աշխարհի, զոր ստեղծ արարիչն Աստուած, և եդ գնալ յերկինս լուսատու լինել երկրի»: Արևի պաշտամունքի կամ նրան պատվելու Մագիստրոսի հիշատակած անառակությունը քիչ ավելի է բացատրում մեր սուրբ հայրապետը: Մագիստրոսից ոչ շատ առաջ Ալավկի որդի Դավիթ վարդապետը հայտնապես ասում է. «Պայլիկեանքն կամ Սծղնայք՝ Արուիորդոց ազգն է»:

Երկու դար անց՝ 14-րդ դարի կեսին, Մխիթար կաթողիկոսը Յոռմի պապին գրում էր, թե այն ժամանակներում ևս արևորդիներ կային Մանագկետում, որը Շնորհալիից ու Մագիստրոսից շատ դարեր առաջ էլ թոնդրակյան աղանդավորների և նրանց նմանների բույն էր... Մխիթար Ապարանցին գրում է. «Են ոմանք Յայկազեանք եւ հայ լեզուաւ Արեւապաշտք եւ կոչին Արեւորդիք. սոքա ոչ ունին գիր եւ դպրութիւն, այլ ասանդութեամբ ուսուցանեն հարքն զորդիսն իրեանց, զոր նախնիք նոցա ուսեալք էին ի Ջրադաշտ մոզէ՝ անդրուշանին պետէ. եւ ընդ որ կողմն երթայ արեգակն՝ ընդ այնմ երկրպագեն, եւ պատուեն զծառն Բարտի և զՇուշան ծաղիկն եւ զԲամբակին եւ զայլսն, որ գդէմս իրեանց շրջեցուցանեն ընդդէմ արեգականն. եւ նմանեցուցանեն զինքեանս նոցա՝ հաւատով եւ գործով բարձր եւ անուշահոտ. եւ ամենն մատաղ ննջեցելոց. եւ տան զամենայն հասս Յայ երիցու: Սոցա առաջնորդն կոչի Յազըրպետ. եւ իւրաքանչիւր ամի երկու անգամ կամ աւելի՝ ամենքեան այր եւ կին, ուստր եւ դուստր, ժողովին ի գուբ մի յոյժ խաւարին»: Ծաղկաբան երգիչ Դավիթ Սալաձորցին հիշում է. «Սինձն, Իրիցուկն ու Եղըրդիկն, կու սպասեն Արեւորդուն. Նոցա երամն ուրիշ է, կու շրջին զօրն հետ արեւուն» (Դ. Ալիշան, Յայոց հին հավատք կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002 թ., էջ 53-54):

Ամեն առիթով ասվում է, որ Յայաստանյայց առաքելական եկեղեցին իր մարդասիրությամբ իբր տարբերվել է քրիստոնեական աշխարհի շատ և շատ ազգային կոչված եկեղեցիներից, և օրինակ

է բերվում, որ մարդկանց խարույկի վրա կիզող ինկվիզիցիան Յայաստանում չի գործել: Սակայն հարց է ծագում, թե արդյոք ավելի մարդասիրական չէ՞ մարդուն այրելով վերացնելը, քան երկու ոտքերի ջիլեր կտրելը, ձակատին աղվեսադրոշմ դնելը և բորոտանոցում պահելը, այն էլ իր զավակների հետ միասին (Գրիգորի Յայաստան ներխուժելուց ավելի քան տասնյոթ դար է անցել, սակայն այսօր էլ եկեղեցու ծիսակատարությանը մասնակից նույնիսկ ոչ դատարկապաշտը՝ բանական մարդը, «շունչը պահած» ու խոնարհ լսում է քարոզի մեջ ասվող և անառարկելի ճշմարտություն ներկայացվող՝ հատուկ նպատակով հորինված հեքիաթ-առասպելները և չի համարձակվում որևէ կերպ արտահայտել իր անհամաձայնությունը. կարծում եմ, այն պատճառով, որ եկեղեցու պատժի ու աններում վերաբերումի սարսափն արդեն ամրագրված է մեր ենթագիտակցության մեջ):

«Աստծու ընտանի» լինելու հիպնոսն ու թմրադեղը (նարկոզը) մեզ գրկել են դատողություն անելուց և մեր մտքին ու կյանքին տեր լինելու կարողությունից: Օրինակ, հայ ժողովրդի գլխին եկած այն ամենաեղբրական ու ձակատագրական օրերից անցել է ավելի քան տասնյոթ դար, սակայն այսօր էլ դրա մասին մեր մտածածն ու ընկալածը Գրիգոր «լուսավորչի» մշակած կաղապարով անցած ու չափորոշված տեսակետն է: Անգամ գիտության ու լուսավորության տարածվածության պայմաններում մենք համարձակություն չունենք մատնացույց անելու, թե որտեղ է թաղված «շան գլուխը», երբ այդ տեղը համարյա բոլորը գիտեն: Յասկանալի է, որ մեր համարձակության բացակայությունը պայմանավորված է եկեղեցու ստեղծած սարսափի դաշտով: Եկեղեցին Գրիգորին և Տրդատին սուրբ է հռչակել (կարելի է թերևս գուշակել. Գրիգորին՝ որպես տաղանդաշատ ու անհավանական թվացող նվաճումների հասած գործակալի, իսկ Տրդատին՝ որպես այդ գործակալի անսահման իշխանություն ունեցող կամակատար զոհի): Ստացվում է, որ Յայաստանյայց առաքելական-գրիգորյան-լուսավորչական եկեղեցու համար բացարձակորեն նշանակություն չունի, որ, օրինակ, Տրդատ թագավորը, թեպետև ականա, աներկբայորեն դարձել էր հայ ժողովրդի թշնամի («Տրդատը իսկույն տիրաբար հրաման տվեց, ամենքի հա-

վանությամբ, գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի, հնամենի և նախնիների ու իր կողմից Աստված անվանված չաստվածները անհիշատակ դարձնի, մեջտեղից ջնջի: Ապա ինքն իսկ թագավորը, ամբողջ զորքով հանդերձ, Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը, ավերելու այնտեղ Անահիտ դիցուհու բազիլը»), սակայն ամեն առիթով նա փառաբանվում է և նրան հիշելիս միշտ հավելվում է «Մեծ» պատվանունը: Իսկ այն, որ պարթև Գրիգորը Յայոց հայրենի աստվածներից անհիշատակ դարձրեց, մեջտեղից ջնջեց, Յայոց աշխարհը տակնուվրա արեց, զարմանալու և նրան կշտամբելու ոչ մի հիմք չկա, որովհետև նա այդպես էլ պետք է աներ, քանզի նա Յայաստան էր եկել հենց այդ նպատակով:

Միայն պետք է ամաչել, որ մենք Գրիգոր «լուսավորչին» ոչ միայն Յայոց եկեղեցական սրբերի շարքումն ենք դասում, այլև նրան համարում ենք նաև ընտիր Յայկազուն. «Չկա հայ մը, որ նոյն իսկ իր մանկական հասակին՝ երբ գիտակցութիւնն արթննայ ու իր հայկազն արեան բաժակ սրտին վրայ՝ սկսի կարողալ իր սիրուն համազգի անունները, անոնց սկիզբը չտեսնէ **նսկի տառերով գրուած այսպիսի անուն մը՝ Լուսավորիչ:** ... այդ խորհրդաւոր բառի ծանօթութեան հետ կ'իմանայ եւս՝ թէ շատ ու կարեւոր իմաստներ կը բովանդակէ նա իր մէջ ... եւ կ'ըմբռնէ թէ այդ անձն իրեն եւ իր ազգին լոյս տուեր է, հաւատքի ու ճշմարտութեան լոյսը, ուսկից անելի մեծ բարիք չկայ երկրիս վրայ» (Յ. Թորոսեան, Ընտիր Յայկազունը, Վենետիկ, 1941 թ., էջ 59):

Զավեշտալի ողբերգություն. հայ ժողովրդի ամենապաշտելի երկու սուրբն էլ, Գրիգոր «լուսավորիչն» ու Յայոց արքա Տրդատ Մեծը, նույն գործն են կատարել: Այդ ժամանակներում տարածաշրջանում, որոշակի կշիռ ու հեղինակություն ունեցող հայ ժողովրդին պարտադրեցին փոշիացման ու դանդաղ կործանման ուղին:

Եվ դարեր շարունակ հայ մարդուն համոզել ու համոզում են, որ կատարված սպանողը, Յայոց մշակույթի ոչնչացումը, հայ մանուկներին հակահայ դարձնելը և մյուս նողկալի արարքները կատարվել են, իբր, հանուն հայ ժողովրդի բարգավաճման ու հարատևման, և այն, ինչ տեղի է ունեցել, կատարվել է «մարդասեր Աստծու կամքով, Գրիգորի ձեռքով», հավելեմ նաև՝ «Յայոց Մեծ

կոչված Տրդատ թագավորի անկեղծ օժանդակությամբ» (պետական և եկեղեցական քարոզչությունները նշված մանրամասները շրջանցում են): Հասկանալի է, եթե Հայաստանյայց առաքելական եկեղեցին ու Հայոց պետությունը քարոզել ու քարոզում են, որ այդ օրերին կատարված եղերական գործերը *մարդասեր Աստծու կամքով* է կատարվել, ապա հանրության համար վերը նշված սպանդն ու մշակույթի ոչնչացումը դառնում են անընկալելի, իսկ Գրիգորը՝ սրբանուն է: Իրողությունը մշտապես կեղծ ներկայացնելն է, որ դարեր շարունակ, շատ հարցերում, բթացրել է հայ մարդուն, և, դժբախտաբար, դրա կասեցման հեռանկարը չի երևում:

Փաստորեն, Հայոց պատմագրությունը նույն անձը մարմնավորող երկու Տրդատ թագավոր ունի (մինչև 301 թվականը և դրանից հետո): Մեկը անսովոր մեծ ուժի, կամքի ու քաջության տեր, խիզախ, Հայաստանը թշնամուց ազատագրող ու Հայոց թագավորությունը-պետականությունը վերականգնող, հայ ժողովրդի ու Հայոց հավատքի նվիրյալ Տրդատ Մեծն է, մյուսը դյուրահավատ, կամազուրկ, հայ մարդուն իր տնից-երկրից արտաքսող ու սպանող, Հայոց բուն կրոնը ուրացող, հայոց մշակույթը ոչնչացնող, անձը, հայրենիքը, ազգը մերժող, աղքատությունն ու մահը փառաբանող կրոնը պաշտոնական դարձնող և այդ կրոնը քարոզող, ազգային հարստությունները, գլխավորապես կալվածքներն օտարներին հանձնող, հայ մանուկներին և, ընդհանրապես, հայ մարդուն դեպի մտախեղություն ուղղորդող Տրդատն է:

Առ այսօր, հայ ժողովրդին մատուցվել ու մատուցվում է միայն առաջիկա՝ Տրդատ արքայի մեծագործությունները, այդ թվում նաև՝ քրիստոնեությունը պետական կրոն դարձնելը:

Ազաթանգեղոսը գրում է, որ կողոպտած ոսկին, արծաթը և մյուս հարստությունները Գրիգոր «լուսավորիչն», իբր, բաժանել է աղքատներին: Եթե այդպես է եղել, ապա ինչպե՞ս գոյացան նույն Գրիգորի և նրա թիմակիցների՝ այլևայլ երկրներից եկածների անասելի հարստությունները: Հայ ժողովրդից հափշտակած-ավարառած հարստություններից Գրիգորին բաժին հասած միայն հողատարածքների մասին որոշ պատկերացում կազմելու համար մի քաղվածք բերեմ Փավստոս Բուզանդի աշխատությունից, որ-

տեղ խոսվում է Գրիգորից այդ կալվածքները ժառանգած Ներսեսի ունեցվածքի մասին. «Սուրբ Ներսեսը շրջում էր իր ձեռական իշխանության մեջ: Որովհետև տասն և հինգ գավառ այդ ձեռական իշխանությունն ուներ ի բնե իբրև **հատուկ իրենց սեփական:** Գլխավոր գավառներն էին Այրարատ, Դարանաղի, Եկեղյաց, Տարոն, Բզնունիք, Ծոփք, և նրանց մեջ ու նրանց շուրջ եղածները» (Փավստոս Բուզանդ, Յայոց պատմություն, Երևան, 1987 թ., էջ 179): Ըստ Յայկական համառոտ հանրագիտարանի, միայն Այրարատի տարածքը կազմել է ավելի քան 40 հազար քառակուսի կիլոմետր: Ինչպես տեսնում ենք, Գրիգոր «լուսավորչի» ավտորժակն անհագ է եղել: Այստեղ հարց է առաջանում, թե մի օտարական ինչպե՞ս է կարողացել հազարավոր քառակուսի կիլոմետր հողատարածք իր անձնական սեփականությունը դարձնել կամ այդ անծայրածիր հողերը՝ ոչնչացված մեհյանների՞, գլխատված հայոց իշխանական տների՞, Յայաստանից փախած ու արտաքսվածների՞, թե՞ քրիստոնեությանը հարմարված (քրիստոնեություն ընդունած) բնակչության հարստահարմամբ զավթած հողերն են եղել: Յայոց սուրբ համարվող Գրիգոր «լուսավորչի» կալվածքների առումով հայ պատմիչները գրում են, որ ո՛չ Գրիգոր «լուսավորիչը» և ո՛չ էլ նրա ժառանգորդները, իրենց սեփական հողատարածքի լայնածավալ լինելու պատճառով, նույն տարում չեն կարողացել դրանք ամբողջությամբ շրջագայել ու տեսնել:

Միայն Գրիգորի ժառանգորդները չէին, որ հարստության մեջ «խեղդվում» էին: Օրինակ, Ուռհայեցին, նկարագրելով պարսիկների կողմից Յայոց Արծն քաղաքի կոտորածն ու կողոպուտը, գրում է. «Սենք շատերից բազում անգամ լսել ենք Դավթուկ քորեպիսկոպոսի մասին, թե նրա գանձատունը, որն Աբրեհմի (պարսից զորապետ) ձեռքն անցավ, քառասուն ուղտի վրա բարձեցին: Դավթուկի տնից ութ հարյուր վեցկե եզ էր դուրս գալիս» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991 թ., էջ 113):

1045 թ. Յայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձի ջանքով վերացվեց Բագրատունիների Յայոց թագավորությունը: Ուռհայեցին նկարագրում է Պետրոսի հարստությունները. «Երբ հայրապետական աթոռին նստած էր տեր Պետրոսը, իսկ աթոռն էլ գտնվում էր Յայաստանում, նա ուներ հայոց թագավորներից որպես հայ-

րենիքի նվեր ստացած կալվածքներ՝ **հինգ հարյուր** անվանի, ընդարձակ, շահութաբեր և շատ ընտիր գյուղեր... Հայրապետական աթոռը ոչնչով չէր զիջում հայոց թագավորական գահին: Եկեղեցիներն ու հայրապետանոցը լի էին բազում և անհամար, զարմանալի մեծության զարդերով, որոնք նախկին թագավորներն էին հաստատապես նվիրել» (նույն տեղում, էջ 167):

Այս հարստությունների տերը Հայոց տխրահռչակ կաթողիկոս, հայ ժողովրդի թշնամի Պետրոս Գետադարձն է եղել (մեռել է 1058 թ.), ով աչքի է ընկել թե՛ իշխանատենչության, թե՛ արծաթասիրության մոլուցքներով և թե՛ հայրենիքի դավաճանության գործում: Ըստ Մատթեոս Ուռհայեցու, Պետրոսը 1038 թ. լքել է կաթողիկոսական աթոռը և վերադարձել է, երբ Հայոց թագավորն ու բոլոր նախարարները նամակով նրան հաղորդել են, որ «իրենք կենթարկվեն նրա բոլոր **հրամաններին** և ունկնդիր կլինեն նրա լուսավոր վարդապետությանը»: 1045 թ. Պետրոս Գետադարձը, Վեստ Սարգսի գործակցությամբ, համոզել է Հայոց Գագիկ թագավորին Բյուզանդիա գնալ, իսկ մինչ այդ Մոնոմախ կայսրին հորդորել է Գագիկ թագավորին Կոստանդնուպոլիս հրավիրելու կեղծ բարեկամական նամակ ուղարկել: Գագիկ թագավորը Մոնոմախից այդպիսի բովանդակությամբ նամակ ստանալով, հրաժարվում է Կոստանդնուպոլիս գնալ, սակայն տխրահռչակ կաթողիկոսը կարողանում է նրան համոզել: Ուռհայեցին գրում է. «Նրանք (Պետրոս Գետադարձն ու մյուս դավադիրները, -Յ.Ս.) Գագիկ թագավորին սարսափելի երդումներ տվեցին, աստծո որդու մարմնի և արյան սուրբ խորհուրդը բերեցին և կենարար արյան մեջ գրիչը թաթախելով՝ երդման գիր շարադրեցին: Դրա վրա հայոց Գագիկ թագավորը գնաց Կոստանդնուպոլիս՝ Մոնոմախ կայսեր մոտ: Այդ ժամանակ նենգ աստվածուրացները, ովքեր սոսկալի երդումը հաստատել էին աստծո արյամբ, Անի քաղաքի քառասուն բանալիները ուղարկեցին Մոնոմախ կայսեր, հետն էլ մի նամակ, թե Անի քաղաքը և ողջ Արևելքը քո սեփականությունը դարձան» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991 թ., էջ 105): Մոնոմախը Պետրոսին ոսկե աթոռ և կայսրությունում բնակավայր է նվիրել, բուն Հայաստանում Հայոց թագավորությունն այլևս չվերականգնվեց, իսկ առ այսօր մենք՝ հայերս, տոնում ենք Պետրոս Գետադարձի տոնը:

Ազաթանգեղոսի և Չենոբ Գլակի վկայություններից պարզ երևում է, որ քրիստոնեությունը Չայաստանում հենց սկզբից դրվել է ռազմաքաղաքական և, ամենագլխավորը, տնտեսական հիմքի վրա:

Գրիգոր «լուսավորչի» կատարվածի մասշտաբայնությունից ելնելով, կարելի է եզրահանգել, որ նրա դաստիարակությունը և Չայաստանում իրականացրած նրա գործողությունները հավանաբար կատարվել են համակարգված ծրագրի շրջանակներում, որ Գրիգորը մի զորեղ կազմակերպության անդամ է եղել: Գրիգորը Չայաստանում ծավալվելիս, հավանաբար, իր ձեռքի տակ ունեցել է մանրակրկիտ մշակված ծրագիր-նախագիծ և դրա իրականացման նպատակով նաև անհրաժեշտ ֆինանսներ և ամենագլխավորը՝ նախօրոք պատրաստված կադրեր, որոնք եղել են ոչ միայն քարոզիչ-ուսուցիչներ, այլև՝ պետական կառավարման, հոգեբանության, դիվանագիտության, ռազմական, քաղաքական, իրավունքի, տնտեսության և այլ բնագավառների մասնագետներ (այստեղ չի խոսվելու Գրիգորի ղեկավար լինելու կամ կենտրոնից կառավարվելու մասին): Չակառակ պարագային Գրիգորը չէր կարողանա Չայաստանում այդ մակարդակի հեղաշրջում կատարել, առավել ևս համակարգել ու կանխորոշել հայ ժողովրդի ապագան, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ դանդաղ քայքայում ու դանդաղ մահ: Չէր հարատևի նաև յուրաքանչյուր հայ մարդուն պարտադրաբար մատուցված գրիգորյան ոսպնյակ-պրիզման և լսածը կարգավորող գրիգորյան գտիչը: Չազար յոթ հարյուր տարի է, ինչ հայ մարդը այդ պրիզմայով է տեսնում աշխարհը և այդ լսողության գտիչով ըմբռնում մատուցված գաղափարները, հետևաբար և գրկված է իրական ինքնաճանաչումից ու իրական աշխարհընկալումից, մինչդեռ իրեն համարում է արժանապատիվ ու բանական մարդ: Գրիգորին եպիսկոպոս ձեռնադրելուց հետո Տրդատին հղած նամակում Ղևոնդը Կեսարիայից գրում է, որ «նրան, որին անգիտությանբ արհամարհեցիք, ձեզ հաստատեց **անշարժ գիտության մեջ**» (Ազաթանգեղոս, 823), այսինքն՝ հա՛յ ժողովուրդ, քեզ թմբի՛ր ենք մատուցել: Իսկ մինչ այդ, երբ Գրիգորը, իմա՝ նրա հովանավոր կազմակերպությունը, Չայաստանին պարտության մատնեց, նույն Ղևոնդը Գրիգորին գրում է, թե «մեր կյանքն էլ թող տեր Աստվա-

ծը ձեզ պարզևի, որ անձամբ առաջնորդելով **հոտդ՝** կարողանաս բանավոր փարախը դեպի **վերին Սինը փոխադրել**»: Չասկանալի է, որ միայն «անշարժ գիտության», այսինքն՝ թմբիրի մեջ ապրող ժողովրդին է հնարավոր տանել դեպի երկինք՝ «վերին Սին», այսինքն՝ մեռցնել:

Սկզբնաղբյուրներից պարզ երևում է, որ Գրիգորի ուսուցիչ-ղեկավար Ղևոնդը լավագույնս պատկերացրել է, թե հայ ժողովրդի գլխին ինչ են բերել:

Չարյուրամյակներ է, ինչ քարոզվում է, որ հայ ժողովուրդը մինչ քրիստոնյա դառնալը եղել է աննշան, անապագա, անասնաբարո, ձիվաղաբարո, հայ քրմեր-գիտնականները՝ պղծագործ, Չայոց աստվածներն ու սրբությունները՝ թարախահոտ կեղտ... Եվ հարյուրամյակներ շարունակ մենք լսում ենք մեզ վերագրված աղտն ու անպատվությունները և ոչ միայն չենք վիրավորվում, ըմբոստանում ու դրա ծանապարհը փակում, այլև երջանկորեն հպարտանում ենք, որ մեր նախնիներին նման չենք: Մեր կրավորական ու ողորմելի այդ կեցվածքն արդյունք է այն բանի, որ մենք աշխարհը, կյանքը ծանաչում ենք քայքայման ու մահվան ծանապարհ նախանշող գրիգորյան պրիզմայի միջոցով և ընթանում ենք այն ծանապարհով, որը ցուցանել է Գրիգորը կամ այն կազմակերպությունը, որի մեջ ընդգրկված է եղել նա: Իսկ Չայաստանյայց եկեղեցին դարեր շարունակ գրիգորյան այդ կործանարար պրիզման առավել հղկում ու կատարելագործում է:

Նաև՝ Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու, Փավստոս Բուզանդի, Չենոբ Գլակի և այդ շրջանի հեղինակների աշխատություններից ամենևին չի հասկացվում, որ *Չայ Արշակունիներն իրենց հայացքն ուղղում են դեպի քրիստոնեությունը*: Ըստ Ագաթանգեղոսի, Տրդատը նախապես կտրականորեն մերժել է քրիստոնեական կրոնը՝ այն համարելով կեղծ ու վտանգավոր, բայց հետո, երբ նրան ծնկի են բերել, նոր միայն հանդուրժել-ընդունել է այդ կրոնը և, դժբախտաբար, նույնիսկ՝ քրիստոնյա քարոզիչ է «ձեռնադրվել» («Այնուիետև **առավ Արշակունյաց տոհմի իշխանագուններին դպրոցներում վարդապետություն ուսուցանելու, որոնցից առաջին անունը Տրդատ էր**, որ և հենց թագավորն էր՝ **իր ամբողջ տնով մեկտեղ**: Նույնպես և **ամեն**

մեկին ջանում էր ճշմարիտ գիտությանը հասցնել», տե՛ս Ագաթանգեղոս, 783):

Ինձ մատչելի սկզբնաղբյուրներից այն պատկերն է ձևավորվում, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն է դարձել դավադրության, խաբեության, ստի, հոգեբանական ճնշման, զանգվածային հիպնոսի, բռնությունների, սպանդի միջոցով: Կատարվածը հեղաշրջում էր: Դժբախտաբար, հայոց պատմագրությունը դեռևս անաչառ գնահատական չի տվել մեր ազգային հավատքից մեզ զրկելուն և քրիստոնեությունը պարտադրելուն ու դրանց հետևանքներին: Այդուհանդերձ, հույս եմ փայփայում, որ կգա այն բաղձալի ժամանակը, երբ հայ մարդը տրամաբանորեն կլուծի իր առջև ծառայած խնդիրները և բարեկամին չի ընդունի որպես թշնամի, իսկ թշնամուն՝ բարեկամ, ինչպես նաև կգտնվեն վերլուծաբաններ, որոնք 1915 թ. Եղեռնի արմատները կփնտրեն նաև 301 թ. կատարված եղեռնի-ցեղասպանության մեջ: Ինձ թվում է, որ 1915 թվականին թուրքերի կողմից իրականացված Հայոց Մեծ Եղեռնը 301 թվականին կատարվածի ախտանիշն (սիմպտոմն) ու օրգանական շարունակությունն էր: Գլխավորապես այն իմաստով, որ կորցնելով աշխարհիկ իշխանությունն ու ազգային հավատքը և ապավինելով միայն մեզ պարտադրած քրիստոնեական եկեղեցուն՝ մենք կերպարանափոխվեցինք: Արդյունքում՝ բարոյապես այնքան դեգրադացվեցինք, որ, օրինակ, մեր մտավոր և նյութական հարստություններն ուղղեցինք մեզ համար անօգուտ ու վտանգավոր գործերի կատարմանը: Ահա թե ինչու կազմալուծվեց ազգային միասնությունը, ինքնապաշտպանության բնագոյը և ցեղասպանության ենթարկվեցինք մեր իսկ բնօրրանում՝ Հայոց հողում, այս անգամ արդեն թուրքերի ձեռքով: Դժբախտաբար, ոչինչ չի փոխվել: Գործընթացը շարունակվում է...

301-ի պետական-դավանական հեղաշրջմամբ իրականացրած ցեղասպանությունը և 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը մեծ ընդհանրություն ունեն: Նախ, երկու ոճիրն էլ ուղղված են եղել հայ ժողովրդի կործանմանը, և երկուսի գլխավոր կազմակերպիչը, թվում է, թե նույն կառույց-կազմակերպությունն է, երկու դեպքում էլ իրական տեղեկությունը կոծկվում է, իսկ սարքովին՝ տարածվում:

բ. Հավանաբար, բոլորն էլ համաձայն են դասագրքի հեղինակների այն մտքի հետ, որ «քրիստոնյաները բոլորին զարմացնում էին իրենց անսասան հավատքով, նրանք նույնիսկ պատրաստ էին հրաժարվել կյանքից, բայց ոչ՝ հավատքից»: Սակայն այդպիսի վարքագիծը ոչ միայն գովելի չէ, այլև արհամարհելի ու դատապարտելի է: Աշխարհիկ դպրոցի դասագիրք կազմողները պետք է աշակերտներին ուսանեն, որ անսասան վերաբերմունք պետք է դրսևորել ոչ թե դատարկապաշտության, հորինված էակին հավատալու, այլ՝ կյանքն ու Հայրենիքը արժևորելու գործում:

Տակիտոսը (I-II դդ.) արժեքավոր տեղեկություն և արժանի գնահատական է տալիս իր ժամանակի քրիստոնյաներին: Այդտեղ ասվում է, որ 64 թ. Հռոմի ահռելի հրդեհից հետո լուրեր էին շրջում, որ քաղաքը հրդեհվելու մեղավորը Ներոնն է. «Եվ որպեսզի այդ լուրերը հաղթահարի (վերացնի), Ներոնը մեղավորներ էր փնտրում և մահվան դատապարտում նրանց, ովքեր նողկալիության պատճառով իրենց վրա էին բևեռել համընդհանուրի ուշադրությունը: Ամբոխը նրանց քրիստոնյաներ է անվանում: Քրիստոսին, որի անունից է առաջացել այդ անվանումը, Տիբերիոսի օրոք մահապատժի էր ենթարկել Պոնտացի Պիղատոսը: Ժամանակին ձնշված այդ **կործանարար դատարկապաշտությունը նորից սկսեց դուրս ժայթքել** ոչ միայն Հուդայում, որտեղ **այդ չարիքը** սկիզբ էր առել, այլև Հռոմում, ուր ամեն կողմից հոսում ու միանում են ամենազգվելին ու անամոթալին, որտեղ նրանք գտնում են իրենց համախոհներին: Եվ այսպես, սկզբում ձերբակալվեցին նրանք, ովքեր խոստովանում էին այդ աղանդի նկատմամբ իրենց համախոհությունը, իսկ հետո, նրանց ցուցմունքով՝ հսկայական քանակությամբ ուրիշներ, որոնք մերկացվեցին ոչ այնքան եղբրական հրդեհի, ինչքան **մարդկային ցեղի նկատմամբ ատելության մեջ**» (Корнелий Тацит, Сочинения, в двух томах, Ленинград, Наука, 1970, т. 1, с. 298):

Քրիստոնյաների անսասանության, կյանքից շեղված լինելու մասին է տեղեկացնում նաև Ագաթանգեղոսը: Հայոց Տրդատ թագավորին հղած Հռոմի կայսեր նամակում ասվում է. «Ինքնակալ կայսր Դիոկղետիանոսից մեր սիրելի եղբայր և աթոռակից Տրդատին, ողջույն: Թող ի գիտություն լինի քո եղբայրությանը և մեր նի-

զակակցին այն չարիքների համար, որ ամեն օր հասնում են մեզ քրիստոնյաների խաբեբա աղանդից, քանզի ամեն բանում անարգվում է մեր տերությունը նրանց ուխտի կողմից, մեր թագավորությունը արհամարհվում է նրանցից և ոչ մի համեստություն չկա նրանց մեջ: Մի ոմն խաչյալ մեռյալի են պաշտում, փայտին երկրպագում, սպանվածների ոսկորները հարգում և իրենց աստծու սիրուն մահը փառք ու պատիվ են համարում: Մեր սրերը բթացան, իսկ նրանք չզարհուրեցին մեռնելուց, քանզի մոլորված են՝ ոմն խաչյալ հրեայի հետևելով: Ուսուցանում են թագավորներին անպատվել, իսկ բուն աստվածների կուռքերը՝ անարգել: Նաև լուսավորների՝ Արեգակի ու Լուսնի զորությունը աստղերով հանդերձ արհամարհում են և համարում են նույնիսկ այդ խաչյալի ստեղծածը: Աստվածների կուռքերը անարգել սովորեցին և ամբողջ աշխարհը նրանց պաշտամունքից հեռացրին, մինչև անգամ կանանց տղամարդկանցից, տղամարդկանց կանանցից ողջ-ողջ հեռացնում են: Թեպետև տեսակ-տեսակ տանջանքներ տվեցինք նրանց, առավել ևս բորբոքվեց ու տարածվեց նրանց աղանդը և թեպետ բյուրապատիկ սաստիկ արհավիրքների ենթարկեցինք նրանց, սակայն նրանց արյան հեղումից առավել ևս ծաղկեց ու բազմացավ նրանց աղանդը» (Ագաթանգեղոս, 152-154):

Դժբախտաբար, հայ ժողովրդի պատմությունը բազում դրվագներ է պարունակում, երբ հայ մարդը հոժարակամ հրաժարվել է կյանքից, բայց ոչ՝ քրիստոնեական կրոնից: Օրինակ, Չազկերտի՝ քրիստոնեությունից հրաժարվելու հրովարտակի պատասխանում գրված է. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված: Մեր ամբողջ գույքն ու ստացվածքը քո ձեռքում են, և մեր մարմինները քո առաջն են. քո կամքի համաձայն արա՛, ինչ ուզում ես: Եթե այս հավատի մեջ թողնես, ո՛չ երկրի վրա ուրիշ տեր կընդունենք քո փոխարեն և ո՛չ էլ երկնքում ուրիշ աստված կընդունենք Չիսուս Քրիստոսի փոխարեն, որից բացի՝ ուրիշ աստված չկա: Իսկ եթե այս մեծ վկայությունից հետո ուրիշ բան հարցնես, ահավասիկ պատրաստ ենք՝ մեր ամբողջ մարմինը քո ձեռքը տված. արա՛ շուտով՝ ինչ որ կամենում

ես: Քո կողմից տանջանք, իսկ մեր կողմից հանձնառություն. քո սուրը և մեր պարանոցները: Մենք ոչնչով ավելի լավ չենք մեր նախնիներից, որոնք այս հավատի համար դրին իրենց գույքն ու ստացվածքը և մարմինները» (Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989 թ., էջ 81): «Եվ իբր բոլոր կողմերից փակվեց նրանց անելանելի բանտի մուտքը, այն ժամանակ Աբրահամի օրինակը մեջ բերելով աղաղակում և ասում էին իրենց սրտերում. «**Մենք բոլորս մեր եղբայրներին ու որդիներին և բոլոր սիրելիներին նվիրել ենք և Իսահակի պես կապած դրել ենք սուրբ սեղանի վրա. ընդունի՛ր, Տեր, մեր այս կամավոր նվերը** և մի՛ թույլ տա, որ այս անօրեն իշխանը քո եկեղեցին ծաղրուծանակի ենթարկի (Նույն տեղ, էջ 97-99): **Ի՞նչ պիտի անեք Տիրոջ պատվիրածը՝** «Ով ինձ ուրանա մարդկանց առաջ, ես էլ նրան կուրանամ իմ երկնավոր հոր ու սուրբ հրեշտակների առաջ» (Նույն տեղ, էջ 111): «Եվ խորհրդի առաջին վճիռն այս հաստատվեց. «**Հարազատ եղբոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ դուրս է եկել աստծու պատվիրանի ուխտից. հայրը չխնայի որդուն, և որդին չակնածի հոր պատվից, կինը կռվի իր ամուսնու դեմ, և ծառան դիմադրի իր տիրոջը**» (էջ 115): Դրանից երեք դար առաջ հրեա-եբրայեցի ռաբբի Տրիփոնը ասել է. «Իսկ դուք, քրիստոնյաներդ, սուտ լուրն ընդունել և ինչ-որ Քրիստոս եք երևակայել և նրա սիրուն թեթևամտորեն կործանում եք ձեզ» (Ա. Ռոբերտսոն, Քրիստոնեության ծագումը, Երևան, 1965 թ., էջ 167): Այստեղ, հավանաբար, խոսքը վերաբերում է այդ ժամանակների հրեա քրիստոնյաներին, քանզի հուդայականության որոշ դրույթներին ծանոթ լինելով, դժվարանում են հավատալ, որ ռաբբին հոգար քրիստոնեություն ընդունած օտար ժողովուրդների կյանքի մասին: Իհարկե, լինում են և բացառություններ: Օրինակ, հրեա ռաբբի Նեոֆիտը մարդկությանն անգնահատելի ծառայություն է մատուցել՝ բացահայտելով հուդայական կրոնի հույժ գաղտնի ծեսերից մեկը (Кровь в верованиях и суевериях человечества, Санкт-Петербург, 1995, с. 445-466):

Եղիշեի երկում կրոնին սևեռնորեն կառչած հայ մարդու նկարագրի համար կարելի է միայն ավաղել ու ամաչել: Նաև՝ շատերս մտածում ենք, որ Եղիշեն, լինելով կրոնական գործիչ, գունազարդել

ու չափազանցրել է հայ մարդու շեղվածությունը կյանքից: Սակայն, հոգուտ եղիշեի անաչառության է խոսում նույն օրերին հայ մարդու հոգեվիճակը նկարագրող պարսից արքա Չագկերտի հրովարտակը. «Մի ուրիշ մոլորություն էլ. ասում են՝ «Աստված, որ ստեղծեց երկինքն ու երկիրը, եկավ և ծնվեց մի կնոջից: Մի՛ հավատաք ձեր առաջնորդներին, որոնց նածրացի եք անվանում, որովհետև սաստիկ խաբեբաներ են. ինչ-որ խոսքերով ուսուցանում են, գործով հանձն չեն առնում: Ասում են՝ «Միս ուտելը մեղք չէ», և իրենք չեն ուզում ուտել. «Կին առնել պետք է», բայց իրենք նրա վրա նայել էլ չեն ուզում. «Չարստություն ժողովելը, ասում են, շատ մեղք է», բայց աղքատությունը չափից ավելի են գովում: Չարգում են թշվառությունը և պարսավում հաջողությունը. ծաղրում են բախտի անունը և խիստ պախարակում են փառավորությունը. սիրում են անշուք հագուստը և անարգ բաներն ավելի են հարգում, քան պատվականները. մահը գովաբանում են և կյանքը պարսավում. մարդու ծնունդն անարգում են և գովում են անզավակությունը: Եվ եթե մարդ դրանց լսի և կանանց չմերձենա, շուտով կհասնի աշխարհի վերջը (Էջ 53): Այս բոլոր գրածներիցս ավելի վատթարագույնն այն է, որ քարոզում են, թե աստված մարդկանց ձեռքով խաչ բարձրացվեց, նույնը մեռավ և թաղվեց, և ապա հարություն առավ ու երկինք վերացավ: Չէ՞ որ դուք ինքներդ պետք է դատաստան անեիք այդպիսի անարժան ուսմունքների համար: Դևերը, որ չար են, չեն բռնվում ու տանջվում մարդկանց կողմից, ո՛ր մնաց աստված, բոլոր արարածների արարիչը. այսպիսի բաներ ասելը ձեզ համար ամոթ է, իսկ մեզ համար՝ խիստ անհավատալի (Էջ 55): Վնաս եմ համարում արքունի գանձարանն ընդունել ձեր աշխարհի հարկը, և ձեր արիությունն ու քաջությունն էլ՝ անօգուտ, որովհետև տգիտությամբ մոլորվել եք մեր ծշմարիտ կրոնից, աստվածներին անարգում եք, կրակն սպանում, ջրերը պղծում ... ամեն ժամանակ կանանց չեք մերձենում: **Տեսնում եմ ձեզ ինչպես անապատի մեջ ցրված ու մոլորված խաշներ** և ես շատ վախենում եմ՝ չլինի՞ թե աստվածները ձեր պատճառով բարկանան ու վրեժը մեզանից առնեն» (Էջ 93):

Չայերիս՝ քրիստոնեությանը անսասան կառչած լինելու մեկ օրինակ Առաքել Դավրիժեցու (մահացել է 1670 թ.) աշխատությունից. «Սպահան եկած հայ ժողովուրդը ջուղայեցիներից ու երևան-

ցիներից բացի աղքատացավ... Եվ նրանց աղքատության լուրը հասավ շահին (Աբաս): Շահը կանչեց մելիքներին և սրանց ասաց. «Կտամ ձեզ դրամ ու ինչք թագավորական գանձարանից ձեր կյանքի ու ապրուստի համար, բայց պայման կղնեմ և այս պայմանով կտամ: Պայմանը այս է. ինչ որ տալիս եմ, ձեզ փոխարինաբար եմ տալիս երեք տարի ժամկետով, երեք տարի հետո պետք է մեզ վերադարձնեք: Եվ այս փոխը ոչ թե շահով ու տոկոսով եմ տալու, այլ առանց շահի, որպեսզի դուք այդ առած դրամով առևտուր անեք, շահեք և նույն շահը կպարգևվի ձեզ, որ չմնաք նեղությունների մեջ, այլ հիմք լինի ձեզ առևտրի, շահելու և նրանով ապրելու: Արդ՝ ձեզնից ամեն մեկը, ով էլ որ առնի թագավորական դրամից, երբ բերի առած դրամը և վճարի թագավորի գանձարանին, ազատ կլինի: Իսկ եթե լինի մեկը, որ առած դրամը չվճարի, այլ դրամը կերած, վատնած, կորցրած լինի և **որևէ բան չունի, որ վճարի**, արդ՝ այդպիսին դրամի փոխարեն **կամ իր հավատից պետք է դառնա մահմեդական և կամ որդուն, դստերը պետք է տա, որ լինի թագավորական ծառա**»: Սրանց գինն էլ հայտնեց. ով դրամ չունի տալու, չորս թումանի փոխարեն որդուն կտա, երեք թումանի փոխարեն դստերը: Իսկ հարբեցող, անխելք, անմիտ, անբանական մարդիկ ո՛չ սկզբում մտածեցին, ո՛չ էլ վերջին նայեցին, թե ինչ է լինելու այս գործի վերջը. այլ, լինելով իբրև անբան ու անմիտ անասուն, գնացին առան թագավորական դրամը, որը օձի մահարար թույն էր և նրանց կորստյան պատճառ: Իսկ գանձ առնող եզանման մարդիկ ոչ միայն չշահեցին, այլև դրամազուլիսն էլ կորցրին, ոմանք չքավորությունից, ոմանք անխելքությունից, ոմանք քաղաքի առևտրի անտեղյակությունից, դրամը կերան – վատնեցին, ցնցխեցին և թագավորի տված դրամը կորցրին: ... Ժողովուրդը հավաքեց իր **բոլոր դուստրերին և ուստրերին**, բերեց կանգնեցրեց թագավորի առջև՝ ասելով. «**Քանզի դրամ չունենք, որ տված պարտքի դիմաց վճարենք թագավորին, մեր ուստրերին ու դուստրերին տալիս ենք թագավորին, որպես կանխավ պայմանավորվեցինք**» (Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988 թ., էջ 124-128):

Շահին տված պատասխանից պարզ հասկացվում է, որ հայ համայնքը հրաժարվում է (ինչպես նկարագրում է հեղինակը՝ ող-

բով ու լացով) իր ապագայից, միայն թե անսասան պահպանվի քրիստոնեական հավատքը. և կարծես թե միայն մեկ պայման է եղել՝ «որպես կանխավ պայմանավորվեցինք», այսինքն՝ հավատքից հրաժարվելը, ընդհանրապես, անքննելի է: Դժբախտաբար, Դավրիժեցու նկարագրածը բացարձակորեն համահունչ է 1300 տարի առաջ եղիշեի նկարագրածին՝ «Մենք բոլորս մեր եղբայրներին ու որդիներին և բոլոր սիրելիներին նվիրել ենք և Իսահակի պես կապած դրել ենք սուրբ սեղանի վրա. ընդունի՛ր, Տե՛ր, մեր այս կամավոր նվերը»:

գ. «Տրդատը, ձիշտ զնահատելով ստեղծված իրավիճակը, քրիստոնեությունը Չայաստանում հռչակեց պետական կրոն»: Դարեր շարունակ քրիստոնեության մուտքը ձիշտ այդպես են ներկայացրել, և ապագայում, եթե ոչինչ չփոխվի, այդպես էլ կներկայացնեն, քանզի եկեղեցին եղել ու մնում է մեր պատմագրության և մեր մտքի-մտածելակերպի ու վարքագծի տիրակալը:

Ազաթանգեղոսը այնպիսի տեղեկություններ է հաղորդում, որոնցից պարզ ու որոշակի հասկացվում է, որ Չայոց Մեծ արքա Տրդատը ոչ միայն քրիստոնյա դառնալու ցանկություն ու մտադրություն չի ունեցել, այլև ասել է այդ կրոնը, իսկ նրանից առաջ թագավորողների՝ քրիստոնեություն ընդունելու մտադրության մասին որևէ խոսք չկա:

Չայաստանում քաղաքացիական պատերազմով ուղեկցվող կրոնական հեղափոխության նախաշեմի մասին Ազաթանգեղոսը գրում է. «Մինչդեռ Տրդատը խորհում էր այլ սիրաշահությամբ խոսել նրա հետ, և կյանք ու պատիվ խոստանալ, որոնց նա չէր էլ լսելու. «եթե այս խոսքերին էլ չլսի, ասում էր, դեռ ավելին կանեմ ու կչարչարեմ»: Ապա նրան մոտեցավ նախարարներից մեկը, որի անունը **Տաճատ** էր՝ արքայի սպարապետ Արտավանի փեսան: Սկսեց խոսել ու տեղեկություն տալ և այսպես ասաց նրա մասին. **«Որովհետև սա արժանի չէ ապրելու, դրա համար էլ չի կամենում ապրել ու լույսը տեսնել, քանզի այսքան ժամանակ է, որ մեզ մոտ բնակվում է և չէինք ճանաչում նրան: Բայց դա որդին է մահապարտ Անակի, որն սպանեց քո հորը՝ Խոսրովին և խավար բերեց Չայոց աշխարհին, կորստի**

ու գերության մատնեց այս երկիրը: Արդ՝ դա արժանի չէ ապրելու, քանի որ վրիժապարտի որդի է» (Ագաթանգեղոս, 121): Դժբախտաբար, Տրդատը վրիպեց: Ողբերգական է, որ հեռատես Տաճատն ու իր համախոհները չկարողացան լիարժեքորեն համախմբել ազգային ուժերը, և կատարվեց ողբերգականը:

Ինձ մատչելի պատմագրությունը ցույց է տալիս, որ Գրիգոր «լուսավորիչը» իր գաղափարին նվիրումի, նպատակին հասնելու անկոտրում հետևողականության և անձնուրացության, ինչպես նաև մարդու հոգեկանի վրա այլևայլ ձևերով ազդելու և դիվանագիտական նրբություններին տիրապետելու շնորհիվ հասել է իր նպատակին: Ինչպես փաստագրված է այդ ժամանակվա հեղինակների գործերում, պարթև **Գրիգորը** Չայոց Տրդատ թագավորին քրիստոնյա դարձնելուց հետո, փաստորեն, **դարձել է Չայաստանի տերը՝ թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնական:** Այդ նույն Գրիգորն է եղել մեր Երկրի և՛ թագավորը, և՛ սպարապետը, և՛ հոգևոր առաջնորդը, և՛ ուսուցչապետը, իսկ ֆիզիկական զորեղությամբ հայտնի Տրդատին, ի ցույց ժողովրդի, օգտագործել է որպես մի ողորմելի խրտվիլակ՝ արքայական հագուստով զգել է Չայոց բանակի առաջը, իսկ ինքն այդ նույն բանակի գլուխն անցած՝ ոչնչացրել է Չայոց սրբավայրերը, քրմերին, ազնվականությանը, մեր նախնյաց աստվածներից չիրաժարվող հայ մարդկանց և տիրացել նրանց հարստություններին: Օտար երկրներից բերված-հրավիրված օտարագգի հոգևորականներին է հանձնել կողոպտված-զավթած ոսկին ու արծաթը, կալվածքները, իհարկե, իրեն պահելով կողոպտած-ավարառած ոսկու, արծաթի և կալվածքի «առյուծի բաժինը»: Նրա հիմնարար գործերից է նաև հայոց ազգային բանակը եկեղեցական բանակի վերածելը: Փաստորեն, Չայրենապաշտ բանակին դարձրել է սիոնապաշտ և իրեն ծնող ժողովրդին կոտորող բանակ: Գրիգորի հիմնարար գործերից է նաև հայ մանուկներին որպես յուրահատուկ ենիչերիներ կրթելն ու դաստիարակելը: Իսկ Տրդատը, ի ողբերգություն հայ ժողովրդի, արդեն որպես Գրիգորի հպատակստրուկ թագավոր, ժողովրդին հրամայել է՝ անվերապահորեն ենթարկվել այդ նույն Գրիգորի կամքին, իսկ ինքը իր «մեղքերի» քավության համար հրաժարվել է աշխարհիկ կյանքից և քարայրներում ապրել ձգնակյաց կյանքով: Եվ այդտեղ էլ նա կյանքի չի

արժանացել: Ըստ որոշ աղբյուրների, նրան թույն է մատուցվել, ինչին նա լիովին արժանի էր: Եվ պարսավանքի արժանի այսպիսի թագավորը առ այսօր հորջորջվում է որպես «Մեծ»:

Ելնելով սկզբնաղբյուրներից, թերևս ձիշտ կլինի, եթե Տրդատի թագավորելու ժամանակը սահմանափակվի 301 թվականով, իսկ 301-325 թվականները համարվեն պարթև Գրիգորի թագավորության տարիներ. այսինքն՝ մեր թագավորաց ցանկում ներառել Գրիգոր «լուսավորչին»:

Հարկավ, դժվար է Հայոց պետականությունը վերականգնող և որոգայթ ընկած Տրդատ թագավորի գործունեությանը միանշանակ գնահատական տալ, քանզի այդ մասին տեղեկություն հաղորդողները եղել են կրոնական շահագրգիռ գործիչներ, ինչպես նաև այդ տեղեկություններն էլ պահպանվել ու մեզ են հասել նույնպես կրոնական գործիչների միջոցով: Կրոնական գործիչ է եղել նաև հուդայականության գիտակ պարթև Գրիգորը: Հայտնի է, որ սրանք քարոզվելիք դավանանքի նրբին խնդիրների իմացության հետ մեկտեղ տիրապետում են նաև մարդկանց վրա հոգեբանորեն, դեղերով և այլ միջոցներով ազդելու հնարքներին և չի բացառվում, որ Տրդատը երկար տարիներ ենթարկվել է այդպիսի ազդեցությունների: Թեպետև դասագրքի հեղինակները աշակերտներին համոզում են, որ «Տրդատը, ձիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը, քրիստոնեությունը Հայաստանում հռչակեց պետական կրոն», սակայն, օրինակ, Բուզանդի՝ «Տրդատ թագավորին ականա հնազանդելը քրիստոնեական կրոնին» (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987 թ., էջ 13) արտահայտությունը ենթադրել է տալիս, որ այդ օրերին, հավանաբար, մութ գործեր են կատարվել: Նաև՝ անհնար է չնշել, որ Հայոց Տրդատ արքան, մինչ քրիստոնյա դառնալը, իրոք աննկարագրելի մեծագործություններ է կատարել:

Եթե իրավիճակը ձիշտ գնահատելու մասին է խոսվում, ապա պետք է ասվի, որ այդպես վարվել է Գրիգորը իր հոր՝ Անակի ձեռքով ստեղծած անիշխանության ու քաոսի պայմաններում՝ կյանքը չկարևորող և մահը փառաբանող կրոնը պարտադրելով հայ ժողովրդին: Ի ողբերգություն մեզ, ՀՀ այսօրվա իշխանությունը, հիմնականում չխախտելով տասնյոթարյա ավանդույթը, աջակցում է

եկեղեցուն՝ Հայոց պատմության առանձին դրվագները եկեղեցու ճաշակին հարմարեցնելու և հայ մարդուն անձնական ու ազգային նպատակներից և իրական կյանքից շեղող գաղափարներ մատուցելու գործում: Արդյունքում՝ նրանք դպրոց են մտցրել խիստ վտանգավոր մի առարկա: Եվ դա լիովին հասկանալի է, եթե մանկահասակ տարիքից մարդուն չմատուցվեն բանականությունը մթագնող ու բանականությունից զրկող, տրամաբանությանը չենթարկվող գաղափարներ, ապա առողջ բանականության պարագայում մարդը հեշտությամբ կբացահայտի քրիստոնեական կրոնի բուն նպատակը: Իսկ ինչպես հայտնի է, **այդ նպատակը սիոնիզմի ծրագրի իրականացումն է:**

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու առնչությամբ խեղաթյուրվածն ու սուտը մատուցելու և կրոն քարոզելու փոխարեն ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պարտավոր է աշակերտներին տեղեկացնել ու զգուշացնել, որ պատմության մեջ բազում դեպքեր են եղել, երբ որևէ կառույց կարողացել է իր շահերն արտահայտող գաղափարը մատուցել ուրիշ ժողովուրդներին: Կարծում եմ, ասածին համահունչ է հետևյալ քաղվածքի բովանդակությունը. «Հարավամերիկյան մբայա ցեղի կանայք սպանում էին բոլոր երեխաներին, բացի վերջինից կամ նրանից, որին համարում էին վերջինը: Եթե դրանից հետո կինը նորից հղիանում էր, նորածինը դատապարտված էր: Հագիվ թե հարկ կար զարմանալու, որ այս սովորույթի հետևանքով ոչնչացավ մբայա ժողովուրդը, որը երկար տարիներ իսպանացիների ամենասարսափելի թշնամին էր» (Ջեյմս Ջորջ Ֆրեզեր, Ոսկե ձյուղը, Երևան, 1989 թ., էջ 349): Ափսոս, Ֆրեզերը չի գրում, թե մբայա ժողովրդի մեջ այդ մահաբեր գաղափարը ինչպես է թափանցել...

դ. Դասագրքի հեղինակները ակնհայտորեն չեն ցանկանում կատարված դավադրությունը ներկայացնել այնպես, ինչպես ներկայացնում է անգամ Ագաթանգեղոսը: Նրանք պարզապես մեղմացնում են պարթև Անակի կատարածը, օրինակ, գրելով՝ «*Անակին հաջողվում է մահացու վիրավորել խոսրով թագավորին, որի մահից հետո պարսից թագավորը հարձակվում է Հայաստանի վրա և գրավում այն*»: Այն դեպքում, երբ ըստ Ագաթանգեղոսի, խոսրովը

տեղում մահանում է, և միայն հոգեվարքում հասցրել է հրամայել, որպեսզի ոչնչացնեն Անակի ու նրա եղբոր ընտանիքը («Անակը իր հարազատ եղբոր հետ թագավորին մեկուսի մի կողմ տանելով՝ իբր թե զբոսանքի կամ նրա հետ խորհուրդ անելու նպատակով, և պողպատե սուներները կես մերկացրած պահելով՝ հանկարծ անսպասելիորեն զենքերը բարձրացրին և թագավորին դիաթավալ անելով՝ գետին տապալեցին... Եվ քանի դեռ ջերմ շունչը նրա կրծքից չէր հեռացել, և չէր հասել վախճանը, [թագավորը] հրաման տվեց ոչնչացնել նրանց ազգատոհմը» (Ագաթանգեղոս, 34):

Դասագրքի հեղինակները, կարծում եմ, ճշմարտություն ասած կլինեին, եթե գրեին՝ «Անակին հաջողվում է սպանել Խոսրովին, ինչը պատճառ է դարձել Յայաստանի ավերմանը, պետականության կորստին և քրիստոնեացմանը», այսինքն՝ այնպես, ինչպես հասկացվում է Ագաթանգեղոսի երկից: Նկատվում է, որ դասագրքում փորձում են կոծկել հայ ժողովրդի գլխին եկած դժբախտությունը և հայր ու որդի Անակի ու Գրիգորի կատարածները ներկայացնել որպես բարերարություն:

Ե. Դասագրքում ներկայացված է, որ՝ «փրկվում է միայն նրա (Անակի, -Յ.Ս.) որդի **Սուրենը**, որին դայակը կարողանում է փախցնել Կեսարիա: Այնտեղ նա մանկանը հանձնում է քրիստոնյա դաստիարակների խնամքին, որոնք նրան մկրտում և **վերանվանում են Գրիգոր**»: Այն դեպքում, երբ սկզբնաղբյուրներում չի ասվում, որ Գրիգորի անունը սկզբնապես եղել է Սուրեն: Ըստ Ագաթանգեղոսի, փրկված երեխայի անունը Գրիգոր է եղել («նրա անունն էր Գրիգոր»): Իսկ Գրիգորի զինակից Ջենոբ Գլակի վկայությամբ, Սուրենը Գրիգորի եղբոր անունն է եղել. «Բուրտարը, երբ թագավորից լսեց այս հրամանը, շտապեց մտնել Անակի կնոջ՝ Ուգուհիի մոտ, վերցրեց նրա գրկից Գրիգոր մանկանը և տվեց իր կին Սոփիին: Իսկ նրա մյուս եղբայրը, որի անունը Սուրեն էր, մանկաբարձները փախցրին պարսից դուռը» (Յովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989 թ., էջ 32-33):

Այսինքն՝ թե՛ Ագաթանգեղոսը և թե՛ Ջենոբ Գլակը նույն բանն են ասում, այն է, որ Յայաստանում քրիստոնեությունը պետական կրոն դարձնող Գրիգորի անունը մանկուց Գրիգոր է եղել, այն չի փոխվել:

Դասագրքի հեղինակները հերթական անգամ ոտնահարում են փաստերը:

զ. Մանուկներին համոզում են, որ «287 թ. Տրդատը հռոմեական բանակների ուղեկցությամբ վերադառնում է հայրենիք: Ճանապարհին՝ Կեսարիայում, նա ծանոթանում է Գրիգորի հետ և հիանալով նրա խելքով և իմաստությամբ՝ նրան նշանակում է արքունի քարտուղար»:

Նախ պետք է ծշտել, թե արդյո՞ք Տրդատը հռոմեական բանակի ուղեկցությամբ հայրենիք է վերադարձել 287 թվականին և ապա, արդյո՞ք Տրդատը հայրենիք վերադառնալու ճանապարհին է ծանոթացել Գրիգորի հետ:

Ազաթանգեղոսը գրում է. «Այդ ժամանակ Լիկիանեսը սկսեց խոսել արքայի հետ և ասաց. «Թող իմ տիրոջ սիրտը բոլորովին չզարհուրի, քանզի **այստեղ քո պալատում մի մարդ կա**, որի միջոցով այս գործը գլուխ կգա: **Նրա անունը Տրդատ է՝ Հայոց աշխարհի թագավորական տոհմից**» ... Հրամայեց (կայսրը) ծիրանի պատմուճանը Տրդատի վրա նետել և զարդարեցին կայսերական զարդով, զցելով նրա վրա թագավորական նշանը, և ոչ ոք չգիտեր նրա մասին: Հրաման եկավ ամենքին, թե սա ինքն իսկ կայսրն է: Եվ առնելով զորքերի համակ բազմությունը, փողի ձայնով արագ մոտեցավ, մինչև որ կանգնեց թշնամիների դեմ-հանդիման: Երբ միմյանց դիմաց կանգնեցին կայսերակերպն ու (գոթերի) թագավորը՝ երիվարներին մտրակելով իրար հասան: Այնտեղ կայսերակերպը հաղթեց թագավորին և բռնելով նրան բերեց կանգնեցրեց կայսեր առջև: Այդ ժամանակ **թագավորը հույժ բարձրացրեց Տրդատին** և մեծամեծ պարգևներ տվեց նրան, **թագ դրեց գլխին** և ծիրանի պատմուճաններով զարդարելով՝ պատվեց նրան: Կայսերական զարդով շքեղացնելով մեծարեց **և օգնական բազում զորք հանձնելով՝ ուղարկեց նրան սեփական Հայոց աշխարհ: Հաղթական մարտում քաջություններ գործելուց հետո Մեծ Հայքի Տրդատ արքան վերադարձավ Հունաց կողմերից: Թագավորը շարժվեց եկավ Հայոց կողմերը և հասնելով գտավ այնտեղ Պարսից մեծաքանակ զորք, որ երկիրը գրավել էր, հպատակեցրել: Շատերին կոտո-**

րեց և շատերին փախստական դարձնելով՝ Պարսից կողմերը քշեց, իսկ հայրենի տերությունը նվաճեց ու զորացավ նրա սահմանների վրա: Մեծ Հայքի արքա Տրդատի առաջին տարում շարժվեցին եկան, հասան Եկեղյաց գավառը, Երիզա գյուղը, Անահիտի մեհյանը, որպեսզի այնտեղ զոհեր մատուցեն: Երբ անարժան գործը կատարեցին, իջան, տեղավորվեցին այն գետի ափին, որը **Գայլ** է կոչվում: Թագավորը **հրաման տվեց Գրիգորին**, որ պսակներ ու ծառերի թավ ձյուղեր նվիրաբերի Անահիտի արձանի բազիմին: Սակայն նա հանձն չառավ աստվածների երկրպագության պաշտամունքը կատարել» (Ագաթանգեղոս, 44-48):

Ագաթանգեղոսն այնպիսի հստակությամբ է նկարագրում Տրդատի՝ Հռոմում ապրելու, Հայոց թագավոր հռչակվելու և Հայաստան վերադառնալու պատմությունն ու ժամանակագրությունը, որ այդ հարցերում լուրջ տարածայնություններ չպետք է լինեն: Այսպես, մինչ հռոմեացիների ու գոթերի ձակատամարտը, Տրդատին ձանաչել են որպես «Հայոց աշխարհի թագավորական տոհմից» մի անձնավորության, սակայն երբ Տրդատը հաղթում է գոթերի թագավորին և դրանով իսկ հաղթանակ պարգևում Հռոմին, ապա Հռոմի կայսրը անմիջապես Տրդատին թագադրում է և հռոմեական զորքերի ուղեկցությամբ ուղարկում *սեփական Հայոց աշխարհը*: Տրդատը հաղթում է նաև պարսիկներին և վերականգնում Մեծ Հայքի սահմանները: Այսինքն՝ գոթերին հաղթելուց հետո, կարճ ժամանակ անց, Տրդատը հաղթել է նաև պարսիկներին և պարտադրել Մծբինի 298 թվականի դաշնագիրը: Սրա օգտին է խոսում նաև Ագաթանգեղոսի աշխատության մեկնություններից, օրինակ, հետևյալը. «Խոսքով Բ-ի սպանությունից հետո նա (Տրդատ Գ-ն) տարվել է արևմուտք և հռոմեահայկական զորքերի հաղթանակից հետո հաստատվել է Հայոց թագավորության մեջ: Տրդատ Գ-ի (298-330) ժամանակաշրջանին վերաբերող մի շարք հունարեն արձանագրություններ են գտնվել Հայաստանում» (Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983 թ., էջ 510):

Դասագրքի հեղինակները Տրդատի վերադարձը Հայաստան 287 թվին վերագրելով՝ ուղղակի հավատարիմ են մնում եկեղեցուն: Հասկանալի է, նրանք պարտավոր են գրել այն, ինչ թելա-

դրում է եկեղեցին, հակառակ դեպքում, եկեղեցուն հլու ուրիշները կգրեին այդ դասագիրքը: Իսկ եկեղեցին եթե պնդում է, որ Տրդատի վերադարձը Հայաստան 287-ին է եղել, ուրեմն այդպես էլ պետք է գրվի ու մատուցվի աշակերտներին, քանզի դրանով եկեղեցին **լուծում է դավանաբանական մի կարևոր ու նրբին խնդիր՝ իբր Գրիգորը 13 տարի (մահ՝ 15 տարի) շարունակ աննկարագրելի տառապանքներ կրելով ողջ է մնացել** (Քրիստոսին և Գրիգորին վերագրվող առասպելական փորձությունները համեմատելով, պարզ հասկացվում է, որ աստվածային հատկություններով օժտվածը ոչ թե եհովայի և եբրայուհի Մարիամի որդի Հիսուսն է եղել, այլ՝ պարթև Անակի որդի Գրիգորը): Իսկ եթե ասվի, որ Տրդատը հայրենիք է վերադարձել այն ժամանակ, երբ ազատագրվեց Հայաստանը (298-ին), այսինքն՝ այնպես, ինչպես հաղորդում է Ագաթանգեղոսը, ապա որպես դասական սրբի՝ կխամրի Գրիգորի փառքը, իսկ քրիստոնեական սրբերի փառքն ու վեհությունը հենց նրանց կրած (վերագրվող) անասելի տառապանքներն ու նրանց աներևակայելի դիմացկունությունն են: **Ագաթանգեղոսի նկարագրածով եկեղեցուն այնքան անհրաժեշտ 13 տարիների գրիգորյան գերաստվածային տառապանքները չեն հաստատվում:** Սակայն... եկեղեցին անսասան է: Ուրեմն, ըստ ձևավորված և կարծրացած ավանդույթի, պատմական փաստերը պետք է ենթարկվեն եկեղեցու ճաշակին: Նաև՝ նրբագույն դիվանագիտությանը տիրապետող եկեղեցին լավագույնս գիտի, որ եթե այս անգամ ընդունի, որ մինչ այսօր այդ հարցը սխալ է քարոզվել, ապա, անառարկելի ճշմարտություններ ներկայացվող մյուս ստերի ու կեղծիքների բացահայտման հավանականությունը կմեծանա:

Հարկավ, եթե դասագրքի հեղինակները կարողանան հիմնավորել, որ հռոմեացիները գոթերին հաղթել են 287 թվականին, իսկ Տրդատն էլ Հռոմից Հայաստան ձանապարհը հաղթահարել է 11 տարվա ընթացքում, ապա այդ դեպքում կարող է քննարկում լինել:

Դասագրքի հեղինակների՝ Աստվածաշնչյան որոշ դրվագներն ու պատմական փաստերը ի շահ հրեականության նպաստավոր ներկայացնելը լիովին համահունչ է Ստոկհոլմի Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտի կեցվածքին: Սրա հրատարակած «Մանուկների Աստվածաշնչում» ասվում է, որ Հակոբ-Իսրայել-

լը աստծո հետ մենամարտել է, իսկ մարդկանց էլ պիտի հաղթի, այն դեպքում, երբ Աստվածաշնչում գրված է, որ մարտնչել է աստծո և մարդկանց հետ և հաղթել է: Այն դեպքում, երբ Աստվածաշնչում գրված է. «Յակոբ մինակ մնաց ու մարդ մը կգօտեմարտէր անոր հետ մինչեւ արշալոյս: Եւ երբ մարդը տեսաւ թէ անոր չլաղթեց, անոր զիստին ամուլաջիլին դպաւ եւ անոր հետ գօտեմարտած ատենը Յակոբին զստին ամուլաջիլը խախտեցաւ: Եւ մարդը ըսաւ. «Թո՛ղ տուր զիս, քանզի արշալոյսը երեւցաւ»: Յակոբը ըսաւ. «Չեմ թողուր քեզ, մինչեւ որ զիս չօրհնես»: Անիկա ըսաւ իրեն. «Ի՞նչ է անունդ»: Ան ալ ըսաւ. «Յակոբ է»: Անիկա ըսաւ. «Ալ անգամ մըն ալ քու անունդ Յակոբ չըսուի, հապա Իսրայէլ. վասն զի **Աստուծոյ հետ ու մարդոց հետ մարտնչեցար եւ յաղթեցիր**» (Ծննդոց 32:24-28):

Սակայն «Մանուկների Աստվածաշնչում» այդ դրվագը ձևափոխվել է. «Հանկարծ ինչ-որ մեկը հանդիպեց իրեն և մինչև լուսաբաց մենամարտեց նրա հետ ու ազդրի ջիլը վնասեց: Լուսաբացին նա Հակոբին ասաց. «Բաց թող ինձ, որովհետև լույսը ծագեց»: Հակոբն ասաց. «Չեմ բաց թողնի քեզ, մինչև ինձ չօրհնես»: Մյուսն ասաց. «Ի՞նչ է անունդ»: Պատասխանեց. «Հակոբ է»: Իսկ հետո մենամարտողն ասաց. «Այսուհետև քո անունը ոչ թե Հակոբ լինի, այլ՝ Իսրայել, որովհետև դու Աստծո հետ մենամարտեցիր ու **մարդկանց պիտի հաղթես**» (Մանուկների Աստվածաշունչ, Ստոկհոլմ, Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտ, 1992 թ., էջ 56):

Սույն քաղվածքների բովանդակությունների համեմատումը ցույց է տալիս, որ, եթե Աստվածաշնչում Իսրայելի հաղթանակն ավարտված է, ապա Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտը անցյալ կատարյալն ապառնի դարձնելով Իսրայելի համար նոր հեռանկար ու ճանապարհ է բացում...

Ինչ վերաբերում է այն հավաստմանը, որ Տրդատը Գրիգորի հետ ճանապարհին է ծանոթացել, ապա այդ մասին բացարձակ այլ տեղեկություն է հայտնում գլխավոր աղբյուր Ագաթանգեղոսը. «Այդ ժամանակ մի մարդ, ավագակից ազատելով, փրկում է Հայոց Խոսրով թագավորի որդիներից Տրդատ անունով մի փոքրիկ մանկան, [որին] դայակները առնելով փախցրին կայսեր արքունի-

քը, Հունաց կողմերը... Արդ, Տրդատը գնաց Լիկիանես անունով մի կոմսի մոտ, դաստիարակություն և ուսում ստացավ, իսկ Պարթևի որդին, որը Հունաց կողմերն էր տարվել, մեծացավ և ուսում ստացավ Կապադովկիայի Կեսարիա քաղաքում: [Մի ոմն] տեր կանգնելով՝ դայակների միջոցով նրան դաստիարակեց Քրիստոսի երկյուղով և նա ուսանելով քրիստոնեական դպրության հանգամանքները՝ ընտելացավ Աստվածաշնչին, ճանաչեց Տիրոջ երկյուղը. նրա անունն էր Գրիգոր [Գրիգորիոս]: **Երբ դայակներից տեղեկացավ իր հոր կատարած գործերը, ելավ ու գնաց Տրդատին կամավոր ծառայելու: Թաքցրեց իր անձը և ոչինչ չէր հայտնում, թե ում համար, կամ որտեղից, կամ ինչպես էր [հայտնվել], և իր անձը ծառայության տալով հնազանդության մեջ սպասարկում էր նրան:** Մեծ Հայքի արքա Տրդատի առաջին տարում շարժվեցին եկան, հասան Եկեղյաց գավառը, Երիզա գյուղը, Անահիտի մեհյանը, որպեսզի այնտեղ զոհեր մատուցեն: Երբ անարժան գործը կատարեցին, իջան, տեղավորվեցին այն գետի ափին, որը Գայլ է կոչվում: Թագավորը հրաման տվեց Գրիգորին, որ պսակներ ու ծառերի թավ ձյուղեր նվիրաբերի Անահիտի արձանի բազմին: Սակայն նա հանձն չառավ աստվածների երկրպագության պաշտամունքը կատարել: Թագավորն սկսեց խոսել Գրիգորի հետ և ասաց. «Մի օտարական ու անծանոթ մարդ էիր, **եկար մեզ միացար** և ինչպե՞ս ես համարձակվում պաշտել այն Աստծուն, որին ես չեմ պաշտում: **Այսքան տարի ես քեզ ճանաչել եմ**, և դու քո ամբողջ էության մեջ հավատարմորեն ծառայել ես ինձ, և ես գոհ էի քո աշխատանքից ու մտադիր էի ապրեցնել [վարձատրել] քեզ: Ինչո՞ւ չես կատարում իմ կամքը» (Ագաթանգեղոս, 36, 37, 48-51):

Ինչպես տեսնում ենք, դասագրքում ներկայացրած այն տեսակետը, թե, իբր Հայաստան վերադարձի ճանապարհին է Տրդատը Գրիգորին պատահականորեն հանդիպել և նրան ծառայության վերցրել, լիովին հերքում է Ագաթանգեղոսը:

Ագաթանգեղոսի հունարեն վարքից (տես՝ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 512) նույնպես պարզ երևում է, որ Հայոց արքա Տրդատը Գրիգորին ճանապարհին պատահական չի հանդիպել, ինչպես նաև՝ Գրիգորը Տրդատից ոչ միայն թաքցրել

է իր անձը, այլև նրան մոլորեցրել-խաբել է, թե իբր Հայաստանի ազնվական-իշխանական տոհմից է: Այս առումով Տրդատ արքան, մինչ պարթև Գրիգորի լարած, ավերում ու կործանում նախանշող, որոգայթն ընկնելը, նրան նախատում է. **«Երբ դու ինձ մոտ եկար, ասացիր, որ Հայոց աշխարհի առաջիններից ես, բայց այժմ չի երևում ո՛չ քո ազնվական ծագումը, ո՛չ էլ քո հռչակած երկիրը»:** ...

Գրիգորի զինակից Չենոբ Գլակը նույնպես վկայում է, որ Գրիգորը Տրդատի մոտ է ապրել մինչ Տրդատի թագավոր դառնալը. «Ապա Բուրդարը վերցնելով յուր կնոջն ու մանուկ Գրիգորին գնաց կապաղովկիացիների աշխարհը: Այստեղ Գրիգորին մկրտում է, տալիս ուսման, սովորեցնում է նրան ասորի և հելլեն դպրությունն ու լեզուները, վարժեցնում աստվածաբանության մեջ: Երբ դարձավ 12 տարեկան, ապա Դավիթ անունով մի աստվածապաշտ մարդ ամուսնացնում է նրան իր Մարիամ անունով դստեր հետ: Իսկ երբ ծնվեցին նրա երկու որդիները, նրանց մայրը կուսանոց մտավ: Իսկ նրանց հայրը ելավ գնաց Տրդատի մոտ իր հոր պարտքը հատուցելու և **մնաց նրա մոտ այնքան ժամանակ, մինչև որ Տրդատը իր հոր փոխարեն թագավոր դարձավ»** (Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989 թ., էջ 33-34):

Միայն այս վերջին տողերը բավարար են ասելու, որ դասագրքի հեղինակները կա՛մ նյութին լիարժեք ծանոթ չեն, կա՛մ չեն համարձակվել պաշտոնականից զատ այլ տեսակետ հայտնել:

Սկզբնաղբյուրներն ասում են, որ Հայոց Տրդատ թագավորը պարթև Գրիգորին հանդիպել է ոչ թե Հայաստան վերադառնալու ճանապարհին, ինչպես ներկայացվում է դասագրքում, այլ Գրիգորը գնացել է վտարանդիում գտնվող Տրդատին ծառայելու մինչ նրա թագադրվելը, նույնիսկ մանկության տարիքից. «Հայոց Տրդատ թագավորը սկսեց խոսել նրա (Գրիգորի, -Հ.Ս.) հետ և ասաց. «Ի՞նչ նպատակ ունես և կամ ի՞նչ ես մտադիր, իմ կյանքի ընկերակիցը լինե՞լ, ինչպես որ **մանկությունից ինձ հետ հոգնեցիր»** (Ագաթանգեղոս, 100):

Դժվար չէ գուշակել, որ սկզբնաղբյուրներն անտեսելով և Տրդատի ու Գրիգորի միմյանց հանդիպելը ներկայացնելով պատահա-

կան, դասագրքի հեղինակները կատարում են այն նույն գործը, որը դարեր շարունակ կատարել ու կատարում են որոշ հայ պատմաբաններ, այսինքն՝ Հայաստանյայց առաքելական, նույնն է թե՛ քրիստոնեական համաշխարհային եկեղեցու պատվերը՝ ամեն գնով «հաստատել» ու նորոգել հայ մարդու մեջ ամրագրած այն կեղծիքը, թե իբր Գրիգոր «լուսավորիչը» Հայոց բարերարն է եղել, իսկ քրիստոնեության մուտքը Հայաստան, իբր, եղել է հայերիս համար ցանկալի, փրկարար և անարյուն, և որ այդ ամենը կատարվել է «մարդասեր Աստծու կամքով» և «Գրիգորի ձեռքով»։ Միաժամանակ, փաստերի այդպիսի ձևափոխումը վերացնում է այն, որ Գրիգորը հետապնդել է կանխակալ նպատակ։ Չէ՞ որ սրբի նկատմամբ անվստահություն ու կասկածանք հարուցող ցանկացած միտք, պատմական ցանկացած վկայություն պետք է հարմարեցվի եկեղեցու կանոններին։ Հակառակ պարագայում սրբի իրական դեմքը կբացահայտվի։ Իսկ դա կնշանակի, որ եկեղեցին իր դերը վատ է կատարում, որը կբերի նրա վրա խաչ դնելուն՝ դանդաղորեն քայքայվելուն ու կործանվելուն։

Ազաթանգեղոսից և Չենոբ Գլակից բերված քաղվածքներից նաև կարելի է ենթադրել, որ Գրիգորի դաստիարակությունը հանձնարարված է եղել մի զորեղ կազմակերպության, որի թելադրանքով ու ղեկավարությամբ ու լուրջ աջակցությամբ էլ հետագայում գործել է հայ ժողովրդի սրբոց սուրբ համարվող Գրիգորը։

«ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐՈՒՄ»

Դասագրքի վերաբերյալ կարծիք հայտնելն ավարտելուց առաջ մի քաղվածք բերեմ Հայաստանի Հանրապետության կրթության ազգային ինստիտուտի «Հայոց եկեղեցու պատմությունը 2005-2006 ուս. տարում» փաստաթղթից. *«Անկախ պետականության պայմաններում Հայոց եկեղեցու պատմության դասընթացի մուտքը դպրոց չափազանց անհրաժեշտ էր, հրատապ ու այժմեական։ Այն նպատակ ունի ցույց տալ Հայոց եկեղեցու դերը հայ ժողովրդի պատմական ծակատագրում, ազգային-ազատագրական պայքար-*

րի, ազգային հոգևոր նկարագրի պահպանման մեջ, ինչպես նաև հոգևոր-մշակութային արժեքների ստեղծման ու սերունդներին փոխանցման, ազգային համախմբման ու ազգապահպան գործում: **«Չայոց եկեղեցու պատմություն» առարկան պետք է ամբողջացնի ու համակարգի Չայոց պատմությունից, Չայ գրականությունից և մյուս առարկաներից աշակերտների ստացած գիտելիքները (Այս իմաստով խիստ կարևորվում է միջառարկայական կապերի դերը Չայոց եկեղեցու պատմության դասընթացում), հաղորդակից դարձնի նրանց ազգային և համամարդկային մնացյուն արժեքներին, նպաստի նրանց հոգևոր-ազգային նկարագրի ու արժանապատվության ձևավորմանը, **դաստիարակի սեր և հարգանք դեպի մայր եկեղեցին:** Դասընթացը կօգնի աշակերտներին՝ հասկանալ և իմաստավորել կյանքում տեղի ունեցող շատ երևույթներ ու իրադարձություններ: Նոր **դասընթացը կրոնական քարոզչության նպատակ չի հետապնդում:** Այն **պարտադիր է բոլոր աշակերտների համար՝ անկախ ազգային և կրոնական-դավանական պատկանելությունից»:****

Անհնար է համաձայնել այստեղ բերված Չայաստանի Չանրապետության պաշտոնական տեսակետին: Ամփոփելով ինձ մատչելի գրականությունից ստացած տեղեկությունները, ես գալիս եմ հետևյալ եզրահանգումներին՝

ա. Չայոց եկեղեցու դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, առ հիմնական, կարելի է գնահատել որպես քայքայիչ ու կործանարար: Եվ ընդհանրապես, ինչպես է հնարավոր, որ աղքատություն, հնազանդություն, ցմահ կուսություն քարոզող, ինչպես նաև պետական իշխանությունը մերժող և դրա դեմ անհաշտ պայքար մղող կրոնը ժողովրդի պատմական ճակատագրում դրական դեր կատարի: Ուրիշ է կայսրությունների պարագայում: Քրիստոնեությունը կայսրությունների մեջ ներառված ազգերի ստրկացման և ուժացման խնդրում, իրոք, կարող է վճռորոշ դեր կատարել: Ընդհանուր առմամբ, քրիստոնեական գաղափարաբանությունը մերժում է պետությունն ու պետականությունը, թագավորներին, իշխանավորներին, անհատականություններին: Չետևաբար,

պետության և եկեղեցու համագործակցությունը ժամանակավոր է: Այդ համագործակցությունն իրականում քողարկված հակամարտություն է, որտեղ հաղթողն, ի վերջո, եկեղեցին է լինելու: Եվ դա այն պարզ պատճառով, որ ազգային կոչված եկեղեցիների գործունեությունը համակարգում է համաշխարհային քրիստոնեական եկեղեցիների կենտրոնը՝ սիոնիզմը (այդպիսի եզրահանգման համար հիմք է հանդիսանում քրիստոնեական կրոնի և սիոնիզմի գաղափարախոսությունների նպատակների նույնությունը): Ազգային պետություններում գործող քրիստոնեական եկեղեցիները նույն կենտրոնի շնորհիվ ապահովվում են նաև գլխավոր նպատակին հավատարիմ կադրերով... Իսկ պետությունները ոչ միայն համախմբված չեն, այլև տարված են միմյանցից տարածքներ և այլևայլ հարստություններ խլելու հոգսերով: Պետություններում մեծ մասամբ համակարգված չէ պետական կառավարման համակարգի համար կադրեր պատրաստելու գործը: Դժբախտաբար, պետությունը ժառանգաբար ղեկավարելու կարգը համարյա վերացել է, որը, իր թերություններով հանդերձ, մեծ առավելություն ունի մեր օրերում արդեն չափանիշ դարձած՝ ընտրությամբ ղեկավար ունենալու կարգից, որը, փաստորեն, զոռբաների համար իշխանությունը զավթելու լայն ճանապարհ է բացել: Անժխտելի է, որ ազգային պետություններում առաջնորդ ընտրելու գործում այժմ առկա է արտաքին մի գործը ուժի միջամտությունը: Ի արդյունս, ազգային պետությունների կառավարման ղեկին հաճախ տիրանում են այդ խնդրում անպատրաստ ու անտեղյակ, ապազգային, իսկ երբեմն էլ ազատությունից սարսափող, սակայն իշխանատենչ և անձնական հարստություններ կողոպտելու հարցում եռանդուն անհատներ: Ահա թե ինչու է ենթադրելի, որ պետություն-եկեղեցի հակամարտությունում հաղթելու է եկեղեցին, որը իր ստեղծման օրից ձգտել է բացարձակ իշխանության և հանդուրժել է ու կարող է հանդուրժել միայն այնպիսի պետություն, որն արդեն իշխանություն չունի՝ միայն ձևականորեն է պետություն համարվում: Նաև պիտի ասվի, որ քրիստոնեական ազգային եկեղեցիները զգալիորեն տարբերվում են միմյանցից: Օրինակ, դժվար է համեմատել Հայկական ու Անգլիական քրիստոնեական եկեղեցիները: Անգլիական եկեղեցին հարյուրավոր տարիներ պետության ենթակայության է և, փաստո-

րեն, գործում է ի նպաստ պետության ամրապնդման, և այդ եկեղեցու որևէ ծեսում կատարվող փոփոխությունը պետք է հաստատի խորհրդարանը և ապա վավերացնի թագուհին:

Այսինքն՝ այն երկրներում, որտեղ առկա է հզոր պետական համակարգ և սթափ, ազգասեր-հայրենասեր ժողովուրդ, հնարավոր է սանձել եկեղեցու նկրտումները և նրան ծառայեցնել ի շահ պետության: Ընդհանուր առմամբ, տպավորություն է ստեղծվում, որ պետություն-եկեղեցի հարաբերություններն այդպես են եղել Հայոց ավանդական հավատքի շրջանում, երբ Հայոց աստվածների տաճարներում աստծո անունից գուշակություն անողները հենց երկրի տիրոջ՝ թագավորի մերձավոր քրմերն են եղել: Բնականաբար, այդպիսի պայմաններում, երբ հավատքը ենթակա է աշխարհիկ բարձրագույն իշխանությանը, պետությունը կայուն է ու երկարակյաց:

Այլ է պատկերը թույլ և, մանավանդ, կայուն պետականություն չունեցող երկրներում, որոնցից է Հայաստանը: Ըստ պատմական աղբյուրների, տասնյոթ դար է, ինչ Հայաստանը եկեղեցու ձիրաններում արնաքամ է լինում: (Այս խնդրով հետաքրքրվողը հնարավորինս լիարժեք ու համակարգված տեղեկություններ կարող է ստանալ Համլետ Դավթյանի «Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը» իր ընդգրկումով եզակի աշխատությունում (Երևան, 2007 թ.): Այս աշխատությունից ցանկանում են բերել երկու մեջբերում (էջ 252-253), որոնցից մեկը վերաբերում է եկեղեցու անհանդուրժողականությանը՝ 1198 թ. Կիլիկյան Հայաստանի թագավորության հռչակման նկատմամբ: Կղերական գործիչ Օրմանյանը, հավատարիմ Հայաստանյայց եկեղեցու հայրերի բռնած դիրքին, մեզ համար տոնական այդ օրերից յոթ դար հետո գրում է. «**Ոչ ոք պիտի կարենայ մեղադրել Լևոնը իր մեծ նպատակին մեջ, բայց միևնույն ատեն պիտի չի գովե ձեռնարկ մը, որ ազգային եկեղեցույ ինքնութիւնը և ինքնիշխանութիւնը զոհելով պիտի ստացուէր»** (Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, Էջմիածին, 2001 թ., հ. Ա, էջ 1759): Այսինքն՝ եկեղեցին, փաստորեն, ասում է՝ կորչի Հայոց պետականությունը, ի փառս գրիգորյան լուսավորչականության:

Վերոնշյալ աշխատությունից մյուս մեջբերումը վերցված է

Էջմիածնի Մայր Աթոռի «Արարատ» ամսագրից (1871 թ.), որն ուղղակի անթաքույց ատելություն է Հայոց պետականության նկատմամբ. «Ով մեծի խելագարութեանդ, գիտե՛ս, ով տգետ, զի անկումն թագաւորութեան ոչ եթէ հերձուածոց նշանակ է, նշանակ է ճշմարտութեան հաւատոյ մերոյ: Քանզի տերն մեր յայտնի ասէ՝ թէ թագաւորութիւն իր և աշակերտացն իւրոց ոչ է յաշխարհէ աստի: Նմանապէս առաքեալն ասէ, թէ հաւատացեալքն հանապազ ի հալածանս կայցեն: Վասն որոյ անկումն թագաւորութեան աշխարհիս ցուցանէ մանավանդ թէ մեք Քրիստոսի ճշմարիտ հաւատացեալքս աշակերտեմք, նման առաջին հաւատացելոց և աշակերտացն Քրիստոսի: Դարձյալ գիտելի է, զի արեւելեան քրիստոնեայք թեպէտ առանց թագաւորութեան են, սակայն առավել երջանկութիւն ու անդորրութիւն ունին քան զնոսա, որք ընդ թագաւորութեամբ են» (Լեո, Երկերի ժողովածու, Երևան, 1973 թ., հ. 3, էջ 330):

Հայոց եկեղեցու դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում հարցադրման առումով արժեքավոր վերլուծական է գրել հայտնի պատմաբան Լեոն: 1934 թ. հրապարակված այդ վերլուծականը պետականորեն արգելվեց հենց նույն թվականին: Լեոն մասնավորապես գրում է. «Գրիգորի սերունդն հեռանում էր Հայաստանի իշխանապետական իրականությունից, բայց դրա փոխարեն թողնում էր մի նոր Հայաստան, որի հոգին էր նրա կազմակերպած և գործի կանգնեցրած եկեղեցականությունը: Սահակի մեռնելու ժամանակ ոչնչացած էր Արշակունիների սովերային միապետությունը, բայց նրա տեղը հաստատված էր հոգևորականների միապետությունը... Հայ ժողովուրդը վերածվում էր մի կրոնական համայնքի, որի առանձնահատուկ, ընդմիջող դրոշմված և անջնջելի անունն էր, Գրիգորից ստացած, լուսավորչականություն: Այս միայն անուն չէր, այս սպառնիչ բովանդակություն էր, որ փաթաթում, ծրարում էր այդ կրոնական համայնքը նեղ ու թանձր, սահմանափակող ու կղզիացնող ավանդավորության մեջ: Քաղաքական կյանքի համար թույլ, անպտուղ ու ապիկար այդ համայնքն ապշեցնող համառությամբ և տոկունությամբ լուսավորչական էր իր հոգևորականության հրամանով: Չկար զոհվելու և ոչ մի եղանակ, ոչ մի չափ ու աստիճան, որ հայ կղերը չպահանջեց հայ ժողովրդից՝ լուսավոր-

չականությունը պահպանելու համար: Եթե այդ ժողովրդի պատմությունը հյուսված է աղետներից, ամենամեծ աղետն այն է, որ նա պարտավոր է լինել լուսավորչական: Այս է հիմքն այն քաղաքականության, որ հայ կղերը ժառանգել էր Լուսավորչի տոհմից՝ գործադրելու համար ոչ միայն երկրի ներսում, այլև արտաքին հարաբերությունները վարող դիվանագիտության մեջ» (Լեո, Չայ կղերական դիվանագիտություն, Երևան, 1934 թ., էջ 32-33):

Լեոյի այս աշխատության արգելքով խորհրդային իշխանությունը, փաստորեն, ցույց է տվել, որ քրիստոնեական կրոնի նպատակի բացահայտումն անթույլատրելի է եղել: Կրոնի դեմ անզիջում պայքարողի համբավ վայելող այդ երկրի գոյության ընթացքում, կարծում եմ, չի մասսայականացվել այն, որ քրիստոնեական գաղափարախոսությունը հորինված է այն նպատակով, որպեսզի հեշտությամբ իրականանա սիոնիզմի ծրագիրը:

Եվ ընդհանրապես, ինչպե՞ս է հնարավոր, որ ազգային պետությունն ու քրիստոնեական, այն էլ՝ «գրիգորյան»- «լուսավորչական» եկեղեցին համահունչ լինեն, երբ ազգային պետության բարձրագույն իդեալը գիտուն, իրատես, կյանքը, արժանապատվությունը, նյութը կարևորող հայրենասեր քաղաքացի դաստիարակելն է, իսկ մեր «լուսավորչական» եկեղեցու իդեալը՝ տգետ, դյուրահավատ, հնազանդ, կամազուրկ, թշնամուն սիրող, սերնդատվությունը մեղք համարող, մահը փառաբանող հավատացյալ դաստիարակելն է: Մեր եկեղեցին մշտապես քարոզել է նաև, որ կաթողիկոսը պետք է լինի հայ ժողովրդի և թագավորը, և՛ հոգևոր առաջնորդը, հարկավ՝ թագավորաց թագավորի տիտղոսը մշտապես թողնելով Չիսուսին:

Փաստորեն, քրիստոնեական եկեղեցին իրական Չայաստանը հիմնականում դարձրեց պատմական Չայաստան: Իսկ եկեղեցուց երբեմն կազմավորվող և ի փառս եկեղեցու մշտապես ընդհատվող Չայոց պետական պաշտոնյաների ստացած «շահն» էլ այն է, որ կամազուրկ ու հնազանդ, միայն ավուր հացի մասին մտածող և բարեկեցիկ անդրշիրիմ երազող մարդկանց ղեկավարելը հեշտ է, թեև այդպիսի պաշտոնյաները չեն կարող համարվել ազգային պետության պաշտոնյաներ:

բ. Հարկավ, եղել են դեպքեր, երբ Հայոց եկեղեցու որոշ առաջնորդներ *ազգային-ազատագրական պայքարի* գործում դրական դեր են կատարել, սակայն, ընդհանուր առմամբ, եկեղեցին այդ խնդրում խեղդիչ դեր է ունեցել: Թվում է, թե գործընթացը շարունակվում է: Եկեղեցին հայ ժողովրդին կամ առանձին համայնքների համախմբել է հիմնականում այն դեպքում, երբ դա եկեղեցու գերիշխանության հաստատման նպատակ է հետապնդել: Ավետարանները և քրիստոնեական վավերագրերը ցույց են տալիս, որ, ընդհանուր առմամբ, եկեղեցին ազգություն չի ձանաչում: Ուրիշ հարց է ազգը եկեղեցու խաչի տակ դնելը: Նաև՝ անհամատեղելի է քրիստոնյա հավատացյալ լինելը և ազգային-ազատագրական պայքարի մեջ **գիտակցորեն** ընդգրկվելը: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում մեր քրիստոնեական եկեղեցու դերն, ըստ իս, համապատասխանում է ստորև մեջբերման բովանդակությանը:

1759 թվականին Հովսեփ Էմինը Կարնո նահանգի Ճինիշ գյուղի բնակիչներին հարցրել է, թե «ինչո՞ւ եք առարկում, երբ ձեր ազգակիցներից որևէ մեկը ռազմիկ է դառնում, ինչո՞ւ դուք ազատ չեք, ինչո՞ւ դուք ձեր սեփական թագավորը չունեք»: Գյուղացիները Էմինին պատասխանել են. «Պարոն, մեր ազատությունը անդիի աշխարհքն (անդրշիրիմյան աշխարհում) է. մեր թագավորը Հիսուս Քրիստոսն է»: Էմինը ըսավ. «Ի՞նչ խոսք է այդ. ո՞վ ըսավ ձեզի թե այդպես է»: «Եկեղեցիին Սուրբ Հայրերը, որոնք կըսեն թե հայ ազգը մահմեդականներուն հպատակ եղած է աշխարհի ստեղծվելէն ի վեր, եւ այդպես ալ պետք է մնա մինչեւ հարութեան օրը: Եթե ոչ մենք շատ արագ կրնայինք թուրքերը մեր երկրէն դուրս վռնդել» (Ա. Այվազյան, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, Լոս Անջելես, 2002, էջ 61):

գ. Քրիստոնեության ընդունմամբ հայ մարդու *ազգային հոգևոր նկարագիրը* ոչ թե պահպանվեց, այլ կտրուկ փոխվեց: Իսկ ինչպե՞ս էր հնարավոր քրիստոնեությունը ընդունելուց և այդ կրոնի ենթակայության տակ ապրելուց հետո պահպանել ազգային հոգևոր նկարագիրը:

Մեր ազգային հավատքից (Հայկ, Ար, Արամազդ, Միհր, Անահիտ, Աստղիկ, Վահագն, Տիր, Վանատուր, Հայկ-Խալդ, Թեյշեբա...)

մեզ քիչ բան է հասել: Ընդհանրացնելով մեզ հասածը, կարելի է ասել, որ դրա գաղափարախոսության մեջ հայ ժողովրդի համար անօգուտ ու վտանգավոր ոչինչ չկա:

Մեր հավատքը փառաբանել է կյանքը, ապագան, աշխատասիրությունը, պտղաբերությունը, բնապաշտությունը (Արև, Լուսին, աստղեր, հող, ջուր, բույս, կենդանիներ, լեռներ), բարեպաշտությունը, զգոնությունը, սերը ազգի, հայրենիքի ու ընտանիքի նկատմամբ, ազատասիրությունը, լավատեսությունը, հանուն կյանքի մաքառումը, կամքի դրսևորումը, երջանկությունը, արժանապատվությունը, հորդորել է ատել թշնամուն և այլն: Պաշտվել է այն, ինչ կյանք ու կյանքի երաշխիք է: Կարելի է ասել, որ Հայոց աստվածները հայ ժողովրդի լինելության և ապագայի համար հերոսացած կերպարներ են եղել, որոնք ժամանակի ընթացքում գունազարդվելով, աստվածներ են դարձել: Հայոց դիցարանում ամփոփված է եղել մեր նախնայաց կենսափիլիսոփայությունը, մտածելակերպը, նպատակներն ու երազանքները: Կարելի է եզրակացնել, որ մեր ազգային հավատքը ուժեղացրել է հայ մարդու և, ընդհանրապես, ազգային իմունային համակարգը և նրան մղել է օգտակար աշխատանքի, սխրանքի ու հերոսացումների: Այն դեպքում, երբ մեզ պարտադրված կրոնը՝ քրիստոնեությունը, խրախուսում ու պարտադրում է հնազանդություն (Ա Թուղթ Պետրոսի 2:18-21), տառապանք, սուգ, լաց (Թուղթ Յակոբու 4:9), սով, աղքատություն (Ղուկ. 6:21-25), տգիտություն, հալածանք (Մատթ. 5:3-12), քիչ աշխատել, հարստություն չկուտակել, կյանքի մասին չմտածել, հոգ տանել մեռնելուց հետո լավ ապրելու մասին (Մատթ. 6:19-34, Թուղթ Յակոբու 5:1-15), ուրանալ սեփական անձը (Մատթ. 16:24-25), պառակտում, չսիրել ծնողներին, զավակներին (Մատթ. 10:34-37), բոլոր հոգսերը աստծո վրա գցել (Ա. Թուղթ Պետրոսի 5:7), հարազատին չսիրել, սիրել թշնամուն (Մատթ. 5:38-45), հրաժարվել ինքնապաշտպանությունից (Ղուկ. 6:29-37), չսիրել աշխարհը (Ա Թուղթ Յովհաննու 2:15-17, Թուղթ Յակոբու 4:4), հրաժարվել մարմնավոր ցանկություններից (Ա. Թուղթ Պետրոսի 2:11), ցմահ պահպանել կուսությունը (Մատթ. 5:27-29, Ա. Թուղթ առ Կորնթացիս 7:1-38, Յայտնութիւն Յովհաննու 14:1-5): («Ծառաները ամեն բանի մէջ վախով հնազանդ ըլլան

իրենց տէրերուն, ո՛չ միայն բարերարներուն ու հեզերուն, հապա ժանտաբարոներուն ալ: **Քանզի Աստուծմէ է այս շնորհքը, երբ մէկը բարի խղճմտանքով անիրավ տեղ վիշտ կը կրէ:** Վասն զի գովեստի արժանի ի՞նչ կայ եթէ մեղք գործելով ծեծուիք ու համբերէք: **Բայց եթէ բարիք գործելով չարչարուիք ու համբերէք, ասիկա Աստուծոյ քով շնորհք մըն է:** Քանզի դուք այս բանին համար կանչուեցաք, վասն զի Քրիստոս ալ ձեզի համար չարչարուեցաւ ու ձեզի օրինակ թողուց՝ **որպէս զի իր շաւիղներուն հետեւիք»** (Ա Թուղթ Պետրոսի 2:18-21):

«Տառապանք քաշեցէք. սուգ ըրէ՛ք ու լացէ՛ք. ձեր ծիծաղը սուգի դառնայ ու ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան» (Թուղթ Յակոբու 4:9):

«Երանի՛ ձեզի որ հիմա անօթի էք, վասն զի պիտի կշտանաք: Երանի՛ ձեզի որ հիմա կու լաք, վասն զի պիտի խնդաք: ... Բայց վայ՛ ձեզի հարուստներուդ, վասն զի ձեր մխիթարութիւնը առած էք: Վայ՛ ձեզի որ կուշտ էք, վասն զի պիտի անօթեանաք, վայ՛ ձեզ որ հիմա կը ծիծաղիք, վասն զի սուգ պիտի ընէք ու լաք» (Ղուկ. 6:21-25):

«Երանի՛ հոգիով աղքատներուն, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է: Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի մխիթարուին: Երանի՛ հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկինքը: Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան: ... Երանի՛ անոնց որ հալածուած են արդարութեան համար, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է»: **Երանի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը հալածեն եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի համար: Յնծացէք եւ ուրախ եղէք, վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը.** քանզի այս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները» (Մատթ. 5:3-12):

«Երկրի վրայ ձեզի գանձեր մի՛ դիզէք... Յապա ձեզի գանձեր դիզեցէք երկինքը, ուր ո՛չ ցեցը եւ ո՛չ ժանգը կ'ապականեն ու ո՛չ գողերը պատ կը ծակեն եւ կը գողնան: Քանզի ձեր գանձը ուր որ է, սրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ: ... Մարդ մը չի կրնար երկու տիրոջ ծառայութիւն ընել. վասն զի կ'ամ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ. կա՛մ մէկուն պիտի յարի եւ միւսը արհամարհէ. չէք կրնար ծառա-

յել Աստծոյ ու մամոնային: Ուստի կ'ըսեն ձեզի. «Յոգ մի՛ ընէք ձեր կեանքին համար թէ ի՛նչ պիտի ուտէք, կամ ի՛նչ պիտի խմէք. ոչ ալ ձեր մարմիններուն համար թէ ի՛նչ պիտի հագնիք. չէ՞ որ կեանքը կերակուրներէն աւելի է ու մարմինը հագուստէն: Նայեցէք երկնքի թռչուններուն, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, ո՛չ ամբարի մէջ կը ժողվեն, բայց ձեր երկնատր Յայրը կը կերակրէ զանոնք: Չէ՞ որ դուք անոնցմէ լաւ էք: ... Ուրեմն հոգ մի՛ ընէք՝ ըսելով. «Ի՞նչ պիտի ուտենք, կամ ի՞նչ պիտի խմենք, կամ ի՞նչ պիտի հագնինք»: (Քանզի այդ բոլոր բաները հեթանոսները կը խնդրեն). վասն զի ձեր երկնատր Յայրը գիտէ՝ թէ այդ բոլոր բաները ձեզի պէտք են: Ուստի վաղուան համար հոգ մի՛ ընէք, վասն զի վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ. հերիք է օրուան իր նեղութիւնը» (Մատթ. 6:19-34):

«Աղէ՛ հիմա, հարուստներ, լացէ՛ք, ողբացէ՛ք ան թշուառութիւններուն համար՝ որոնք ձեր վրայ պիտի գան: Ձեր հարստութիւնը ապականած է ու ձեր հանդերձները՝ ցեցի կերակուր եղած: ... Ուստի համբերո՛ղ եղէք, ե՛ղբայրներ, մինչեւ Տէրոջը գալուատը: ... **Եթէ ձեզմէ մէկը հիւանդ է, եկեղեցիին երէցները թող կանչէ, որպէս զի իր վրայ աղօթք ընեն ու Տէրոջը անունով թող իւղով օծեն զինք: Հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը ու Տէրը զանկա ոտքի պիտի հանէ:** Եւ եթէ մեղք ալ գործեր է, պիտի ներուի անոր» (Թուղթ Յակոբու 5:1-15):

«Այն ատեն Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ մէկը իմ յետեւէս գալ կ'ուզէ, թող իր անձը ուրանայ եւ իր խաչը վերցնէ ու իմ յետեւէս գայ: Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը ապրեցնել, պիտի կորսնցնէ զանկա ու ով որ ինծի համար իր անձը կը կորսնցնէ, պիտի գտնէ զանկա» (Մատթ. 16:24-25):

«Մի՛ կարծէք թէ ես երկրի վրայ խաղաղութիւն ձգելու եկայ: Խաղաղութիւն ձգելու չեկայ, հապա՛ սուր: Վասն զի **եկայ տղան իր հօրմէն զատելու, ու աղջիկը՝ իր մօրմէն ու հարսը՝ կեսուրէն: Մարդուն թշնամիները իր ընտանիքը պիտի ըլլան: Ան որ հայրը կամ մայրը ինծմէ ավելի կը սիրէ, ինծի արժանի չէ եւ ան որ տղան կամ աղջիկը ինծմէ ավելի կը սիրէ, ինծի արժանի չէ» (Մատթ. 10:34-37):**

«Ձեր ամեն հոգը անոր վրայ ձգեցէ՛ք, վասն զի անկա ձեզի համար կը հոգայ» (Ա. Թուղթ Պետրոսի 5:7):

«Լսեր էք որ ըսուեցաւ. «Աչքի տեղ՝ աչք ու ականայի տեղ՝ ականայ»: Բայց ես ձեզի կ'ըսեմ. **«Չարին հակառակ մի՛ կենար, հապա եթէ մէկը ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ, դարձրու անոր միւսն ալ... Լսեր էք որ ըսուեցաւ. «Քու ընկերդ սիրես ու թշնամիդ ատես»:** Բայց ես ձեզի կ'ըսեմ. **«Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարիք ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն եւ աղօթք ըրէք անոնց համար որ ձեզ կը չարչարեն ու կը հալածեն. Որպէս զի ձեր երկնատուր Զօրը որդիներն ըլլաք»** (Մատթ. 5:38-45):

«... Եթէ ան քու վերարկուդ քեզմէ հանէ, մի՛ արգիլեր անկէ շապիկդ ալ: Ամէն ինչ, որ քեզմէ կ'ուզէ՝ տուր ու քու բաներդ առնողէն զանոնք մի՛ պահանջեր... Եթե դուք ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ շնորհք կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ կը սիրեն զիրենք սիրողները: Եթե դուք ձեզի բարիք ընողներուն բարիք ընէք, ի՞նչ շնորհք կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ նոյն բանը կ'ընեն: Այլ սիրեցէք դուք ձեր թշնամիները ու բարիք ըրէք եւ փոխ տուէք առանց փոխարէնը բան մը սպասելու եւ ձեր վարձքը շատ պիտի ըլլայ...» (Ղուկ. 6:29-37):

«Մի՛ սիրէք աշխարհը, ոչ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը աշխարհը կը սիրէ, անոր ներսիդին Զօրը սէրը չկայ. քանզի ամէն բան որ աշխարհի մէջ է՝ մարմնի ցանկութիւնը ու աչքերուն ցանկութիւնը եւ այս կեանքին ամբարտաւանութիւնը՝ Զօրմէ չէ, հապա այս աշխարհէն է» (Ա Թուղթ 3ովհաննու 2:15-17):

«Ծնացողներ, չէ՞ք զիտեր թե այս աշխարհին սէրը Աստծոյ դէմ թշնամութիւն է, ուստի ով որ կո՛ւզէ աշխարհին բարեկամ ըլլալ, ինքզինք Աստծոյ թշնամի կ'ընէ» (Թուղթ 3ակոբու 4:4):

«Սիրելիներ, կ'աղաչեմ, պանդուխտներու եւ օտարականներու պէս մէկդի՛ կեցէք մարմնատուր ցանկութիւններէն, որոնք հոգիին դէմ կը պատերազմին» (Ա. Թուղթ Պետրոսի 2:11):

«Լսեր էք որ ըսուեցաւ, «Ծնութիւն մի՛ ըներ», բայց ես ձեզի կ'ըսեմ. «Ով որ կին մարդու կը նայի անոր ցանկալու համար, ալ անիկա իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ»: Արդ եթէ քու աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա ու քեզմէ ձգէ. վասն զի աղէկ է քեզի որ անդամներէդ մէկը կորսուի, բայց քու բոլոր

մարմինդ դժոխքը չձգուի» (Մատթ. 5:27-29):

«... **Աղէկ է մարդուս որ կնոջ չմօտենայ:** Բայց պոռնկութիւնը արգիլելու համար ամէն մարդ թող իր կինը ունենայ ու ամէն կին՝ իր այրը: **Բայց չամուսնացածներուն ու որբւարիներուն կ'ըսեմ.** «**Աղէկ է անոնց՝ եթէ ինծի պէս կենան:**»: Բայց եթէ ժուժկալութիւն չունին՝ թող ամուսնանան, վասն զի աղէկ է ամուսնանալ, քան թէ կրթով բորբոքիլ: Բայց ամուսնացածներուն կը պատվիրեմ, ո՛չ թէ ես, հապա՝ Տէրը, որ կինը այրէն չզատուի: Իսկ **եթէ զատուի ալ՝ առանց ամուսնանալու մնայ:** Բայց **կոյսերուն համար** Տէրոջմէն հրաման մը չունիմ, միայն թէ Տէրոջը շնորհքով խրատ կուտամ, որ վստահելի է: Ուրեմն ես կը խորհիմ թէ ասիկա աղէկ է հիմնկուան նեղութեանը համար, այսինքն՝ **աղէկ է մարդուս որ մնայ այնպէս, ինչպէս որ է:** Կապուած ես կնոջ, մի՛ փնտռեր արձակուիլ: **Արձակուած ես կնոջմէ, կին մի՛ փնտռեր:** Բայց այս կ'ըսեմ, եղբայրներ, թէ որոշումի ժամանակը կարծցած է. **ալ անոնք որ կին ունին՝ այնպէս ըլլան որպէս թէ չունին:** Բայց ես կ'ուզեմ որ դուք անհոգ ըլլաք. վասն զի **չամուսնացած մարդը Տէրոջը գործով մտահոգ է, թէ ի՞նչպէս Տէրոջը հաճելի ըլլայ:** Իսկ ամուսնացածը աշխարհիս բաներով մտահոգ է, թէ ի՞նչպէս իր կնոջ հաճելի ըլլայ: Եւ ամուսնացած կինը ու կոյսը կը տարբերին իրարմէ. վասն զի **կոյսը Տէրոջը բաներով կը մտահոգուի, որպէս զի ինք սուրբ ըլլայ հոգիով ու մարմնով, իսկ ամուսնացած կինը՝ աշխարհիս բաներով կը մտահոգուի, թէ ի՞նչպէս իր էրկանը հաճելի ըլլայ:** Ան որ իր կոյսը կ'ամուսնացնէ, աղէկ կ'ընէ, ու **ան որ չամուսնացներ, աւելի աղէկ կ'ընէ**» (Ա. Թուղթ առ Կորնթացիս 7:1-38):

«Տեսայ, որ Գառնուկը կայներ էր Սիօն լեռան վրայ ու անոր հետ հարիւր քառասունըջորս հազարը, որոնք ունէին անոր անունը եւ անոր Զօրը անունը իրենց ձակատներուն վրայ գրուած: **Ասոնք անոնք են որ կիներու հետ չխառնակուեցան, քանզի կոյս են:** Ասոնք Գառնուկին ետեւէն կ'երթան՝ ուր որ ան երթայ. ասոնք մարդոց մէջէն գնուեցան Աստծոյ ու Գառնուկին երախայրի ըլլալու» (Յայտնութիւն Յովհաննոս 14:1-5)):

...

Այսինքն՝ Գրիգոր «լուսավորիչը» հայ ժողովրդին զրկեց կյանքը փառաբանող հավատքից և նրան մատուցեց մահը փառաբանող կրոնը: Դժբախտաբար, այդ հանցագործությունը նույնիսկ մեր օրերում համարվում է բարեգործություն:

Ավետարանների հեղինակները քրիստոնեական ուսմունքն այնպես են հյուսել, որ քրիստոնյաների համար, բացի ավետարաններից, պարտադիր է դառնում պաշտել նաև հրեաների կրոնի սուրբ գիրքը՝ Հին կտակարանը, ինչը նշանակում է ընդունել հրեաների գերակա լինելը և աշխարհը նրանց պատկանելու զառանցանքը: Ուրեմն, քրիստոնեությունը բարոյաէթիկական առումով նոր մարդ ստեղծեց, հարկավ, ի վնաս ազգային ու բնական նկարագրերի, և, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը, Գրիգոր «լուսավորիչը» հայ մարդկանց **«այնչափ հեռացրեց իրենց բուն բարքերից, մինչև որ նրանք ասացին, թե «մոռացա իմ ժողովրդին ու իմ հոր տունը»:** Ընդհանուր առմամբ, ազգային նկարագիրը և քրիստոնեական գաղափարախոսությունը միմյանց հակադիր են: Քրիստոնեությունը ծանաչում է միայն տիեզերքի քաղաքացիներին, այսինքն՝ կամագուրկ-դիմագուրկ ձեռնասուններին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք՝ հայերս, մեր բուն ազգային աստվածներին հավատացել ու պաշտել ենք հավանաբար ոչ պակաս, քան հետագայում Հիսուսին ու Եհովային, նաև այն, որ հավատքն ու կրոնը մարդու հոգեկանի վրա ազդող և նրա գործունեությունն ուղեցուցող ամենագորեղ գործոնն են, իսկ մեր ազգային հավատքի հավատքի և քրիստոնեական կրոնի գաղափարախոսությունների բաղդատումը ցույց է տալիս, որ դրանք միմյանց հակադիր են, ապա կարելի է եզրակացնել, որ հեթանոս հայր և քրիստոնյա հայր իրենց աշխարհընկալմամբ, նպատակներով, երազանքներով ու իղձերով, հոգեբանությամբ, կյանքը վայելելու, բնությունից օգտվելու ձևերով ու եղանակներով, հայրենիքը կարևորելու ու պահպանելու և այլ խնդիրներում միմյանց հակադիր են՝ անտիպոդներ: Նրանց համար պետք է որ հակառակ իմաստ ունենան, օրինակ՝ բնական-արհեստական, սեր-ատելություն, բարի-չար, լավ-վատ, ճիշտ-սխալ, ծնարիտ-սուտ, հարազատ-օտար, բարեկամ-թշնամի, գիտություն-տգիտություն, լույս-խավար, զեղեցիկ-տգեղ, ազնիվ-խարդախ, հերոսություն-փոքրոգություն, բարոյական-անբարոյա-

կան, օգուտ-վնաս հասկացությունները: Նոր կրոնի ընդունմամբ նաև փոխվեց հայ մարդու վերաբերմունքը Հայոց բնաշխարհի, բուն Հայոց սրբավայրերի ու սրբությունների նկատմամբ...

Չարմանք է հարուցում կրոնական և պետական այն գործիչների համարձակությունը, որ հայ մարդու ազգային նկարագրի պահպանման, ազգի համախմբման ու ազգապահպան գործում փառաբանում են քրիստոնեական եկեղեցուն, երբ ակնառու է, որ այն փոխել է հայ մարդու նկարագիրը և ազգը դարձրել կրոնական համայնք: Կարծես թե քրիստոնեություն ընդունելուց հետո ազգային առումով լուրջ հաջողություններ ենք ունեցել. մշտապես պահպանել ենք պետականությունը, բազմացել ենք, շենացրել ու ընդլայնել ենք մեր երկրի տարածքը և այլն, երբ իրականում մեկ ողբերգական ու ձակատագրական կորստին հաջորդել է մյուսը՝ հայ ժողովրդի շարունակական կոտորածներ ու արտագաղթ, տարածքների ու մշակույթի կորուստ... Արդյո՞ք եկեղեցին դրական դեր կատարեց, օրինակ, Մեծ Եղեռնի օրերին: Եղեռնից փրկվածներից շատերը ասում էին, որ հոգևորականները հորդորում էին թշնամուն չդիմադրել, զենք չպահել:

Այստեղ նպատակահարմար են համարում մեջբերել ազգագրագետ, գրող Սերիմեի աշխատությունից, ուր նաև նկարագրվում է Եղեռնի օրերին Արձակում սկսված արտագաղթը. «- Իսկ որ ասում էինք զենք առեք, չէիք հավատում, չէ՞: Տնից յոթ տղամարդ էինք, է՛, յո՛թ տղամարդ և այսօրվա օրը մի հատիկ զենք չունենք: Հավի նման ենք մորթվելու, է՛, հավի նման: «Օրհնյալներ, անտրտունջ տանենք հայազնյա մեր խաչը դեպի մեր Գողգոթա լեռը, ինչպես անտրտունջ տարավ Տերը մեր Հիսուս Քրիստոս»: Հայր ու որդո՞ւն, թե՞ պապ ու թռռանն էր ուղղում իր խրատականը ետևից եկող ինչ-որ մեկը: Ետ նայեցի: Ձեռնափայտին հենված, ալեխառն մագ-մորուքով, խիստ գունաթափ փարաջայով մի քահանա էր» (Սերիմե, Իմ երկրային ուղին, Երևան, 2005 թ., էջ 294):

դ. Ավետարաններից պարզ հասկացվում է, որ քրիստոնեությունը անհատին մեկուսացնում է իրական՝ ֆիզիկական աշխարհից, ընտանիքից, ազգից և նրա համար բացի անդրշիրիմից, ուրիշ արժեք գոյություն չունի: Այդ պարագայում, բնականաբար, ազգապահպանության մասին խոսելն անիմաստ է:

ե. Եկեղեցու չափանիշներով հոգևոր-մշակութային արժեքներն այն արժեքներն են, որոնք կարող են ապահովել հավատացյալների շարունակականությունը, իսկ մարդկանց համար մնալու գլխավոր արժեքը երկնքի արքայությանը՝ վերին Սիոնին արժանանալն է:

Դժբախտաբար, ՀՀ կրթության ազգային ինստիտուտը, անտեսելով հայ ժողովրդի ճակատագրում քրիստոնեական կրոնի կատարած, առ հիմնականը, քայքայիչ դերը, համարում է, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը չափազանց անհրաժեշտ, հրատապ ու ազգապահպան գործին նպաստող մի առաքելություն է, որը պետք է ամբողջացնի ու համակարգի Հայոց պատմությունից, Հայ գրականությունից և մյուս առարկաներից աշակերտների ստացած գիտելիքները: Ինչից նաև հասկացվում է, որ այդ առարկաների դասագրքերը կազմելիս դրանց բովանդակությունը պետք է համաձայնեցվի եկեղեցու հետ: Այս առումով ուշագրավ է օրերս հրատարակված «Կաթողիկոսարանը միջնորդել է փոխել պատմության դասագրքերը» հոդվածը, որը ցանկանում եմ բերել ամբողջությամբ. «Օրեր առաջ, պատմության ուսուցիչները հայտնել են Aysor.am-ի խմբագրությանը, որ պատմության դասագրքերում տարեթվերի լուրջ փոփոխություններ են կատարվել, ընդ որում, փոխվել են կամ կասկածի տակ դրվել այնպիսի կարևորագույն տարեթվեր, ինչպիսիք են Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը կամ հայկական գրերի գյուտը: Դպրոցներից նաև ահազանգ ստացանք, որ 7-րդ և 8-րդ դասարանի աշակերտներից հավաքվել են պատմության դասագրքերը: ՀՀ կրթության և գիտության նախարարությունում Aysor.am-ի թղթակցին հաստատեցին այս տեղեկատվությունը, նշելով, որ գրքերը հավաքվել են Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Երկրորդի միջնորդությամբ, քանի որ պատմության գրքերում ինչ-որ սխալ տվյալներ են հայտնվել: «Կաթողիկոսն է առաջարկել հանել այս դասագրքերը շրջանառությունից, և այդ առաջարկն ընդունվել է», - հայտնեց Aysor-ի աղբյուրը՝ ցանկանալով մնալ անանուն: Խնդրի էությունն առավել բաց և հանգամանալից պարզաբանեց Կրթության ազգային ինստիտուտի պատմության գծով մասնագետ Աշոտ Ղուկասյանը: Նա հայտնեց, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, պատմական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանն իր գիտական ուսումնասիրության արդյունքում հանգել է այն եզրակացությանը, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու և հայկական տառերի ընդունված տարեթվերը սխալ են: Պատմաբանի այս եզրահանգումը, ըստ Ա. Ղուկասյանի, գետեղվել է նաև նոր դասագրքում՝ տողատակում նշումի ձևով: «Կաթողիկոսարանը բողոք է բարձրացրել այդ կապակցությամբ և դիմել է ՀՀ կառավարությանը՝ հանել շրջանառությունից այդ դասագիրքը», - ասաց նա: Ի դեպ, ըստ մեր աղբյուրի, կաթողիկոսարանը նույնիսկ գումար է հատկացնելու՝ պատմության նոր դասագրքեր հրատարակելու համար» (Հայաստան, թիվ 644, հոկտեմբերի 5, 2009 թ.):

Այսինքն՝ յոթանասուն տարվա ընդմիջումից հետո պարզ երևում է, որ նորից վերականգնվում է հավատաքննությունը, ավելի ստույգ՝ բուլշևիկյան հավատաքննությանը փոխարինելու է զուտ կրոնական՝ հուդայաքրիստոնեական հավատաքննությունը: Հետևաբար, հետայսու եկեղեցին պետք է վճռի, թե պատմական փաստերը ինչպես և ինչ ենթատեքստով մատուցվեն մարդկանց և, օրինակ, Հայ գրականության դասագրքերում ո՞ր հեղինակներն ու նրանց ո՞ր գործերն ընդգրկվեն:

Նաև՝ ինչո՞ւ է անտեսվում ՀՀ Սահմանադրությունը, երբ դասագրքում գրվում է, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան *պարտադիր է բոլոր աշակերտների համար՝ անկախ ազգային և կրոնա-դավանական պատկանելությունից:*

Ողբերգական է, որ Հայոց կյանքը 70 տարվա համեմատաբար տանելի ընդմիջումից հետո նորից մտնում է հայ ժողովրդի սրբություն սրբոց համարվող, սակայն իրականում Հայոց թշնամի Գրիգոր «լուսավորչի» հարթած, դեպի վերին Սիոն տանող ճանապարհը:

Ըստ ուսուցիչների և աշակերտների տեղեկության, «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը որոշ դպրոցներում սկսվում և ավարտվում է աղոթքով, հենց դասարանում կնքվում են չկնքված աշակերտները, աշակերտներին մասնակից են դարձնում եկեղեցիներում կատարվող կիրակնօրյա պատարագներին, կան դպրոցներ, որտեղ «Հայոց եկեղեցու պատմության», իմա՝ կրոնի դասավանդումը սկսվում է հենց առաջին դասարանից՝ նախասիրական առարկայի դասաժամերի հաշվին:

Եկեղեցին թափանցել է նաև մանկապարտեզ: Ծատ մանկապարտեզներում նշվում են կրոնական տոները...

Հրեա հեղինակների հեռատեսությունը և օտար ժողովուրդներին հեշտությամբ մոլորեցնելու համոզմունքը ուղղակի ապշեցուցիչ է: Նորից մեջբերեմ Փիլոն Եբրայացու այն կանխատեսումը, որ հուդայականությունը փոխելու է ժողովուրդների կենսակերպը և իր ոտքի տակն է դնելու նրանց. «Յուրաքանչյուր ազգ կթողնի իր ուրույն ճանապարհը, և դեն նետելով իր նախնիների սովորույթները, կդառնա միայն մեր օրենքները պատվելուն, քանի որ, երբ վերջիններիս փայլի պայծառությունը ուղեկցվի ազգային բարգավաճումով, այն կխամրեցնի մյուսների լույսը, ինչպես ծագող արեգակը խամրեցնում է աստղերին»:

Ավարտելով քննարկվող դասագրքի մասին խոսք ասելը, ցանկանում եմ նշել, որ Աստվածաշնչի ընթերցումը այն համոզմունքն է ձևավորում, որ էկոլոգիական հարցերով հետաքրքրվողների համար վաղ թե ուշ առաջնահերթ է դառնալու հավատքի և, գլխավորապես, կրոնի վրա լուրջ ուշադրություն դարձնելը: Միայն պետք է գուշակել, թե ինչո՞ւ կամ այդ ո՞ր գործող ուժի ջանքերով է, որ կրոնի ոլորտը առայժմ չի դասվում էկոլոգիական խնդիրների շարքը, այն դեպքում, երբ կրոնը մարդու (անհատի և հասարակության) հոգեկանի վրա իր ազդեցության ուժով անմրցելի է: Այն կարելի է համեմատել, օրինակ, Երկրագնդի տեկտոնիկա երևույթի հետ: Ինչպես Երկրագնդի կարողությունների ամենահզոր դրսևորումը տեկտոնիկան է, որը փոխում է Երկրագնդի ձևը՝ նոր լեռնաշխարհներ ու փոսորակներ ստեղծելով, տեղափոխում է ծովերն ու օվկիանոսները, այնպես էլ կրոնը մարդու հոգեկան աշխարհի վրա ազդող ամենահզոր գործոնն է, որը հեշտությամբ ու հիմնարար փոխում է մարդու (հասարակության) մտածելակերպը, աշխարհայացքը, բնությունից օգտվելու ձևերն ու մեթոդները, փոխում է բարու և չարի, լավի և վատի, գեղեցիկի ու տգեղի, օգտակարի և վնասակարի, ժմարտության ու ստի ընկալումները: Ժշմարիտ է ասված, որ կրոն ընտրողը միաժամանակ ընտրում է և իր ձակատագիրը: Հայոց առումով կարելի է ասել, որ հայ ժողովրդին քրիստոնեություն պարտադրողը պարտադրեց նաև մեր ժողովրդի դանդաղ ու անշեղ կործանումը....

ԱՄՓՈՓՈՒՄ

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի 4-րդ դասարանի դասագրքում ամփոփված են հուդայական և քրիստոնեական կրոնների գլխավոր ու առանցքային գաղափարները (դոգմաները) և այն իրենից ներկայացնում է հակիրճ Աստվածաշունչ:

Դասագրքում ներկայացված է հրեաների (եբրայեցիների, իսրայելցիների) ազգային աստված Եհովայի կողմից՝ տիեզերքի, աշխարհի, բուսականության, կենդանիների, ինչպես և մարդու ստեղծումը, մարդուն դրախտից վտարելը, ջրհեղեղով մարդկանց, բուսականությունն ու ցամաքային կենդանիներին ոչնչացնելը: Նկարագրված է հրեաների աստվածային ծագումը, նրանց առաջնորդների ու թագավորների գործունեությունն ու նպատակները, նաև՝ թե ինչպես հրեաների առաջնորդներից մեկը հաղթել է իրենց աստծուն, հրեաների օրենքների աստվածատուր լինելը, կույս Մարիամի հղիանալն ու Քրիստոսի ծնունդը, նրա կյանքն ու գործունեությունը, խաչվելը, մահանալը, կենդանանալը և երկինք բարձրանալը... Եվ այս ամենը ներկայացվում են ոչ թե որպես դիցառասպելներ, այլ՝ որպես իրականություն: Բացի սրանից, դասագիրքը հագեցված է կրոնական գունագեղ նկարներով, ինչը իր հերթին կարող է նպաստել մանուկների մեջ աշխարհի կեղծ պատկերն ամրագրելուն:

Այդուհանդերձ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և Հայաստանյայց առաքելական եկեղեցին հայտարարում են, որ դասավանդվող առարկան կրոնի քարոզչության նպատակ չի հետապնդում:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետության դպրոցներում ձգարիտ գիտելիքների հետ մեկտեղ երեխաներին մատուցվում են հրեաների դիցառասպելները, որոնք սիոնիստ հեղինակները կրոնական դոգմաներ են դարձրել և դրել են հուդայական և քրիստոնեական կրոնների, նույնն է թե՝ ընդհանուր հուդայականության հիմքում: Այս դոգմա-դիցառասպելները որպես իրողություն կարող են դաջվել մանուկների մտապատկերում և, պարզ է, որ դրանց հավատացող՝ դրանց ենթակայության տակ գտնվող աշակերտները լուրջ չեն ընդունի բնական գիտությունները, իրական-ֆիզիկա-

կան աշխարհը, իրական կյանքը: Հայ երեխաներին մատուցվում են նաև տրամաբանությանը հակասող գաղափարներ, ինչպես և՛ խնդրի բուն էությանը հակադիր եզրահանգումներ: Աշխարհի և իրերի կեղծ ընկալումը, բնականաբար, կխոչընդոտի աշակերտների մտքի զարգացմանը, աշխարհաճանաչմանը և իրականության թերի ու շրջված ընկալումը նրանց կարող է ուղեկցել իրենց ողջ կյանքի ընթացքում:

Նպատակը պարզ է. սասանել բնության մասին մարդկանց մեջ ձևավորված և իրականությանը համապատասխանող գաղափարները և դրանց փոխարեն նրանց մեջ սերմանել տիեզերքը ոչնչից, մարդը հողից ստեղծելու և հակագիտական մյուս դոգմաները:

Ստացվում է, որ Հայաստանի Հանրապետությունում նույնիսկ պետական դպրոցը դառնում է աշակերտների մտքի երկփեղկման մի կառույց, որտեղ գիտականորեն հիմնավորված առարկաների հետ մեկտեղ ուսուցանում են բնությունն ու բնականությունը, տրամաբանությունն ու գիտականությունը մերժող մի առարկա, այն էլ պարտադիր առարկաների դասաժամերի հաշվին:

Եթե որոշ ծնողներ ցանկանում են, որ իրենց երեխաները կրոնական կրթություն ստանան (առողջ բանականության տեր ծնողը, խնդիրը քննելուց-վերլուծելուց հետո, անհնար է, որ ցանկանա դպրոցում իր զավակներին կրոն դասավանդեն, այդպիսի մոտեցում կարող է ունենալ նույնիսկ այն ծնողը, ով ծրագրել է իր զավակին եկեղեցու սպասավոր տեսնել), ապա նրանց զավակները թող հաճախեն արդեն գոյություն ունեցող կրոնական դպրոցներ, իսկ եթե այդպիսիք քիչ են, ապա շահագրգիռ կողմը՝ եկեղեցին, թող նոր դպրոց բացի, իհարկե, կառավարությունից թույլտվություն ստանալուց հետո, սակայն աղետալի է, երբ կրոն են դասավանդում ՀՀ բոլոր դպրոցներում, առանց բացառության, ինչը մարդու իրավունքի կոպիտ խախտման փաստ է:

Բացարձակորեն ուրիշ խնդիր է, եթե աստվածաշնչյան, այսինքն՝ հրեա ժողովրդի դիցառասպելները ներառվեին աշխարհի ժողովուրդների դիցառասպելների ցանկում և այն, որպես առասպելաբանություն, դասավանդվեր, օրինակ, ավարտական դասարանի աշակերտներին կամ ուսանողներին: Այդ դեպքում դժվար թե լուրջ ընդդիմություն լիներ, քանի որ առասպելներն ու

հեքիաթները նպաստում են մարդու երևակայության զարգացմանը: Համաշխարհային դիցառասպելների դասավանդումը օգտակար կլիներ նաև այն առումով, որ աշակերտներն ու ուսանողները կհմանային, որ հազարավոր ժողովուրդներ իրենց աստվածներն ունեն և յուրաքանչյուր ժողովուրդ իր աստծուն է տիեզերքը ստեղծող ու ամենակարող համարում: Վստահորեն կարելի է ասել, որ խնդրի այդպիսի ըմբռնումը մարդկանց կօգնի գիտակցելու, որ կրոնական դոգմա մատուցվող աստվածաշնչյան պատումները սովորական առասպել-հեքիաթներ են, ինչը ի չիք կդարձնի մարդկանց մեջ հրեաների՝ աստուց և աստված դարձրած հրեայից ներարկված սարսափը: Այս պարագայում կնվազի կրոնական աղանդների թակարդ ընկածների թիվը:

Դասագրքի հեղինակները մի յուրահատուկ երկյուղածությամբ ու ակնածանքով են շարադրում հրեա ժողովրդի պատմությունը և, ընդհանրապես, Իսրայելի մշակույթին վերաբերող նյութերը, երբեմն էլ, հօգուտ հրեա ժողովրդի, աստվածաշնչյան հորինվածքները ձևափոխելով ու գունազարդելով: Փաստորեն, հայ մանուկներին փորձում են դարձնել հուդայականության զինվորներ, այսինքն՝ զինվորներ, որոնք կերտում են սեփական կորուստը:

Դասագրքում ներկայացված հրեա քրմերի հատուկ նպատակով հորինած վտանգավոր գաղափարները մատուցվում են հայ երեխաներին՝ նրանց աշխարհըմբռնման ու հոգեկերտվածքի ձևավորման նախնական փուլում: Սասնագետները պնդում են, որ մարդկանց մեծամասնությունը աստծուն հավատում է միայն այն պատճառով, որ այդ հավատը նրա մեջ մտցնում են մանկական տարիքում: Նրանք նաև նշում են, որ արհեստականորեն մատուցված տգիտությունը նպաստավոր է հոգեկան և ֆիզիկական հիվանդության համար: Ինչպես նաև՝ կրոնական դաստիարակությունը բարոյական ու հոգեբանական մեծ վնաս է հասցնում երեխաներին: Աստծու հանդեպ վախ ներշնչող կրոնական խրատների ոգով երեխաների դաստիարակությունը կաշկանդում է նրանց հասարակական ակտիվությունը, նրանցից շատերին խանգարում է դրսևորելու իրենց ընդունակությունները: Եկեղեցին դպրոցներում կրոնական պարտադիր ուսուցում մտցնելու համար ամենուրեք օգտագործում է իր քաղաքական իշխանությունը:

Փաստորեն. բնությունը, կյանքն ու բանականությունը փառաբանող, բարեկեցիկ, լիարժեք ու արժանապատիվ կյանք քարոզող Հայոց ազգային հավատքը ոչնչացվեց ավելի քան 1700 տարի առաջ, իսկ դրան փոխարինած օտար ու քայքայիչ գաղափարախոսությունը մարմնավորող կառույցն առ այսօր կոչվում է Հայոց եկեղեցի: Այժմ էլ փորձում են նույն ճակատագրին արժանացնել Հայոց դպրոցին. անվամբ՝ Հայոց, սակայն իրականում՝ ապագգային:

Անառարկելի է, որ դպրոցում և ուսումնական մյուս հաստատություններում դասավանդվող առարկան պետք է ենթարկվի մանկավարժության տրամաբանությանն ու ոգուն: Իսկ իրական մանկավարժությունը կոչված է մարդուն հասու դարձնել կյանքի բնականոն զարգացումը, ինչպես նաև էթնիկական առանձնահատկության պահպանումը երաշխավորող գիտելիքներին, այսինքն՝ գիտական գիտելիքներին, այն դեպքում, երբ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան, ինչպես ցույց տրվեց, ոչ գիտական գիտելիքներ է մատուցում:

Հաշվի առնելով այն, որ եկեղեցու պատմության անվան տակ կրոն է քարոզվում, անհրաժեշտ է նախ կասեցնել դպրոցներում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը և ապա այդ դասագրքերը գիտական ու հասարակական համակողմանի քննարկման առարկա դարձնել: Դրանք պետք է ենթարկել նաև էկոլոգիական փորձաքննության: Համակողմանի քննարկման առարկա պետք է դառնա նաև այն խնդիրը, թե ինչ հիմնավորմանը ու իրավունքով, մի քանի անհատների (անկախ նրանց գրաված դիրքից) ցանկությամբ, դպրոց է մտնում հակամանկավարժական և մարդու միտքը խեղող այդ առարկան:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ցույ և եզ. Շուրջ հինգ-վեց տարի է անցել այն ժամանակից, երբ ես սկսեցի հասկանալ քրիստոնեության բուն նպատակը: Եվ ընդհանրապես, կրոնական կապանքների միջոցով մարդուն բանականությունից զրկելու հնարավորությունների, գլխավորապես մարդկանց մանկական տարիքից կրոն քարոզելու-ուսուցանելու մասին խորհելիս մտապատկերիս մեջ ականա հայտնվում և ինձ երկար ուղեկցում է մանկության ու պատանեկության տարիներին ցնցած պատկերներից մեկը՝ հորթերին կրտելու արարողությունը:

Գարնան վերջին Երանոս գյուղի կոլտնտեսության գոմերի բակում էին հավաքում մեկ տարեկան հարյուրավոր արու հորթեր: Անասուններին կրտելու վաղնջական եղանակով՝ նրանց ամորձիների տոպրակը թելի մի փոքրիկ կտորով պիրկ կապում էին և ազատ արձակում: Մենք այդ կենդանիներին մոտ վեց ամիս չէինք տեսնում: Նրանց տանում էին մոտ 10 կմ հեռավորության վրա սարերում գտնվող մեր գյուղի արոտները: Կրտված հարյուրավորների հետ մեկտեղ նույն արոտներն էին տանում նաև 10-15 չկրտված-չմիջամտված-անաղարտ հորթեր, որոնց անվանում էին սերմնացուներ:

Ուշ աշնանը՝ ձմեռնամուտին, այդ կենդանիներին գյուղ էին վերադարձնում: Պատկերը ապշեցուցիչ էր: Միջամտված և անաղարտ կենդանիներին նայելիս մենք զարմացած էինք մնում: Նրանք միմյանցից այնքան էին տարբերվում, որ մեզ թվում էր, թե դրանք ոչ թե 6-7 ամիս առաջ միմյանցից չտարբերվող հորթերն են եղել, այլ տարբեր տեսակի կենդանիներ են: Թելի միջամտությանը արժանացած՝ կրտված հորթերը եզ էին դարձել: Եվ մեր առջևն են հարյուրավոր հեզ ու խոնարհ, հայացքը փախցնող, անասնապահների սպառնազին հայիայներով և հաճախակի տեղացող՝ ձիպտուների ու խարազանների հարվածներով ուղղորդվող անասուններ:

Բոլորովին այլ տեսք ու կեցվածք ունեին նշված 10-15 սերմնացուները՝ ցուլերը: Սրանք իրենց տարիքի և նույն արոտներում արածած եզների կտրուկ գերազանցում էին քաշով, ցայտուն արտահայտված մկանային հզոր համակարգով, ունեին հպարտ, խոժոռ ու սպառնազին հայացք, լայնաձակատ էին, եռանդուն,

ագրեսիվ, աչքերում՝ մի յուրահատուկ փայլ կար, նույնպիսի փայլ ունեին նրանց մաշկն ու մազերը:

Արդեն մեզ հայտնի էր, որ եզներն օգտագործվելու են միայն որպես լծկան, իսկ ցուլերը կատարելու են բնությունից իրենց պարզևած դերը՝ ապահովելու են սերնդատվությունը:

Եզներին և ցուլերին միմյանցից ջուկ էին պահում թե՛ ձմռանը գոմում, թե՛ ամռանը արոտում: Ցուլերին տալիս էին լավորակ խոտ և լրացուցիչ կեր: Նրանց կերակրում ու ջրում էին ժամանակին, ոչ միայն նրա համար, որ այդպես է կարգը, այլև վախենում էին, որ, ի տարբերություն եզների՝ սոված կամ ծարավ ցուլերը կարող են զայրույթից կապերը կտրել և գոմը տակնուվրա անել: Արոտում նրանց նույնպես առանձին էին պահում, քանզի վախենում էին, որ ցուլերը մյուս կենդանիներին կարող են վնասել: Անասնապահները չէին համարձակվում ցուլերին ձիպոտի թեկուզ մեկ հարված հասցնել (հայտնի են բազում դեպքեր, երբ ցուլերը հաշմանդամ են դարձրել կամ սպանել նրանց, ովքեր խանգարել են իրենց հանգիստը, հատկապես բեղմնավորման շրջանում), մինչդեռ եզներից ձիպոտի հարվածն անպակաս է:

Ինչպես տեսնում ենք, ամենաաննշան թվացյալ միջամտությանը մարդիկ կենդանու մեջ կարող են առաջացնել կենսաբանական այնպիսի խոր փոփոխություններ, որ կենդանին կարձ ժամանակում անդառնալիորեն զրկվի իր բնատուր հիմնական առանձնահատկություններից ու կարողություններից:

Ինչպես կյանքն է ցուցանում, մարդուն կրոնական կապանքների մեջ պահելը նույնպես բերում է կերպարանափոխման: Բնականաբար, ասածս չի վերաբերում այն հավատքին ու կրոնքին, որոնք մարդկանց քարոզում են բանական գործունեություն, լիարժեք կյանք, ապագայի կարևորում:

Մարդկանց պարագայում՝ հորթին բնականոն կյանքից շեղող թելի դերը կատարում է նրանց մտքում ամրագրված-դաջված աշխարհի կեղծ պատկերը և, իհարկե, սարսափը, այն սարսափը, որն ուղեկցել ու ուղեկցում է միլիոնավոր մարդկանց իրենց ողջ կյանքի ընթացքում, և նրանք հիմնականում պատրաստ են հրաժարվել կյանքից, բայց ոչ՝ այդ սարսափից:

25.12.2009 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
«Աստվածաշունչ մատյան»	5
«Յին կտակարան». «Աշխարհի և մարդու ստեղծումը»	13
«Ադամ և Եվա»	16
«Նոյը և ջրհեղեղը»	19
«Աբրահամ նահապետ, Իսահակ և Չակոբ»	21
«Նոր կտակարան». «Յիսուս Քրիստոսի ծննդյան ավետումը»	34
«Յիսուս Քրիստոսի փորձությունները»	53
«Յիսուսը օգնում է մարդկանց»	57
«Քրիստոսի վերջին ընթրիքը, խաչելությունը, թաղումն ու հարությունը»	61
Հայոց բուն կրոնը	66
«Քրիստոնեություն՝ միակ ծշմարիտ ուսմունք»	73
«Հայ Արշակունիներն իրենց հայացքն ուղղում են դեպի քրիստոնեությունը»	85
«Հայ եկեղեցու դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում»	127
Ամփոփում	144
Վերջաբանի փոխարեն	148

ՀԱԿՈՒ ԱՐԲԱԿԻ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ

**«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»,
ԹԵ՞
ՀՈՒԴԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿ**

Սրբագրիչ՝ Արմենակ Ղազինյան
Էջադրումը՝ Վահրամ Մանուսաքյանի

Տպաքանակը՝ 500 օրինակ

Տպագրվել է «ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊԸ տպագրատանը